# ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄԻՀՐԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՐԵՒՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼՈՅԹՈՒՄ

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Եղիազար Մելետինսկին միֆազգային բանահիւսութեան մէջ լայն տարածում ունեցող 3 եղբայրների մասին հեքիաթների կրտսեր եղբօր կերպարը քննելիս, ի միջի այլոց նշել է, որ արեւմտեան բանագիտութեան մէջ հնաաստղաբանական գաղափարի ներկայացուցիչները կարծիք են յայտնել, թէ նա մարմնաւորում է փոքրագոյն աստղը, որը խամրեցնում է գիշերային աստղերին՝ իր եղբայրներին կամ քոյրերին[2]: Այս գաղափարի ուսումնասիրութիւններից անկախ, որոնք ցաւօք առհասարակ մեզ անմատչելի են մնացել, Հայկազեան Հայագիտական Հանդէսում հրապարակած մեր մի յօդուածում[3] այն տեսակէտն ենք առաջ քաշել, որ 3 եղբայրների հեքիաթները մեզ են հասցրել ցերեկային եւ գիշերային Արեւի (Լուսնի) եռակի դրսեւորումների (այգաբաց, օրուայ լուսաւոր եւ խաւար մասեր) մասին առասպելոյթը: Երրորդ՝ կրտսեր եղբայրը խորհրդանշում է ամէն օր հանդերձեալ աշխարհից յառնող, մշտապէս մանուկ՝ Արեգակին: Ժողովրդական այդ պատկերացումն անշէջելի վաղեմութիւն ունի եւ Հայոց մէջ յարատեւօրէն արտայայտուած է, օրինակ՝ ԺԲ. դարի բանաստեղծ, կաթողիկոս Ներսէս Շնորհալու ստեղծած մի հանելուկում, ուր Մանուկ Արեւն ամէն օր ծնւում եւ մեռնում է, իսկ թագաւորաց խաւոյ յանձնում է աւելի գեղեցիկ կերպարանքով[4]:

Երեք եղբայրներին նուիրուած հեքիաթ-առասպելների շարքը միանգամայն նոր մեկնաբանութիւնների առիթ է տալիս, երբ խնդիրը քննում ենք աստղային դիցաբանութեան լոյսի տակ, որը հիմք է ծառայել Հին աշխարհի արուեստի, գիտութեան ու ճարտարապետութեան առեղծուածին[5]: Այս տեսանկիւնից պարզ է դառնում, որ աւելի ուշ ժամանակներում 3րդ եղբօր կերպարը վերածուել է տարեգլխային Արեւի՝ մեռնող եւ յառնող աստուածութեան՝ ներկայացնելով հին աստղագիտութեան վրայ հիմնուած օրացուցային գիտելիքները:

Յայտնի է 3 եղբայրների մասին Հայաստանի աշխարհագրական ամենատարբեր շրջաններից գրառուած շուրջ 3 տասնեակի հասնող հեք-

խաթ, որոնցից թուարկենք միայն մի քանիսը. «Հազարան Բլբուլ կամ Ալո-Դինայի Նադրը»[5], «Ճուչ Փարին»[6], «Աննմահական Թռչունը»[7], «Վրեժ-կէ Թռչունը»[8], «Աժդահակը»[9], «Սինան Թագաւորը»[10], «Մադկան Բաղ-ջանը»[11], «Ոսկէ Թռչնածնունդ Նադրը»[12], «Լուսնեան Մթին Աշխարհ-նչնը»[13], «Միրզա Մահմուդ Ու Զամպրը»[14] եւն.։ Հեքիաթները համապա-տասխանում են Աարնէի եւ Թոմփսոնի տիպաբանական ցուցակի 301, 550 եւ 551 տիպերին, որոնք գրեթէ ամբողջ Արեւմտեան Եւրոպայից, Ռուսաստանից, Հայաստանից, Թուրքիայից, Հնդկաստանից, Ինդոնեզ-իայից, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաների որոշ շրջաններից, Աֆրիկայից գրառուած սիւժէների հիման վրայ են կազմուած[15].

Ըստ հայկական հեքիաթների տարածագրման համեմատական նիւթի, դրանց բովանդակային սխեման հետեւեալն է.-

Թագաւորը ծեր է եւ կոյր։ Ունի 3 որդի եւ մի հրաշալի այգի, որտեղ խնձորենի է աճում վրան՝ ոսկէ խնձորներ։ (Որոշ տարբերակներում թագաւորը սկզբնապէս առողջ է եւ 3 որդի է ունենում Աստծոյ ողորմածութեամբ)։ Խնձորները ջահելացնելու եւ առողջութիւնը վերականգնելու զօրութիւն ունեն, սակայն երբ գալիս է դրանց հասունանալու պահը, գիշերն անհետանում են ծառի ճիւղերից։ Թագաւորը որդիներին պատուիրում է պահակ կանգնել եւ բռնել գողին։ Աւագ որդիները գիշերը հսկելիս, քնում են, իսկ կրտսերը յաղթահարում է քնաթաթախութիւնը, որը Դեւ է՝ Վիշապ։ Կրտսեր որդին նետ է արձակում վրան։ Վիրաւոր Վիշապը փախչում, հետամտում է եւ ընկնում խոր հորի մէջ։ Եղբայրները հետապնդում են նրան, սակայն հորի ներսում վառուող կրակին չդիմանալով, չեն կարողանում իջնել մինչեւ յատակը։ Պարանով իջնում է կրտսեր եղբայրը եւ հանդիպում 3 գեղեցկուհի քոյրերի, որոնք առեւանգուել են երեք Վիշապների կողմից։ Սպանում է նրանց եւ կոյսերին հանում Լոյս Աշխարհ։ Երբ ուզում է ինքը դուրս գալ, աւագ եղբայրները նրան դաւաճանաբար թողնում են հորում։

Կրտսեր եղբայրը ստորերկրեայ աշխարհում, մի աղբիւրի մօտ հանդիպում է սեւ, սպիտակ եւ կարմիր խոյերի, որոնք կարող են հերոսին Լոյս Աշխարհ հանել, եթէ նա, ըստ հեքիաթականութեան, նստի նախ սեւի վրայ, իսկ սեւը նրան գցի կարմիրի վրայ, կարմիրն էլ՝ սպիտակի։ Սակայն հերոսը շփոթում եւ սխալից նետւում է սպիտակ խոյի վրայ, այդ պատճառով էլ սեւ խոյը նրան տանում է Մութ Աշխարհ։ Այստեղ հերոսն ընկնում է մի քաղաք, որի աղբիւրի ակը Վիշապն է փակել։ Նա մարդկանց ջուր է բաց թողնում միայն այն ժամանակ, երբ կոյս են գո-

հարկերում իրեն։ Հերթը հասած է լինում Թագավորի (կամ ուժեղի) աղջկանը։ Հերոսը նրա հետ գնում է Վիշապի մօտ եւ սպանում հրեշին։ Թագավորը, ի նշան երախտագիտութեան, կամենում է իշխանութիւնը զիջել նրան։ Հերոսը խնդրում է դրա փոխարէն Լոյս Աշխարհ հանել իրեն։ Թագավորը պատմում է, որ դա իր ուժերից վեր է, եւ նրան Լոյս Աշխարհ կարող է հանել միայն անտառում ապրող Արծիւը՝ եթէ հերոսը սպանի ամէն տարի նրա ձագերին խժռող Վիշապին։ Հերոսը դարանակալում եւ սպանում է Վիշապին, կտոր-կտոր է անում նրան եւ գցում ձագերին՝ կերակուր։ Արծիւը, ի նշան երախտագիտութեան, հերոսին իր թեւերի վրայ հանում է Լոյս Աշխարհ։ Հերոսն այստեղ հիւրընկալւում է մի Պառաւի մօտ։ Գլխին է քաշում նրա մորթած ոչխարի փորի կաշին ու քաղաքացիական քաչալ (կաղալ) ձեւանում։ Այնուհետեւ աշակերտ է մտնում մի ոսկերչի մօտ, իսկ ժամանակ անց, բոլորին բացայայտում իր ով լինելը։ Թագավոր հայրը գտնում է իր կորած որդուն եւ ամուսնացնում Վիշապի գերութիւնից նրա ազատած քոյրերից կրտսերի հետ։ Ապա գահն ու թագավորութիւնը ժառանգում է նրան։

Թուարկուած հեքիաթների մի մասը սիւժետային փոքր-ինչ այլ զարգացում է ներկայացնում.- Օրինակ, երբ Թագավոր հօր աչքերն կուրանում է, եւ աչքերը վերադարձնել միայն կարող հեռաւոր աշխարհից Հազարան բլբուլին, Ծովինար կամ Զմռուխ ղուշին կամ Ղուշ փետուրն բերելն է։ Ղուշը պէտք է երգի՝ որ աչքին կանաչի։ Թագավորն իր 3 որդիներին պատգամում է ուղեւորուել Թռչնի ետեւից։ (Կամ որդիները հօժարակամ են ընկնում հօր աչքերի դեղը - կամ հեքիմ - գտնելու)։ Հանդիպում են եռեակ ճանապարհաբաժանի մօտ կանգնած Հայեւորին, որը երեք եղբայրներին ցոյց է տալիս երկու՝ վերադարձ ունեցող եւ մէկ՝ վերադարձ չունեցող ճանապարհները։ Կրտսեր եղբայրն ընտրում է այն աշխարհը տանող ճանապարհը, որտեղից չեն վերադառնում։ Այստեղ նա կրկնում է նոյն այն սխրանքները, որոնք հեքիաթների նախորդ սիւժետայում են հանդիպում։ Գտնում է հրաշք Ղուշին եւ վերադառնում։ Ճանապարհին աւագ եղբայրները նախանձից կրտսերին ջրհորն են նետում եւ Ղուշն առած, բռնում տան ճանապարհը։ Կրտսեր եղբորը փրկում է մի վաճառական։ Հօր թագաւորութիւնում նա ծպտուած, գտնում է Դերձակի աշակերտ։ Ժամանակ անց բացայայտում է իրեն եւ ներկայանում հայր Թագաւորին։ Ղուշը երգում է, Թագավորի աչքին՝ կանաչում։

Այլ տարբերակում, Ղուշը փերի է։ Հերոսը նրան բերում է հեռաւոր աշխարհից։ Փերին մառը կորում է եւ աւիշը քսում կոյր Թագավորի աչքերին, եւ նրա աչքերը բացւում են։

Իրանական «Սիմորղ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում պահպանուել են կայր Թագաւորի 3 որդիների անունները, որոնցից երկուսն այս կամ այն կերպ առնչւում են Արեւի գաղափարին. Մալէք (հրեշտակ)-Ջամշիդ, Մալէք-Խորշիդ եւ Մալէք-Մոհամմադ[16]. Ջամշիդն իրանական էպոսի ամենահնագոյն շրջանի հերոսն է՝ Տրանսոքսանայի պապը, որ մարդկանց մէջ մշակութային գործունէութիւն էր ծաւալում. Աւեստական Յիման է՝ մարդկութեան նախահայրը՝ հին պարսկական Յիման, որի անունը ստուգաբանւում է, իբրեւ «երկուորեակ». Մայած է համարւում հնդիրանական եւ հնդեւրոպական միասնութեան ժամանակներից եկած երկուորեակների՝ Արեւի զաւակների առասպելոյթից. Նրա հայրն Արեւ Վիւահւանտն է, որ համապատասխանում է վեդայական Վիւասւանտին. Տարբեր առասպելներում Յիմային սղոցով սպանում է չար ոգուց դրդուած հարազատ եղբայրը. Նա աւանդաբար կապուած է համարւում կրակի, հետեւաբար՝ նաեւ Արեւի հետ[17].

Երկրորդ եղբայր Խորշիդն արդէն ուղղակիօրէն նախազրադաշտական Իրանի Hvare Արեւ աստուածն է, որը հակամարտում է Միհր-Արեւի դէմ, ապա դառնում նրա դաշնակիցը. Այս Խորշիդի մէջ է բանագէտ Կարապետ Մելիք-Օհանջանեանը տեսել Սասնայ Մհեր էպոսի Խոր Մանուկի կերպարը[18]. Ինչպէս Է. դարի մատենագիր, աստղագէտ եւ տոմարագէտ Անանիա Շիրակացու հաղորդած տուեալներից է երեւում, պարսիկները մինչեւ Է. դարը չէին դադարել Արեգակին «Խորշէտ» կոչել[19].

Ինչ վերաբերում է Մալէք-Մոհամմադին, ապա նրա անունը հեքիաթում իր վրայ կրում է ուշ շրջանի մահմեդական Իրանի կրօնական գաղափարախօսութեան կնիքը. Հին պարսկական դիցաբանական ըմբռնումներում նրա նախակերպարը նոյնքան առանձնայատուկ նշանակութիւն պէտք է ունեցած լինէր, որքան Մոհամմէդ մարգարէն է մահմեդական կրօնի համար. Հեքիաթային Մալէք-Մոհամմադը, որի անունը երեւան է գալիս իրանական այլ հեքիաթներում եւս («Մարգարտի Տերեւը», «Խրդար Մալէք-Մոհամմադը»[20] եւն.), կայր Թագաւորի այն փառաւորած որդին է, որը նոյն արկածներին է հանդիպում, ինչ հայկական հեքիաթների 3րդ հերոսը՝ կուրացած հօր աչքերի բուժման դեղերը ճանապարհին. Հայկական հեքիաթներում էլ անհնար է ընկալել նրա արեւային բնականիշները. «Հուշ Փարիի» հեքիաթում նա գետնին ընկած մի փետուր է տեսնում, որն այնպէս է լոյս տալիս, կարծես՝ «մի արեւ երկնքումն ա, մի արեւ էլ գետնին ա». Վերցնում, դնում է փախախոռնայի մէջ ու ինքն էլ Արեւի նման լոյս տալիս. Երբ հասնում է Թագաւորի քաղաքին, լոյս են

հացնում, թէ՝ «Մի՞ տղայ ա գալի, մի՞ արեւ երկնքումն ա, մին էլ դրա փախփախանայքն ա»։ Նրան տանում են պալատ, եւ Թագաւորը հարցնում է. «Էս տղայ, ինչ տղայ ես։ Էս ինչ արեւ ա փախփախանայքդ»։

Ուշագրաւ է, որ մանիքեական ուսմունքում, որը մեծ մասամբ քրիստոնէութեան եւ զրադաշտականութեան խառնուրդ է համարւում, յիշատակւում է Երրորդ Առաքեալը, որին վերապահւում է աստղերին հասցնել լոյսի կորուսեալ նիւթի փրկութիւնը։ Նա համարւում է Արեւի աստուած, ում պահլաւերէնում անուանում են Միհր-Եազդ, իսկ սոգդերէնում Միշէ (Միթրա)։ Լոյսը, որի մասնատուածներից մէկն Օրմիզդն է (Որմիզդը)՝ առաջին մարդը, պարտւել եւ կորել է Մութ Աշխարհում։ Այդ աշխարհի դեւերի դէմ է անմիջապէս կռւում նետւում Կենդանի Ոգին՝ Միհր-Եազդը։ Դեւերը պարտւում են, իսկ նրանց մարմիններից ստացւում է աշխարհն ու Տիեզերքը[21]։

Երեք եղբայրների առասպելի մասին այլ յիշատակութիւններ կան նաեւ հնդարիական Մահաբհարատա էպոսում, ուր խօսւում է 3րդ եղբայր՝ Տրիտայի մասին, որին եղբայրները դաւաճանաբար ջրհորն են գցել[22]։ Յատուկ ուշադրութեան են արժանի իրանական ժողովուրդներից սկիւթների ծագման մասին Հերոդոտոսից աւանդուած երկու առասպելները, որոնցից մէկը պատմել են իրենք՝ սկիւթները, միւսը՝ յոյները։ Սկիւթական առասպելի բովանդակութիւնը հետեւեալն է.- Սկիւթների երկրի առաջին բնակիչը Տարգիտաոսն էր, որն ունէր Լիպոքսայիս, Արպոքսայիս եւ Կոլաքսայիս անուններով որդիներ։ Նրանց իշխանութեան ժամանակ երկնքից չորս առարկաներ վայր ընկան՝ լուծ, արօր, սակուր (երկսայրի տապար) եւ գաւաթ։ Աւագ եղբայրները փորձեցին վերցնել, բայց դրանք սկսեցին վառուել։ Յաջողուեց վերցնել միայն կրտսեր որդուն՝ Կոլաքսայիսին, այդ պատճառով էլ աւագ եղբայրները համաձայնեցին, որ թագաւորական իշխանութիւնը պատկանի նրան։ Սկիւթ ժողովուրդն առաջացել է Տարգիտաոսի այս երեք որդիներից։ Նրանցից յետոյ սկիւթական բոլոր թագաւորները երկնքից ընկած առարկաները պահպանում են որպէս սրբութիւն։ Նրանք հաւատում են, որ տօնախմբութեան ժամանակ ով այդ առարկաները հետը ունենալով քնի բաց երկնքի տակ՝ տարին չի բոլորի[23]։

Այս սիւժէում թւում է, թէ երկնքից ընկած 4 վառւող առարկաները երկնային յատկանիշներ պէտք է խորհրդանշած լինէին։ Միւս կողմից էլ յիշեցնում են հայկական հեքիաթների աւանդական վերջաբանները, երբ ասւում է, թէ երկնքից 3 խնձոր ընկաւ, մէկը հեքիաթը հաւաքողին, մէկը՝

պատմողին, մինչև էլ՝ լռողին։ Երեք եղբայրների հեքիաթների ծանոթ մոտիվներն են հիշեցնում հերոսի՝ գլուխը չքնելը և առարկաները (կախ-ձողերը) պահպանելը, եղբայրների առջև եղած դժուար լուծելի խնդրի (առեղծվածը դեպքում փառաւոր առարկաները վերցնելու) իրագործումը մինչև է, Հերոդոտոսը չի ասում, թե եղբայրներից հաջորդն է յանձնարարել լուծել խնդիրը, սակայն յանձնարարութեան մասին հաղորդվում է առասպելի յունական տարբերակում։ Այստեղ Տարգիտաոսին փոխարինում է գալիս Հերակլեսը, որը յանձնարարված Սկյութիա կոչուած մի անբնակ երկրում ճամփորդելիս, ցրտի պատճառով իր վրայ է քաշում առյուծի մորթին և քնում է։ Այդ ժամանակ նրա կառքի ձիերն անհետանում են։ Հերակլեսը դրանք յայտնաբերում է քարայրում բնակվող մի կինօձ մոտ, որի հետ կենակցում է և նրանից ստանում ձիերը։ Կինը յայտնում է, թե Հերակլեսից 3 որդի է ունենալու, իսկ վերջինս պատգամում է նրան, որ որդիներին յանձնարարի ձգել իր աղեղն ու կապել գոտին այնպես, ինչպես ինքն է անում։ Նրանցից ով կարողանայ կատարել յանձնարարութիւնը, նա էլ կը դառնայ այդ երկրի բնակիչը ժամանակ անց, Հերակլեսի որդիներից միայն կրտսերին՝ Սկյութէսին է յաջողում կատարել հօր յանձնարարութիւնը։ Նրանից են ծագում Սկյութիայի թագաւորները[34]։

Սկյութների ծագման մասին երկու առասպելում էլ, ինչպես 3 եղբայրներին նուիրուած հեքիաթներում, դժուար լուծելի խնդրի իրագործման գրաւականը թագաւոր դառնալն է։ Թէև առասպելում յիշատակութիւն չկայ աւագ եղբայրների՝ կրտսերի նկատմամբ ունեցած թշնամանքի վերաբերեալ, այնուամենայնիւ, այդ մոտիվը երևան է գալիս յաջորդ պատմութիւնից։ Սկյութական պեղածոյ իրերում ոչ մէկ անգամ հանդիպում է 2 մարտիկի՝ նրանց դէմ մղուող կռուի տեսարանը, որը նրա մարտիկը պարտուել է, ինչպէս իրանական Տրաետաոնա հերոսի 3 զաւակներից աւագներն են սպանում իրենց կրտսեր եղբօրը։ Իսկ սկյութական նրա եղբօր՝ աւագ եղբայրներից սպանուելու պատմութիւնն ուղղակիօրէն վկայուած է հռոմէացի հեղինակ Վալերիոս Ֆլակկոսի Արգոնաւտիկա պոէմից[35]։

***

Բանագիտութեան մէջ ընդունուած է, որ Արևի եռակի դրսևորումները բնորոշ են Միհրի արևամտան պաշտամունքին։ Միհրը բարձրաքանդակներում և որմնանկարներում երևում է գալիս երկու ջահակիր այլ Միհրերի՝ Cautes և Cautopates մանուկների մէջտեղում։ Նրանցից մէկն՝ իր վեր պարզած ջահով խորհրդանշում է արևածագը, միւսը՝

վայր ընկած ձիով՝ արևամուտը, կամ մեկը՝ գարնանամուտը, մյուսը՝ ձմեռնամուտը[36]։ Հռոմեական հարթաքանդակներում Միհրն ուղղակիորեն կոչվում է որպես Արեգակ[37]։

Երեք Միհրերի մասին պատկերացումը, թերևս, դրսևորված է նաև մինչքրիստոնեական ծեսերում։ Միհր-Արևին երկրպագողները նրան աղոթում էին օրական երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան։ Բանասեր Երվանդ Տեր-Մինասյանն այս առանձնահատկությունը զարմանալիորեն համեմատում է քրիստոնեաների՝ առավոտյան, կեսօրվա և երեկոյան ժամերգությունների հետ[38]։ Միհրին պաշտամունքի մասունքները այս ձևը հանդիպում է ԺԴ.-ԺԵ. դարերի մատենագիր Մխիթար Այրիվանեցու մեջ հատված՝ միջնադարյան հայ արևապաշտների մասին այն հաղորդումը, թե նրանք Արեգակին երկրպագում էին համապատասխանաբար այն կողմում, ուր տեղի էր ունենում նրա շարժումը[39]։ Ուստի, քանի այդ կողմերը էլ, այսինքն՝ քանի Արևի անցած դիրքի, երկնային լուսատուն պետք է որ առանձին աստվածություն ընկալված լիներ։

«Երեքը թիվը, առհասարակ, խնամքով գործածված էր առնում նաև 3 եղբայրներին նույնացված հեքիաթաշարում՝ թագավորի 3 որդի, հսկան հավասարաման, 3 քույր, նրանց առևանգած 3 վիշապ ևն.։ Հայկական «Մարգկան Բաղդանդ» հեքիաթում քույրերն այդպես են նկարագրվում.-

Կարմիր Աշխարհի տեր Վիշապը մի դուռ ու լուսամուտ չունեցող համարաթռում գերած է պահում հրաշագեղ էլ իսկ վառ (արեգակից առավել վառ) աղջկայ՝ սպաս քույրը։ Սև Աշխարհի տեր Վիշապի համարաթռում հսկում մեն պղպջացած (շողշողած) լուսնանկար միջնեկ քույրն է։ Սպիտակ Աշխարհի տեր Վիշապը գերել է ամեն շատ դաշտանց (սիրուն) աղջիկներ, արևին լուսան էլ իսկ լուս տվողն կրտսեր քույրը «Թագավորին կուծի (վարդ) տղայան պահում է վիշապներին և պաշտում աղջիկներին։

Մեզ տեսանելի աստղային երկնքում չկայ մի այնպիսի լուսատու, որ համեմատելի լինի Արեգակի հետ։ Միակը Լուսինն է, որի հետ էլ զուգադրվում են քույրերը հայկական հեքիաթներում։ Նրանց լուսնային բնութագիր ունեն նաև իրանական «Միհրոյ Հաւքի Օգնութիւնը» հեքիաթում. առաջին քույրը «Քահել Լուսին» էր, երկրորդը՝ «Լիալուսին», երրորդը՝ «իր գեղեցկությամբ խամրեցնում է մյուս երկու գեղեցկուհիներին»։

Լուսնի նուաճի հերոսուհիները ծանոթ են նաեւ յունական դիցաբանութիւնից. Զեւսն իր սիրուհի Իոյին կնոջ՝ Հերայի զասումից փրկելու համար դարձնում է սպիտակ կով եւ յանձնում հարիւրաչքանի Արգոսի՝ աստղազարդ երկնքի պահպանութեանը։ Սակայն Հերայի ուղարկած բոռն Իոյին սկսում է հալածել աշխարհով մէկ։ Այդ հալածանքների ընթացքում Իոն սպիտակ կովից փոխւում է նախ մանուշակագոյն-կարմիր կովի, յետոյ՝ սեւի։ Պատմւում է, որ Արգոսի արքայ Ինաքոս ժամանակին հիմնադրել էր Իոպոլիս քաղաքը եւ իր դստեր անունն էլ դրել Իո՝ ի պատիւ Իօ-Լուսնի, որին պաշտում էին Արգոսում։ Ռ. Գրէյւսն Իօ-կովի երեք գոյները համարել է Լուսնի երեք հիմնական փուլերի գունաւորումները՝ աճող եւ նուազող երկու կիսալուսնի եւ Լիալուսնի տեսքով[30]։

Նոյն այդ երեք գոյները հանդիպում են նաեւ հայկական «Մազկած Թագչան» հեքիաթում, սակայն դրանք վերագրւած են վիշապների երեք աշխարհներին։ «Անմահական Խնձորը» հեքիաթում առաջին Վիշապն ունի 7 գլուխ, երկրորդը՝ 12, իսկ երրորդը՝ 24։ Գլուխների ընդհանուր քանակը 43 է։ Այս թիւը չի խախտւում նաեւ «Հրեղէն Խնձորը» հեքիաթում, որտեղ թէեւ առաջինը 7 գլուխ ունի, 2րդը՝ 40, սակայն վերջին 3րդին, այնուամենայնիւ 43 գլուխ է վերագրւում։ Ուրեմն, այդ 3 Վիշապն ընդամէնը մէկ Վիշապ են, եւ քանի որ Լուսինը հեքիաթում 3 գունաւորմամբ է երեւան գալիս, ուստի, Վիշապն էլ օրինաչափօրէն եռակւում է։

Հայկական հեքիաթներում, որպէս կանոն, քաջերին առեւանգած վիշապները գլուխները դրել են նրանց ծնկներին եւ քնել, իսկ դա հին աստղագիտական ըմբռնումներով նշանակում է, որ Վիշապի գլուխն ու Լուսինը մօտեցել են իրար, եւ Լուսնի խաւարում կարող է տեղի ունենալ կամ խաւարումն արդէն կատարւած փաստ է եւ, ըստ հեքիաթի սիւժէի, 3րդ հերոս Արեւը սպանում է Վիշապին ու ազատում աղջիկներին։ Իրականում խաւարումները տեղի են ունենում Լուսնի ուղեծրի եւ Խաւարածրի (արեւի երեւակայական ուղու) հատման կէտերում, որոնց ժամանակակից աստղագիտութիւնը «լուսնահանգոյցներ» է անւանում։ Մինչդեռ հնում կարծում էին, թէ «լուսնահանգոյցներում» Վիշապն է բնակւում, որը կուլ է տալիս Լուսնին կամ Արեւին[31]։

Հայերը Լուսնի «հանգոյցներն» անւանում էին «Վիշապի գլուխ» կամ «Վիշապի տուտ»։ Մաշտոցի անւան Մատենադարանի թիւ 2000 ձեռագրում, որն այդպիսի «հանգոյցների» որոշման աղիւսակ է («զրոյ-բակ»), ժամանակի սկսւածքը պարունակ 2 վիճակի Վիշապ է պատ-

կերուած։ Միջաւառակի ներսում անզէն աչքով տեսանելի 7 մոլորակները են դասաւորուած, այդ թւում Արեւն ու Լուսինը։ Վիշապներն իրենց հերթին շրջապատել են կենդանակերպերի գոտու 12 աստեղատները՝ հեքիաթի նոյն այն համաստեղութիւնները, որոնցում վիշապները ժամանակ առ ժամանակ կարող են բանտուած պահել 3 քոյրերին (Լուսնին)։ Վիշապներից մէկի գլուխն ուղիղ Լուսնի մօտ է գտնւում[22]։

Հիմքեր կան կարծելու, որ Վիշապի՝ աղջիկ առեւանգելու հեքիաթային-առասպելական մասերը նաեւ Լուսնի փուլերի հետ կապուած օրացուցային հասկացութիւններ է ներառել։ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերից երեւում է, որ հայոց մէջ ընդունուած է եղել լուսնային, այսպէս կոչուած՝ «սինոդական» մէկ ամիսը՝ Նորա(Լիա)լուսնից մինչեւ Նորա(Լիա)լուսին ընկած ժամանակահատուածը հաշուել 29,5 օրով (օրացուցայինը՝ 30)։ Այս թիւը 4 անգամ կարելի է բաժանել 7 մասի, ինչից էլ առաջացել է շաբաթուայ (7 օր) գաղափարը։ Մնացած 1,5 օրուայ մնացորդը համարուել է այն ժամանակահատուածը, երբ Լուսինն անհետանում է երկնակամարից։ Այսինքն՝ դա տեղի է ունենում սինոդական ամսուայ 29րդ եւ օրացուցային ամսուայ 30րդ օրուայ կէսի ընթացքում[23]։

Մատենադարանի թիւ 7098 ձեռագրում տրուած են Լուսնի աճման եւ նուազման օրերին համապատասխանող 8 փուլերի անունները, որոնք գործածական են եղել Հին եւ Միջնադարեան Հայաստանում[24]։ Դրանցից 6-7 եւ 11-12 օրական լուսինները բաժին են ընկնում աճող կիսալուսնին («Երկակտուր սուսերին», երբ Լուսինը 2 կտոր է լինում) եւ «Լիալուսին» փուլերին։ 14-15 օրական Լուսնի փուլը կոչւում է «Բոլորանդամալուսին», ինչը ժամանակակից ըմբռնումներով, «Լիալուսին» փուլն է։ Այնինչ, հնում ենթադրել են, թէ «Լիալուսնի» դէպքում Լուսինը 11-12 օրական է[25]։

Եթէ վերլուծենք 7 եւ 12 գլխանի վիշապներին եւ նրանց գլխատող 3րդ հերոսի հեքիաթային միջադէպը, ապա կը տեսնենք, որ այդ վիշապների առեւանգած աղջիկներից մէկը համապատասխանում է 7 օրական կիսալուսնին, միւսը՝ 12 օրական Լիալուսնին, ինչպիսին եւ նրանք սովորաբար նկարագրւում են հեքիաթներում։ Սակայն այս դէպքում բաց է մնում 24 գլխանի Վիշապի եւ 3րդ առեւանգուած աղջկայ խնդիրը, քանի որ ձեռագրում Լուսնի փուլերը մատնանշող ցուցակը կազմուած է սոսկ սինոդական կէս ամսուայ համար, եւ մեզ յայտնի չէ, թէ ինչ անուն է կրել Լուսնի 24-օրական փուլը։ Դրա փոխարէն, գիտենք, որ հա-

յոց օրանուններում (որոնք զուտ լուսնային երևույթ են, քանի որ ամիս են ձևավորում) 24րդ օրը «Լուսնակն է կոչվում[36]. Եթե շրջանցենք «Բովանդակայնության» փուլը (որտեղից ձևավորվում, բառ չափման, Լուսնի եղջիւրները՝ մաշվելն է սկսում) և 24 թիվը տանելու համար 12 օրական «Լիալուսնին» փուլին ավելացնենք ևս 12 օր, ապա Լուսնի փուլերի սիմետրիկ դասավորությունը կը վերադառնանք սկզբնական առաջին՝ «Թաղեկցությունէ» կոչված փուլին, երբ Լուսինն ուղեկցում է Արեգակին, այսինքն՝ երկնակամար է դուրս գալիս նրա հետ միասին։ Հեքիաթում այս մասին ասում է, որ 3րդ հերոսը (Արեգը) 3րդ՝ 24 գլխանի Վիշապին գլխատելուց հետո 3 քույրերին էլ (Լուսնին) հետ Աշխարհ հանեց։ Այդ օրանից սկսած, Լուսինը ևս 4 օր պէտք է երևար Լույս Աշխարհում և 28րդ օրանից սկսած, մոտ 1,5 օր կրկին լրիվին անհետանար տեսադաշտից։ Հասկանալի, այս երևույթն էլ իր հերթին, հնում ընկալուել է որպէս Լուսնի առևանգում Վիշապից։

Երեք եղբայրներին նվիրված վիպական «Ծուռն Զարիթ» Հեքիաթում Թագավոր հայրն իր 3 աղջիկներին, որոնք Արևի երես չէին տեսել, ասում է. «Գնացէք, Արևի երես տեսէք»։ Երբ աղջիկները կատարում են հօր կամքը, նրանց փախցնում է Վիշապը (այսինքն՝ Լուսինը ծագում է որը ցերեկով, այնուհետև անհետանում երկնքից)։ Երեք եղբայրները գտնում են 3 քույրերին փեսայելու[37]. Հայկական «Հեքիաթ Ալղըզ Բոյլիկ Բաշուն Եւ Ջին Մաշինու Թագաւորի Աղջկան Հեքիաթում[38] Թագաւորի 3րդ որդին ազատում է Ջին Մաշինի Թագաւորի աղջկան, որին Վիշապը փախցրել էր, երբ նա զբոսանքի էր դուրս եկել։ Իսկ Մատենադարանի Թիւ 3965 ձեռագրում «Ջին Մաշինն է կոչվում այն վայրը, որտեղ Արեգակն է ծագում[39].

«Լուսին» բառն, առհասարակ, հնդեվրոպական բազմաթիւ լեզուներում համարժէք է ժամանակի միաւորներից ամսին, որը բաղկացած է օրերից (ժամերից) և շաբաթներից։ Ամիսներն իրենց հերթին տարի են ձեւաւորում։ Հնդեվրոպական նախաձևն է *mēns-, որի ժառանգներից են համարում սանսկրիտ լեզուի mās (Լուսին, ամիս), պարսկերէն māh, ռուսերէն mesjac' և այլն։ Արմատն է՝ mē- «չափել»։ Հնդեվրոպական նախալեզուի ամիսները սկզբում լուսնային են եղել, այդ պատճառով էլ համահունչ են լինում «Լուսին» և «ամիս» բառերը։ Ցանոյ Լուսնի համար առանձին բառ է հնարուել։ Հնդեվրոպական նախալեզուի 'mēn- արմատից հայերէնում մնացել է միայն «ամիս» բառը՝ ա նախաձայնի յաւելմամբ[40].

Վիշապը փախցրել է Լուսինը։ Դա նշանակում է, որ նա անմիջականօրէն ստանձնել է ժամանակային միաւորների եւ մարդկանց զրկել լոյսի ու հաշուարկ կատարելու հնարաւորութիւնից։ Նրա 7, 12 եւ 24 գլուխները պէտք է խորհրդանշած լինեն նաեւ 7 օրերի (շաբաթ), 12 ամիսների (տարի) եւ 24 ժամերի (օր) տեւականութիւնը։

Վիշապը գողացել է նաեւ Թագաւորի հրաշք այգու ծառի ոսկէ խնձորները։ Իսկ ծառը հայկական ժողովրդական հանելուկներում յաճախ տարուայ խորհրդանիշն է, որն ունի 12 ճիւղ (ամիս), ամէն ճիւղին՝ 30 տերեւ (օր)՝ մէկը՝ սեւ, միւսը՝ սպիտակ յաջորդականութեամբ (գիշեր, ցերեկ)։ Յատկանշական է, որ Բորչալուից եւ Սալմաստից յայտնի հանելուկում 30 օրերը համեմատւում են խնձորների հետ. «Մի ծառ կայ՝ 12 ճիւղ ունի, ամէն ճիւղին էլ՝ 30 խնձոր, ամէն խնձորի կէսը սեւ ա, կէսը՝ սպիտակ»[41]։ Ուրեմն, խնձորները ծառի վրայ՝ նշանակել են կարգաւորուած օրացոյց եւ կարգաւորուած կեանք Տիեզերքում, որին սպառնում է Վիշապը՝ գողանալու պտուղները եւ ձգտելու ամէն ինչ վերածել մահուան ու քաոսի։ Ուրեմն, այդ ծառը կենաց ծառն է, որի տէր Թագաւորը նոյնպէս պէտք է կապ ունենայ ժամանակի հետ[42]։

Հին աշխարհի աստղաբաշխութիւնը ժամանակի աստուած էր համարւում Սատուրն մոլորակին, որին յոյները անուանում էին Քրոնոս, պարթեւները՝ Կայմանու, իրանցիները՝ Քայւան (Կայմանու անունից) կամ Զրուան։ Վերջինս յայտնի էր նաեւ Տիւկ կամ Բախտ՝ ճակատագրի իմաստ ունեցող անուններով, ինչը համապատասխանում է Սատուրնի հին եգիպտական հնմենախոսի (վերջի, փոխարինուցման, այսինքն՝ ճակատագրի աստծոյ) տառը անունը[43]։ Զրուանին Բախտ(կ)ա անուանում է յիշում նաեւ Ե. դարի մատենագիր Եզնիկ Կողբացին. «Զրուան ումն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք»[44]։ Փահլաւական աղբիւրներում այդ աստծոյ մասին ասւում է. «Այս աշխարհում տեղի ունեցող ամէն ինչ կատարւում է բախտի, ժամանակի եւ ինքն իրեն գոյացնող Զրուանի՝ բացարձակ եւ ճշմարտագոյն տիրոջ անխախտ կամքի շնորհիւ, քանզի ամէնքի հետ հարկ եղած ժամանակ կատարւում է այն, ինչ անխուսափելիօրէն պէտք է կատարուի»[45]։ Մանիքէականները եւս իրենց Վեհափառ Հօրը՝ Լոյս Աշխարհի Թագաւորին Զարուա էին անուանում[46]։

Իրանցիները Զրուանին, յոյների Քրոնոսի նման, ծերացած աստուած էին պատկերացնում[47], ինչպիսին հայ առասպելաբանութեան մէջ («Պոտիկ Միրզան եւ Դեւ Գորգոլանը» հեքիաթում) Ժուկ-Ժամանակն է

այնուր ծերունի, որ նստած է բռնած կատարքին եւ հերթով կծկում է սեւ ու սպիտակ թելերի կծիկները՝ գիշերն ու ցերեկը[18]: Այդ կծիկները, ժամանակների արդարացի հաշուառմամբ, արտադրությունն են Սանահինից յայտնաբերուած բրոնզէ դարի գօտի-օրացոյցի վրայ՝ կծիկ-պարոյրների տեսքով: Դրանց թիւը 236 է՝ 118 կէսր հետ միասին: Թուերի գումարը կազմում է 354, որը լուսնային տարուայ պարունակած օրերի քանակն է (11 օրով պակաս արեւադարձային տարուց)[19]:

Ուրեմն, այս ժուռ-ժամանակ առասպելը ոչ միայն Տիեզերքի երկու հակադրեալ երեւոյթների՝ լոյսի եւ խաւարի յաջորդականութեան, այլեւ օրացոյցի կարգը սահմանողն ու պահպանողն է: Այդ նրա այգու կենաց ծառի օր-խնձորներն է պաշտպանում Վիշապը՝ ծածկելով յաճախ օրացոյցը եւ խաթարելով կեանքի ընթացքը: Նրանից է կախուած օրացոյցի բախտն ու ճակատագիրը, այդ պատճառով էլ որդիներին պատգամում է պատուհասել Վիշապին եւ փրկել Ծառը: Հեքիաթներում նա ոչ միայն ծեր թագաւոր է, այլեւ՝ կայր: Եւ սա էլ հաստատ է ժողովրդական ժառանգութեանը, քանի որ ժողովուրդը բախտն ու ճակատագիրը միշտ էլ կայր է պատկերացնում:

Հեքիաթում Գասրիկ Միրզան, երբ տեսնում է, որ ժուռ-ժամանակի սեւ թելի կծիկն արդէն կծկուելու, վերջանալու վրայ է (այսինքն՝ շուտով ցերեկն է յաջորդելու), խլում է ծերից եւ գլորում սարի տակ: «Թէ նոր կծկէ,- ասում է,- թող գիշերն երկննայ, ես շատ բան ունեմ»[20]: Միրզայի գործերը գիշերն են տեղի ունենում, ինչպէս 3 եղբայրների հեքիաթներում 3րդ եղբօր արկածներն են Մութ Աշխարհում կատարւում: Այս դրուագն աւանդուած է նաեւ «Մինան Թագաւորը» հեքիաթից, ուր Գասրիկ Միրզան ոչ պատահականօրէն, Թագաւորի կրտսեր (3րդ) որդին է:

«Միրզան», լռա չուլթեան, Միհր-Արեւի յետագայում ծանծկագրուած անունն է, որ երեւան է գալիս հայկական «Միրզա Մահմուդ Եւ Զամարոն», դրան յաջող «Միրզա Մահմուդ» վերնագրերով երկու այլ հեքիաթում եւս[21], ինչպէս նաեւ իրանական «Միրզա Մասուտ Խումար Եւ Բիբի Մեհրնեգար» (Թրգմ.՝ Դրախտի Հարսան եւ Միհրի պատկերով Օրիորդ) հեքիաթում[22], ուր Միրզան ցերեկուայ Արեւն է, իսկ Բիբի Մեհրնեգարը՝ գիշերուայ (Լուսինը):

Մշակոյից են սկսւում եւ առասպելական ինչ վայրում են տեղի ունենում 3րդ հերոսի արկածները: Հայկական «Մազկան Թաղչան» հեքիաթում նա «գաւ (սակի) թուլցուլին» խռեւից ուղեւորւում է այն

ճամփով, որտեղից անցնողը ետ չի դառնում, այսինքն՝ տանում է Հանդերձյալ աշխարհ, ինչպես շումերներն էին իրենց «Կուրը» Հանդերձյալ աշխարհն անուանում «Էրկիր», որտեղից վերադարձ չկար[53]։ Այդ աշխարհը տանող ուղին ցույց տալով մի ծերունի է, որ նստած է նաւակ համեմատաբար մօտ եւ Թագաւորի 3 որդիներին բացատրում է, որ առաջին եւ Ջրի ճանապարհները բարի են, իսկ «Երկրինը» չատ չար ա։ Այդ ծերունու նախակերպարն ամենայն հաւանականութեամբ, բանական Հերմեսն է՝ (Մերկուրի մոլորակը)[54], որ Յունաստանում աշխարհի բոլոր ճանապարհները ճամփորդներին ցույց տալու համբաւ ունէր եւ Հադեսի ստորհանդակը լինելով, մեռածների հոգիներն ուղեկցում էր հանդերձյալ աշխարհ[55]։ Հերմեսի մոլորակի աստուածութիւնը Բաբելոնում ծերունի Նաբուն էր[56], որը իմաստութեան աստուած լինելով, դպրութեան, արուեստի, գրագիրների հովանաւոր էր եւ գրում էր մարդկանց ճակատագրերը[57]։ Այս տեսակէտից նա նոյնանում է Հայոց Տիրին՝ Որմիզդ-Արամազդի գրչին, քրմական գիտութեան Դպիրին, Երազացույցին, Երազահանին[58] եւ Հոգեառ հրեշտակ Գրողին, որ մարդկանց ճակատագրերն էր գրում ու մեռածների հոգիներն ուղարկում Հանդերձյալ աշխարհ։ Տիրի «Երազացույց», «Երազահան» մակդիրներն էլ ճակատագրի գաղափարն են յուշում։ Նա կեանքի եւ մահուան թագաւորութիւնների սահմանագծին կանգնած միջնորդ է աստուածների եւ մարդկանց միջեւ[59]։ Ոչ պատահականօրէն, խաղաքարերի մէջ էլ Մերկուրի մոլորակը Տիր էր կոչւում[60]։

«Անմահական ջրերը» հեքիաթում կրտսեր եղբայրը հօրն ինելով, հասնում է «Անտակէզին», որն, ինչպէս նկատուած է, ստորերկրեայ աշխարհի ամենախոր անդն է, որը կուտակուած է Սեւ ջուրը։ Հայոց մէջ յայտնի է նաեւ «Անատակ», «Յանտատակ», «Սեւ Յանտատակ», «Անդատակ», «Յանդունդք», «Անտակ Ծով» անուններով։ Այն աշխարհի հատման կառուցուածքում ներկայացուել է որպէս Տիեզերքի նախնական քաոսային ջուրը, որի վրայ է գտնւում վերգետնեայ կարգաւորուած աշխարհը՝ Կոսմոսը[61]։ Այս իմաստով, պատահական չէ, որ Ջրի Հերոսն «Անտակէզին» հասնելով, անմիջապէս կռւի է բռնւում դեւերի զօրքին ջուր տարիքը մարմնաւորող Վիշապի հետ։

«Սիմոյ Հացի Օգնութիւնը» հեքիաթում Ջրի Հերոսն իր կուրացած Թագաւոր հօր աչքու նանենու պտուղները գողացող դեւին հետապնդե-

յիս, խմնում է Ջրհոսը, որը հերթ յարկ գետնի տակ է գտնվում։ Առասպելագրերին այն է, որ երբ Սիմորգի թևերի վրայ Լոյս Աշխարհ է երնում, հաւքը նրան պատասխանում է նայել Ներքևն ու տեսնել, թէ Երկիրն ինչ չափի է. եթէ նման է թէչի սկուտեղի, ուրեմն եօթ յարկ երկինք են բարձրացել, և փայլէջը կատարելու ժամանակն է։ Այս զրուցից պարզ երևում է, որ Ջրհոսի (Հարի) յաստղը և Տիեզերքի առասպելաբանական միևնոյն ապրանութեան մէջ են պատկերացուել։ Պատկերացրել են, որ 7 յարկ գետնի տակ խինելով, կարելի է հասնել Տիեզերքին։ Ուրեմն, Ջրհոսը ստորերկրեայքի միջով հասնում է Տիեզերքի ինչ-որ կէտի, որտեղից սկսում է հանդերձեալ աշխարհը։ Պարզ է, որ այստեղ գործ ունենք Արևի մահուան մասին հին առասպելական ժամանակութեան հետ։

Արևի մահը կարող էր ընկալուած լինել կա՛մ աշնանային օրահաւասարի օրը (Սեպտեմբերի 23ին), երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են, այնուհետև ցերեկը սկսում է կարճանալ, կա՛մ ամառային արևադարձին, երբ գրանցւում է ամենաերկար ցերեկը, իսկ այնուհետև գիշերն է սկսում երկարել՝ ի հաշիւ լոյս օրուայ։ Եւ ընդհակառակը. Արևի ծնունդն օրը պէտք է դիտուած լինէր կա՛մ գարնանային օրահաւասարին (Մարտի 21ին), երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են, այնուհետև ցերեկը սկսում է երկարել, իսկ գիշերը՝ կարճանալ, կա՛մ ձմեռային արևադարձին, երբ գրանցւում է ամենակարճ ցերեկը, այնուհետև սկսում է երկարել՝ ի հաշիւ գիշերուայ։ Միջնադարում էլ, Մխիթար Ապարանեցու հաղորդմամբ, հայ արևապաշտները տարեկան երկու անգամ հաւաքուել են մի յոյժ խաւար գուբի մէջ[52], ըստ երևոյթին, պաշտամունք մատուցելու համար, որը կարող էր տեղի ունեցած լինել կա՛մ ամառային և ձմեռային արևադարձերի, կա՛մ աշնանային և գարնանային օրահաւասարների օրերին։

Հայոց մէջ, Անանիա Շիրակացու և ԺԲ. դարի տոմարագէտ Յովհաննէս Սարկաւագից հաղորդուած տուեալներով, ամառային արևադարձի կէտը դրուել է Յունիսի 19ին (երբ Արևը [illegible] «Խեցգետին» համաստեղութիւնում էր), իսկ ձմեռային արևադարձինը՝ Դեկտեմբերի 19ին (երբ Արևն «Այծեղջիւրում» էր)։ Հաշուարկները կատարուել են Հայկական լեռնաշխարհի լայնութեան համար, քանի որ աշխարհագրական տարբեր լայնութիւններում այդ կէտերը տարբեր օրերի են համընկնում[53]։ «Խեցգետնում» Արևը «հեռանում էր մեզանից», իսկ «Այծեղջիւրում» «վերադառնում»։

Յունաստանի տարբեր տարածքներում Հերակլեսի ծնունդը համարել են կամ կենդանակերպանի 10րդ համաստեղութեան «Այծեղջիւրի» մէջ («Խոյից սկսած»), կամ «Խոյում», երբ Արևը հասնում է 12րդ համաստեղութիւնից՝ «Ձկներից»[94]: Սրանից հետևում է, որ Հերակլեսի կեանքն ու 12 սխրանքներն էլ դիտուել են որպէս Արևի բոլորապտոյտ, որն անցնում է Խաւարածրի 12 համաստեղութիւնների միջով: Նրա ծնունդը «Խոյի» կամ «Այծեղջիւրի» մէջ պատկերացնելով, յոյները նկատի են ունեցել ձմեռային արևադարձի կամ գարնանային օրահաւասարի ժամանակահատուածները: Արևմտեան միհրականութեան մէջ արդէն տեսնում ենք, որ Արևի ծննդեան օրը ստոյգօրէն համարուել է Դեկտեմբերի 25ը[95], երբ ձմեռային արևադարձն է սկսւում:

Հարցը, թէ հնարաւոր է ճշտել, թէ հայկական ամսանունները (Արեգ, Ահեկի, Մարերի, Մարգաց, Հրոտից, Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկի) ինչ դիրք են գրաւել տարուայ մէջ՝ լուսնակների, ինչպէս և կարծում է աստղագէտ, տոմարագէտ Բենիկ Թումանեանը: Դրանք գալիս են անյիշելի ժամանակներից, որոնցից մեզ տոմարական բովանդակութեամբ բնագրեր չեն հասել: Մի բան յայտնի է, որ երբ դրանք կիրառութեան մէջ են դրուել, հայոց օրացոյցը շարժական է եղել, այսինքն՝ իւրաքանչիւր ամիս թափառել է տարուայ բոլոր եղանակներում[96]: Նոյնը չենք կարող ասել կենդանակերպանի 12 համաստեղութիւնների մասին («Խոյ», «Ցուլ», «Երկուորեակներ», «Խեցգետին», «Առիւծ», «Կոյս», «Կշիռք», «Կարիճ», «Աղեղնաւոր», «Այծեղջիւր», «Ջրհոս», «Ձկներ»[97]), քանի որ, եթէ անուանումները և դրանց տեղերը փոփոխման են ենթարկուել, ապա աստղային երկինքը նոյնն է մնացել: Կենդանակերպանի իւրաքանչիւր համաստեղութիւն 360° կազմող շրջանագծում մէկը միւսի նկատմամբ գտնւում է 30 անկեան տակ: Հնում ընդունուած է եղել, որ այդ համաստեղութիւններից իւրաքանչիւրում Արևը մնում է տարեկան 30 օր: Ելակէտ են վերցրել գարնանային օրահաւասարի կէտը: Այդ կէտը իւրաքանչիւր 72 տարին մէկ տեղաշարժւում է մէկ աստիճանով: Մօտաւորապէս 2000 (աւելի ճշգրիտ՝ 2160) տարուայ ընթացքում տեղաշարժը կազմում է 30°: Այսինքն՝ շուրջ 2000 տարին մէկ գարնանային օրահաւասարի կէտը շրջանաձև դէպի ձախ շարժուելով փոխւում է կենդանակերպանի իր համաստեղութիւնը: Մ.թ.-ից մօտաւորապէս 2000 տարի առաջ գարնանային օրահաւասարը սկսուել է «Խոյից», այնուհետև տեղափոխուել է «Ձկներ»[98]:

Հ. Ղեւոնդ Ալիշանը կարծիք է յայտնել, որ հայերը վաղնջական ժամանակներում շարժական տօմարին զուգահեռ ունեցել են կրօնադիցաբանական տօների համար նախատեսուած անշարժ «Միրաքան տօմարը», որի համաձայն, գարնանային օրահաւասարը նկատուած է համարուել Արեգ՝ Մարտ ամսից[70]: Այս տեսակէտը յետագայում պաշտպանել է տօմարագէտ Հայկ Բադալեանը Լոս նրան, առանց անշարժ տօմարի, առանց նշանաւոր տօների հաստատուն ժամանակը սահմանելու, անիմաստ կը լինէր, օրինակ, Վարդավառի տօնն ամռանը կատարելու փոխարէն, կատարել ձմռանը[71]: Ուրեմն, եթէ առաջնորդուելու լինենք հայոց «Միրաքան տօմարով», ապա կենդանակերպի առաջին՝ «Խոյ» նշանից սկսած, համաստեղութիւններից իւրաքանչյուրը կը համապատասխանի մէկ ամսի. «Խոյը»՝ գարնան առաջին՝ Արեգ ամսին, «Ցուլը»՝ Ահկիին, «Երկուորեակը»՝ Մարերիին, «Խեցգետինը»՝ Մարգացին եւն.:

Մատենադարանում պահուող Արեգակի ընթացքի բոլորակում, ուր ներկայացուած են տարուայ եղանակները՝ իւրաքանչյուրն իրենց երեք ամիսներով, աւանդոյթի ուժով, գարունը սկսւում է «Խոյ» համաստեղութիւնից: Իւրաքանչյուր ամսին, ըստ հերթականութեան, համապատասխանում է իր համաստեղութիւնը կենդանակերպում[71]: Շիրակացին նոյնպէս կենդանակերպի աստղատները թուարկում է «Խոյից» սկըսած, որին բաժին է հանում Մարտ ամիսը (Արեգ). «Մարտի ամսոյ... մտանէ արեգակն ի խոյն...»[72]: Հայերէնում նոր տարուայ խմասն արտայայտող «Կաղանդ» բառը փոխուած է հռոմէական օրացոյցից, որտեղ իւրաքանչյուր ամսուայ առաջին օրն էր այդպէս կոչւում (kalendae)[73]: Իսկ հայոց ամսանուններում իւրաքանչյուր ամսուայ առաջին օրը Արեգ էր կոչւում[74]: Ուրեմն, հայերի մէջ կայուն աւանդոյթ էր հարկաւոր, որպէսզի հնարաւոր դառնար այդպիսի փոխառութիւնը: Ուրեմն, Արեգն էլ (Մարտը) հայոց մէջ նոր տարուայ ամիս է համարուել: Հայերն աւանդաբար, նոր տարուայ սկիզբ են ընդունել եւ տօնախմբութիւնները սկսել են գարնանային օրահաւասարի՝ Մարտի 21ին մօտ ժամանակներում Մարտի 10, 13, 16, 20 եւն.[75]:

Մատենադարանի թիւ 3860 ձեռագրում պատրաստուած է յուռութային ժամացոյց, որի վրայ պատկերուած է, թէ ո՛ր ամսին Արեգակը ո՛ր համաստեղութեան մէջ է գտնւում: Սկսւում է «Այծեղջիւրով», որին բաժին է հանուել Դեկտեմբեր (Քաղոց) ամիսը: Վեց համաստեղութիւն անց (եօթներորդը) «Խեցգետինն» է, որը համարուած է Յունիսի (Մարգաց)

աստեղատուն[76]։ Այսինքն, ըստ հերթականության, խոյին զուգահեռ համապատասխանում է Մարտը։ Սա, ինչպէս վերն ասվեց, այն համաստեղությունն է, որտեղ ամառային արևադարձի կէտն է գտնւում, և որում հենց կարող էր ընկալված լինել Արևի (3րդ հերոսի)՝ հանդերձեալ աշխարհ մտնելը։ Բայց նախքան այդ հերոսին վերադառնալը, պարզենք, թէ ինչպէս են հին աստղաբաշխները որոշել կենդանակերպի որևէ համաստեղությունում Արևի գտնվելու տևողը, եթէ լույս օրով այդ համաստեղությունները պարզապէս չեն երևում։

Հին յունական գաղութ Միլէթ քաղաքից յայտնաբերուած օրացոյցի մնացորդներում արձանագրուած են Յունաստանի տարածքից տեսանելի բոլոր այն աստղերի ծագելն ու խոնարհումը, երբ Արևը 30 օր շարունակ գտնւում է «Ջրհոս» համաստեղութիւնում։ Առաջին 2 օրուայ մասին գրուած է. «1. Արևը Ջրհոսում է. Առիւծն աստուածային ծէգին մայր մտնել է սկսում...»։ Այսինքն՝ աստղային երկնքում մինչև լուսաբաց երևում է «Ջրհոսից 6 համաստեղութիւն առջևում գտնուող «Առիւծը»։ 18րդ օրուայ մասին ասւում է. «Ջրհոսի կէսն է ծագում...»։ Աստղային երկնքում հորիզոնի մատակում է բարձրանալ «Ջրհոսի» մի մասը, իսկ «Առիւծը» կիսով չափ տակ է անդաշարժւում»։ 30րդ օրուայ մասին՝ «Արկտուրն է մայրամուտին ծագում»[77]։ Արկտուրը «Կոյսի» հիւսիսային հարևան «Եզնարած» (հին հայոց յայտնի է եղել «Եզոգն» կամ «Ջանգոց անուամբ»[78]) համաստեղութեան պայծառագոյն աստղն է, որը երկնքի ամենապայծառ աստղերից թւում 3րդն է և մշտապէս շարժւում է կենդանակերպում «Առիւծին» յաջորդող «Կոյս» համաստեղութեան ուղղութեամբ[79]։ Ուրեմն, երբ Միլէթի օրացոյցում ասւում է, թէ 30րդ օրը Արկտուրն է մայրամուտին ծագում, դա նշանակում է, որ կենդանակերպում առաջ է շարժուել «Կոյսը», իսկ «Առիւծն» իր տեղը զիջել է նրան։ Արևը տեղափոխուել է «Ձկներ»՝ 6 համաստեղութիւն «Կոյսից» առաջ։

Նշանակում է, երբ աստղային երկնքի արևելեան մասում հորիզոնի մօտ է գտնւում կենդանակերպի համաստեղութիւններից որևէ մէկն իր աստղային համակարգով ամբողջութեամբ վերցրած, այդ ժամանակ Արևը գտնւում է տուեալ համաստեղութիւնից 6 համաստեղութիւն առջևում։ Արևը համապատասխանում է կենդանակերպի գօտու (Արևուղու) կամ նրա հարևանութեամբ գտնուող աստեղատների թշնամական բևեռը ունեցող աստղերից որևէ մէկի հետ և համանուն նրանց։ Մէկ ամսի անց նրանք զուգահեռ յառնում են երկնակամարում և զուգահեռ

հանդիպում Արեւին՝ նրա ուղեների վրայ, քանի որ աստղային երկնքի իւրաքանչիւր կէտ երկրից դիտողի համար վերադառնում է ճիշտ այն դիրքին, որը նրան տեսանելի էր եղել մէկ տարի առաջ:

Հին աստղաբաշխներն, անհատարակ, իրենց շուրջն ամէն ինչ յաւերժական ժամանակի եւ յաւերժական վերածննդի ընթացքի մէջ են պատկերացրել: Այդպէս է ոչ միայն բնութեան մէջ (օրինակ՝ ծլի եւ բուսականութեան դէպքում), այլեւ Տիեզերքում, ուր իւրաքանչիւր աստղ մշտապէս «մահանում»՝ իջնում է հանդերձեալ աշխարհ եւ ժամանակ անց կրկին յարութիւն է առնում (այսինքն՝ նկատի է առնւում աստղի ծագելն ու խոնարհումը երկնակամարում)[80]: Մի համաստեղութիւն մշտապէս փոխարինում էր մէկ այլ համաստեղութեան: Այս երեւոյթը կապւել եւ շումերական Գիլգամէշ էպոսում առկայ աստղային առասպելների համակարգերը բացայայտելիս, կիրառել է բանասէր Արմէն Դուլթեանը: Այսպէս, կենդանակերպի կազմած 360 աստիճան շրջանում, որանց իւրաքանչիւր 30°ը մէկ ամսուայ տեւողութիւն ունի, 3 ամսուայ տարբերութիւն ունեցող բոլոր համաստեղութիւնները գտնւում են միմեանցից ուղղահայեաց 90° անկեան տակ: Արդիւնքում, գիշերային երկնքում մի համաստեղութիւն տարածք է նուաճում միւսի տարածութեան հաշւին: Օրինակ, կենդանակերպում «Առիւծը», որ «Ցուլից» ետ է 3 ամսով, նրա հետ կազմում է 90°ի անկիւն: Երբ «Առիւծը» սկսում է բարձրանալ երկնակամարով, «Ցուլի» աստղերն աստիճանաբար անհետում են այրւում: Իսկ երբ «Առիւծը» հասնում է իր բարձրակէտին, «Ցուլի» աստղերը հասարակում են հորիզոնի գծին եւ անտեսանելի դառնում երկրից դիտողի համար: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, որ «Առիւծը» կռւել, յաղթել եւ սպանել «Ցուլին»: Իսկ այս մենամարտի մոտիւն արտացոլուած է հնագոյն բազմաթիւ առասպելներում եւ զարդարւեստում. առիւծը հակամարտում է ցուլի դէմ:

Այս նոյն օրինաչափութիւնը բնորոշ է կենդանակերպի 3 ամսուայ տարբերութիւն ունեցող բոլոր միւս համաստեղութիւններին. «Ցուլը» սպանում է «Ջրհոսին», «Ջրհոսը»՝ «Կարիճին», «Կարիճը»՝ «Առիւծին» եւն.: Գիլգամէշ էպոսում «երկնային ցուլը», որ «Ցուլ»՝ շումերական MUL համաստեղութիւնն է, այդպէս 7 կում անելով, չամաքեցնում է Եփրատ գետը: Կենդանակերպում Եփրատի համարժէքը կարող է լինել միմիայն «Ցուլից» 90° անկիւնով աջ ընկած գտնւող «Ջրհոս» համաստեղութիւնը[81]:

Դառնանք Արեւորդուն (Թագաւորորդին) եւ հեքիաթների 3րդ հերոսին, որը հանդերձեալ աշխարհ մտնելով, հանդիպում է Լուսին աստուա-

ծուծուն և կռուի բանում նրան առևանգած Վիշապի հետ։ Արևուղու հարևանությամբ, աստղային երկնքի հարավային կիսագնդում այդպիսի Վիշապ կարող էր հնում ընկալուած լինել միմիայն հակայական «Հիդրա» համաստեղությունը, որի գլուխն անմիջապես «Խեցգետին» աստեղատան ներքևում է, իսկ մարմինն ամբողջովին ձգվում է «Կույս» համաստեղության երկայնքով։ Կենդանաշրջանում «Խեցգետնի» և «Կույսի» միջև «Առյուծ» համաստեղությունն է։

«Հիդրան» հայերն անվանել են «Ջրօձ»[92], ինչպես և այդ աստեղատան լատինական անվան հիմքում «Հիդրոս» (ջուր) արմատն է ընկած[93]։ Յույները հավատում էին, որ Հիդրա հրեշի բնակավայրը երկրի վրա Լերնեյ ծովափնյա քաղաքի մոտ գտնվող լիճն է։ Նրանք ամէն տարի այստեղ զարդանքի ծեսեր էին կատարում ի փառս Դիոնիսոսի, որը հենց այս վայրում էր հանդերձյալ աշխարհ իջել իր մոր՝ Սեմելեի՝ լուսնային աստուածուհու, ետևից։ Այստեղ էր հանդերձյալ աշխարհ իջել նաև Պերսեփոնեյին առևանգած Հադեսը[94]։

Յունական դիցաբանության մէջ Հերակլեսի 12 սխրանքներից առաջինը Նեմեյան հրեշավոր առյուծի սպանությունն է, որի դէմ նրա պայքարը և յաղթանակը տևում է ուղիղ 30 օր (ինչպես Արևի հանգրուանն է կենդանաշրջանի խորհրդանիշ համաստեղություններում հետև հաշվով 30 օր)։ Երկրորդ սխրանքը Լերնեյան բազմագլուխ Հիդրայի սպանությունն է, որի գլուխները, յոյների պատկերացմամբ, Լուսնի աստուածուհուն են խորհրդանշել։ Երբ Հերակլեսը մարտնչում էր Հիդրայի դէմ, ճահճի միջից հրեշին օգնության եկավ վիթխարի խեցգետինը և ճանկեց Հերակլեսի կրունկը, սակայն հերոսը կոխոտեց նրան։ Մատուցած ծառայության համար Հերակլեսի հակառակորդ Հերա աստուածուհին խեցգետնի պատկերը տեղադրեց կենդանաշրջանի համաստեղությունների մէջ[95]։

Այս առասպելում ամէն ինչից պարզ երևում է, որ Հերակլեսի 12 սխրանքները Արևի արկածներն են խտացնում, իսկ հանդերձյալ աշխարհի մուտք է համարվել «Խեցգետին» համաստեղությունը, որտեղ, ինչպես վերևում տեսանք, հնում ամառային արևադարձի կէտն էր գտնվում, և Արևի «մահը»՝ հանդերձյալ աշխարհ իջնելն էր ընկալվում։ Հենց այս համաստեղություն մտնելուց յետոյ Արևը պէտք է հանդիպեր Լուսնին և նրան առևանգած Վիշապին (Հիդրային), ինչպես հեքիաթներում է նկարագրվում, որտեղ հետո Լուսինն, իրոք, ամառային

եւ ժամանակին արեւադարձերի օրերին «Մեծամուտ» անհետանում է երկնքից՝ իջնելով հանդերձեալ աշխարհ[86]։

Այս ամէնի նկարագրութիւնը ցայտուն տեսնում ենք հայկական հեքիաթներում, այն տարբերութեամբ միայն, որ բացակայում է հանդերձեալ աշխարհ իջած Յոր հերոսի եւ արեւի մենամարտի տեսարանը։ Դրա փոխարէն, այդ մենամարտը երեւան է գալիս իրանական «Մխիթար Հաքի Օգնութիւնը» հեքիաթում, ուր Յրհորի միջով հանդերձեալ աշխարհ ընկած Յոր եղբայրը արով երկու կէս է անում մարդակեր ահ ու սարսափի մէջ պահող արեւին։ Նրա այս հաղթանակը նոյնն է, ինչ Սասնայ Ծռերի Առիւծաձեւ Ձոջ Մհեր-Մհերի սխրանքը, որը Սասուն տանող ճանապարհը բռնած եւ քաղաքում «Թանդուռներ» դցող արեւին ճզում, երկու կէս է անում. մի կէսը գնում է «ճամբու էն խոպն», միւսն՝ «էն խոպն»[87]։

Երեք եղբայրներին նուիրուած հեքիաթաշարում դէպքերի ամբողջ յաջորդականութիւնը սկսւում է Վիշապի՝ կենաց ծառի պտուղները գողանալով։ Այդ պտուղները հայկական հեքիաթներում խնձորներն են (օրերը), իսկ իրանականում՝ նռները, որոնք իւրենց մէջ պարունակող 360 հատիկներով նոյնպէս տարին են խորհրդանշում՝ օրերով։ Հայկական հեքիաթներում Վիշապը ժամանակի ստանոյ ալքուց խնձորները գողանում է գիշերով՝ այն ժամանակ, երբ գալիս է դրանց հասունանալու պահը, այսինքն՝ քաղում է մէկ օր հասունանալուց առաջ, ինչպէս «Անմահական Խնձորը» հեքիաթն է վկայում. «...հենց գալիս էր հասնելու վախտը՝ տեսնում ին ծառի վրէն էլ ոնչ խնձոր կայ, ոնչ ցաղը»։

Հայկական բնաշխարհում, սովորաբար, խնձորենու ծաղկման ամիսն Ապրիլն է, իսկ հասունանալունը՝ Յուլիսը։ Ապրիլը, հին հայոց «Արրացան» տոմարով, Ահեկի ամիսն է, որին բաժին է ընկնում կենդանակերպի «Ցուլ» համաստեղութիւնը։ Յուլիսը Հրոտիցն է, որի աստղատունն «Առիւծն» է[88]։ Վիշապը սակայն, խնձորները գողանում է ոչ թէ Յուլիսին՝ այս աստղատանը, այլ նախորդ հասունանալը՝ Յունիսին՝ Մարգաց ամսին՝ գլուխը խոթելով «Խեցգետին» համաստեղութիւն։ Եւ իրօք, առաջացին երկնքում տեսնում ենք, որ «Հիւսիսային» (Վիշապի) մարմինը հարաւում սկսւում է կենդանակերպանի «Առիւծ» համաստեղութեան առջեւի ոտքերի տակից, իսկ գլուխը համարեա կպած է «Խեցգետնային»։

Մտածւում է այնպէս, որ ժամանակի մրաւորները խորհրդանշող Տիեզերական, կենաց ծառի թշնամի առասպելական Վիշապը, որի 7, 12 եւ

24 գլուխները նոյնպէս ժամանակի միաւորներն են խորհրդանշում (շաբաթ, ամիս, ժամ այլ), ձգտում է կազմալուծել եւ քայքայել տիեզերական կարգաւորուածութիւնը՝ արարչը: Իր նպատակին հասնելու համար զօրանում է Մառի պատուէրը՝ նախքան հասունանալը Գողանում-փախցնում է նաեւ Լուսին աստուածուհուն (Հեքիաթների 3 կոյս քոյրերին)՝ ժամանակի ցուցիչին, որի նշանակը կենդանակերպի գօտում հսկայ «Կոյս» համաստեղութիւնն է: Երկնքում զբաղեցրած իր տարածքով նա զիջում է միայն ահռելի «Հիդրա»յին, որի գլուխը Հարաւային կիսագնդում սկսում է «Խեցգետնի» հարեւանութեամբ, իսկ պոչը՝ վերջանում «Կշէռք» համաստեղութեան եւ «Կոյսի» ոտքերի մօտ՝ ձգուելով վերջինիս ամբողջ մարմնի երկայնքով: «Հիդրա»յին է սպանում Արեւը՝ Լոյս Աշխարհ հանելու Լուսինին, որի աստղային դրսեւորումը կենդանակերպում «Կոյսն» է[29]:

Արեւը մտնում է «Կշէռք», որտեղ աւելի քան 2000 տարի առաջ աշնանային օրահաւասարի կէտն էր (Սեպտեմբերի 23ը) գտնւում, երբ գիշերն ու ցերեկը հաւասարւում են կշէռքի նժարների նման, իսկ այնուհետեւ գիշերները սկսում են երկարել[30]:

Հեքիաթներում 3րդ քոյրը 3րդ եղբօրը խորհուրդ է տալիս առաջինը դուրս գալ Լոյս Աշխարհ, քանի որ աւագ եղբայրները նրան հորում են թողնելու: Իսկ եթէ այնպէս պատահի, որ նա մնայ հորում, ուրեմն պէտք է գնայ ագռաւի մօտ, որտեղ ջուր խմելու են գալիս սեւ, կարմիր եւ սպիտակ խոյերը, որոնց օգնութեամբ էլ դուրս կը գայ Լոյս Աշխարհ: Սակայն խոյերն, ինչպէս գիտենք, նրան Մութ Աշխարհ են գցում: Այդ խոյերն, իհարկէ, «Խոյ» համաստեղութիւնն են խորհրդանշում, որը հորիզոնի արեւելեան մասում է գտնւում այն ժամանակ, երբ Արեւն աշնանը «Կշէռք» համաստեղութիւն է մտնում 6 համաստեղութիւն «Խոյ»ից անց: Այդ պատճառով էլ Արեւն ընկնում է Մութ Աշխարհ, ուր գիշերներն աւելի երկար են, քան ցերեկները: «Խոյ»ին նախորդում է «Ձկներ»ը, այսինքն՝ ջրային աւազանը, որտեղից էլ հեքիաթում ջուր են խմում խոյերը:

«Կշէռք» համաստեղութիւնը Մատենադարանի թիւ 3884 ձեռագրում ամբողջովին լուսնային խորհրդանիշներից է բաղկացած: Պատկերուած է տիրամայր հագուստով, ծալապատիկ նստած, կարմրագեղ մի աղջիկ, որի աջ եւ ձախ ձեռքերում կշէռքի նժարներ կան: Երկուսն էլ Լուսնի մահիկի տեսք ունեն, որոնք աճող եւ նուազող կիսալուսինները են պատկերում իրենց մէջ: Մէջտեղում աղջիկն է, որ ինքը՝ Լիալուսինը

պէտք է լինի[59]։ Այս աղբիւրն են, թերեւս, հերթով Մութ Աշխարհի քաղաքի աղբիւրի ակը փակած Վիշապին զոհաբերութեան սանում, որպէսզի Վիշապը փոքր-ինչ ջուր բաց թողնի բնակիչների համար։ Սովորաբար, նա քաղաքի թագաւորի աղջիկն է, իսկ «Միրզա Մահմուդ Ու Զամպոյշ հեքիաթում՝ «Հաչոր (այսինքն՝ սանտուաքի, սուսեալ դէպքում «Կէչէալ» սատեղատան) աղջիկն է ներկայանում։ Նրան ազատողը Վիշապը կենդանաշրջանում «Կէչէալին» յաջորդող «Կարիճ» համաստեղութիւնն է, որի գլուխը գտնւում է Թուարանի վրայ, իսկ մարմինն ու անգի հարաւ է ընկած։ Գլուխը նայում է անմիջապէս «Կէչէալին», իսկ պոչն անխախտ դիրք է ընդունել, որ կարծես խայթելու է պատրաստւում։ Թիկունքից «Կարիճի» վրայ է յարձակւում վահանն առած, իսկ հարաւային բազուկը վեր պարզած «Աղեղնաւորը», որը նոյնպէս Արեւուղու վրայ է։

«Կարիճի» թունաւոր պոչի ներքեւում «Զոհարան» համաստեղութիւնն է, ինչն անմիջապէս հարց է առաջացրում՝ այդ ու՞մ են պատրաստում զոհ մատուցել «Կարիճին»։ Զոհը «Կէչէալի» կոյսն է։ Իսկ այս առասպելական Վիշապը «Կարիճ» է անուանում՝ թերեւս, որպէսզի հնարաւոր լինի խուսափել շփոթութիւնից, քանի որ աստղային երկնքի Հիւսիսային կիսագնդում կայ եւս մէկ «Վիշապ», եւ մէկ «Օձ» համաստեղութիւն, իսկ Հարաւային կիսագնդում, ինչպէս գիտենք, «Հիդրա» Վիշապն է։

Սպասւում է, որ Արեգը համապատասխան աշխարհում «Հիդրայի» առեւանգած Լուսինին Լոյս Աշխարհ հանելով, Զոր անգամ է հանդիպում Լուսինին՝ «Կէչէալի» կոյսին եւ նրան կլանել պատրաստուող «Կարիճ-Վիշապին սպանելով, բացում է ջրերի ակունքները Լուսինին, իսկ, Ծիրանիաղի «շարունակ անձրեւաց եւ մեծագոյն բուրաստանաց» է անուանել[60]։

Որպէսզի Արեւն իր Զոր սխրանք Վիշապին սպանի, պէտք է «Կէչէալ» համաստեղութիւնից՝ Հայոց Հոռի (Սեպտեմբեր) ամսից անցնի «Կարիճ»՝ Մեհեկի (Հոկտեմբեր) ամիս։ Երբ արդեն 30 օր մնալով լինում մանի «Աղեղնաւոր», «Կարիճ»-Վիշապն արդէն սպանուած կը լինի, իսկ ջրերի ակունքները՝ ազատուած։

Ջրերի ցամաքումը կարող է տեղի ունենալ կա՛մ աշնանը, կա՛մ ձմռանը, ամեն ճիշտ՝ կարող է սկսուել աշնանը եւ շարունակուել ձմռանը։ Բայց մանաւանդ՝ ձմռանը, երբ գետերը սառցով ծածկուած ջրերի փոխարէն, լճերը սառցով եւ ձիւնով են ծածկւում։ Երբ Արեգը մտնում է «Կարիճ», նշանակէն աշուն է՝ Մեհեկի ամիսն է։ Երբ Արեգը

սպանում է «Կարիճին» և մտնում «Աղեղնաւորը» (Տրէ-Նոյեմբեր ամիս), այդ ընթացքում աստղային երկնքում «Կարիճին» սպանում է Նաև իր բարձրակէտում յայտնուած «Ջրհոսը»։ «Կարիճն» անհետանում է հորիզոնից։ Նշանակում է ջրերի ակունքը փակած Վիշապը պարտուել է, և ջուր է սկսել հոսել։ Սակայն ինչ ջրի մասին է խօսքը, եթէ մինչև գարնան գետերը դեռ շարունակում են սառցակալած մնալ։ Գարնանը մօտենալու համար Արևը նախ պէտք է անցնի «Ջրհոսը» (Արաց-Յունուար) և մտնի «Ձկներ» (Մեհեկի-Փետրուար)։ Իսկ այդ ժամանակ աստղային երկնքում իր բարձրակէտում է գտնւում «Ցուլը», որը սպանում է «Ջրհոսին», ում հետ հակամարտութեան էր բռնուել դեռևս Արաց ամսուայ սկզբից։ «Ջրհոսն» անհետանում է հորիզոնից։ Եղանակը մեղմ է, և երկրի վրայ, իրօք, ջրերի պակաս է զգացւում։ Ջուրը դեռ սառցոյթով է պատուած։ Երբ գարնան Մարերի (Մայիս) ամսին Արևն անցնում է «Ցուլի» համաստեղութիւնը և մտնում «Երկուորեակներ», այդ ընթացքում «Աղեղնաւորը» սպանում է «Ցուլին», որը սպանել էր «Ջրհոսին» և ցամաքեցրել Երկրի ջրերը։ Այդ ժամանակ է միայն սկսւում գետերի յորդումը Երկրի վրայ, քանի որ եղանակը տաքանում է, հալւում են լեռնագագաթների ձիւները և փշրում գետերը սառցեայ փականքները։

Մինչդեռ «Կարիճ»-Վիշապի ցամաքեցրած ջրերի ակունքներն ամենևին էլ Երկրի վրայ չեն, այլ Մութ (Հանդերձեալ) Աշխարհում են գտնւում, այսինքն՝ երկնային են՝ անձրևները, որոնք ամառուայ տապին հազուադէպ երևոյթ են ու աշնանն են միայն առատօրէն յորդում Երկրի վրայ։ Ուրեմն, այդ Վիշապն է, որ փակել է երկնքի ջրի ակունքը և կոյս է պահանջում ջուր բաց թողնելու համար։ Փակել է ամառը, աւելի ստոյգ՝ Նաւասարդ ամսին, երբ աստղային երկնքում բարձրակէտում են գտնւում «Կարիճի» աստղերը, իսկ «Հիդրան» առանձնապէս է Նաւասարդի համարժէք «Կոյս» համաստեղութեան կողս կանգնել։ Այս Չոր Վիշապին («Կարիճին») է սպանում Արևը, ազատում է «Վիշապի կոյսին», անձրև է պարգևում մարդկանց և կենդանաշխարհում առատ չարձուեցով, հանդիպում է իր Չոր ախոյեան Վիշապին։ Հեքիաթում գաւառում բնակուող Արծուի, Զմուռս կամ Մոխրէար դուշի ձագերին ամէն տարի խժռող Վիշապն է։ Չոր հերոս Արևը հանում է Արծուի բնին և սպանում նրա թշնամուն։ Այս հակամարտութեան տեսարանն աստղային երկնքում Թաւաբաղդի հիւսիսային կողմում է՝ «Կարիճ» համաստեղութեան սերտ հարևանութեամբ։ «Օձակիր» համաստեղութիւնը ձեռքերի մէջ է առել «Օձ» համաստեղութեանը և խեղդամահ է անում նրան։ «Օձի» մարմինը գալարւում է ջղաձգութիւնից։

«Օձ» եւ «Օձակիր» համաստեղութիւնները թէեւ տարբեր են, բայց օրգանապէս մէկ միասնութիւն են կազմում: Նրանք Արեւուղու վրայ ախոյանի դերը են գրաւել, որ Արեւն, ըստ էութեան, իր երթուղով շարժուելիս, երկու համաստեղութիւններից միջով էլ անցնում է[35]: Եւ թւում է, որ եւ «Կարիճի» ու «Աղեղնաւորի», եւ «Օձի» ու «Օձակիրի» մենամարտերն Արեւի առանձին-առանձին անցքի ուղեկցած կեանքի տեսարաններն են վերարտադրում երկու հրէշների դէմ:

«Օձի» մարմինը բաժանուած է 2 մասի: Արեւելեան մասում պոչն է գտնւում, արեւմտեանում՝ գլուխը: Մարմինը «Հիւսիսային թագ» համաստեղութիւնից ձգւում է մինչեւ «Արծիւ» համաստեղութիւնը: «Օձակրի» ձախ ձեռքն ամուր բռնել է «Օձի» պոչը, որպէսզի նա յանկարծ դուրս չպրծնի ու չհարուածի «Արծուին»: «Արծիւը» թէեւ «Օձի» եւ «Օձակիրի» անմիջական հարեւանութեամբ է գտնւում, սակայն միանգամայն անտարբեր է նրանց մենամարտին: Կարծես, այդ կռիւն արդէն աւարտուել, վերջացել է, եւ «Արծիւն» արդէն հզօր թեւերը լայնօրէն բացած, թռչում է դէպի Արեւուղու վրայ կանգնած «Այծեղջիւրը»: Նրա գլուխն ու կտուցն էլ ուղղուած են դէպի այդ համաստեղութիւնը: «Այծեղջիւրում», որը համապատասխանում է հայոց Քաղոց (Դեկտեմբեր) ամսին, ինչպէս տեսանք, ձմեռային արեւադարձի կէտն է, երբ ցերեկները սկսում են երկարել: Այստեղ է Մութ Աշխարհում գտնուող Արեւի վերջին հանգրուանը, որտեղից նա պէտք է ծնուի, դուրս գայ Լոյս Աշխարհ՝ Արծուի թեւերի վրայ բազմած:

Եթէ վերյիշենք, թէ հեքիաթներում արքայի մօտ ծեր հերոսին հանդիպած խոյերն ինչ հաջորդականութեամբ են նրան գցում Մութ Աշխարհ, ապա զուգահեռ կը կազմենք տարուայ եղանակները տարուայ որոշակի գոյների հետ համադրելու հին հայոց պատկերացումներից: Սպիտակ խոյն Արեւին գցում է կարմիր խոյի, իսկ կարմիրը՝ սեւի վրայ, եւ նա յայտնւում է Մութ (սեւ) Աշխարհում՝ «Կշեռք» համաստեղութեան մէջ՝ աշնանային օրահաւասարի կէտում: Աշխարհն՝ սեւն աշնան գոյնն է: Լոյս (սպիտակ) Աշխարհ Արեւը դուրս է գալիս («Այծեղջիւր») համաստեղութիւնում՝ ձմեռային արեւադարձի կէտում: Ուրեմն, սպիտակ աշխարհը սկսւում է ձմեռնից՝ Քաղոց՝ Դեկտեմբեր ամսից: Մնում է պարզել կարմիր աշխարհի տեղը, որը բնականաբար կարող է համապատասխանել գարնանը՝ իբրեւ կեանքի, վերածնունդի եւ զարթօնքի գոյնը կրող եղանակի: Եւ եթէ առասպելային տարբերակն ասում է, որ սպիտակ խոյը հերոսին գցել է կարմիր խոյի վրայ, կարմիրը՝ սեւի, դա ցոյց է տալիս Արեւի ամենամեայ պտոյտը տարուայ 3 եղանակներում՝ առհա-

տարակ, ոչ թէ աշնանային գիշերահաւասարից, այլ ձմեռային արեւադարձից սկսած։ Հաշուից դուրս է մնում միայն ամառը, որի առաջին ամիսը՝ Մարգաց (Յունիսը) սկսւում է «Խեցգետինի» համապատասխանութիւնից։ Իսկ «Խեցգետինին», ինչպէս տեսանք, հանդերձեալ աշխարհի մուտքն է, հետեւաբար, նոյնպէս կարող է համարուել, միանալ մահուան գոյնին՝ սեւ աշխարհին, երբ տարին, բնութիւնը, բերքն իրենց հասունութեան շրջանում են, եւ ամէն ինչ ասորհետական ամփոփւում է ապրում։ Ամէն ինչ նահանջում է, Արեւը «Հեռանում է» մեզանից։ Այդ պատճառով էլ ժամանակային այս կէտի նշանակն աստղային երկնքում խեցգետին է դառնում, որը նոյնպէս յայտնի է իր ետ-ետ շարժուելու յատկութեամբ։

Տարին հին հայոց տոմարական պատկերացումներում 3 եղանակից կազմուած լինելը յուրայատուկ փաստում է Սանահինից յայտնաբերուած բրոնզէ գօտի վերջերիցյայ գօտի-պատկերազարդը, ուր ներկայացուած է ձիերի 12 պատկեր, որոնց 3 խմբի են բաժանուած։ Մարմինների վրայ ունեն արեւային նշաններ եւ քարշ են տալիս արեւակառքը։ Գօտու վրայ նկարուած պարզաների, կէտերի, ուղիղների, եռանկիւնիների, ձիերի, դրանց թուաքանակների եւ զուգակցուած գիծերի հիման վրայ ուսումնասիրողները եզրակացրել են, որ տեսարանը լուսնա-արեգակնային օրացոյց է, որտեղ տարին բաժանուած է 3 եղանակի՝ 12 ամսու, իսկ տարեսկիզբը համարուել է գարունը[54]։

Ի վերջոյ ինչի՞ են նպատակադրուած Արեւի արկածները հանդերձեալ աշխարհում, որի սահմանները կենդանաշրջանի 10րդ՝ «Այծեղջիւրի» համաստեղութեամբ են սկսւում։ Երեք եղբայրների հեքիաթաշարում նա հորը կամ ջրհորն է իջնում կենաց ծառի պտուղները փրկելու վճռականութեամբ։ Իսկ այս տեսանկիւնից յատկանշական է, որ յունական դիցաբանութեան մէջ եւս Հերակլեսի 11րդ սխրանքը Հեսպերոսեդների հրաշալի այգուց (որի պահապանն աստղային մի տարբերակում Վիշապ անունով հօփիսն է) ոսկէ խնձորներ ձեռք բերելն է։ Այդ խնձորները կոչւում են նաեւ ոչխարներ, քանի որ յունարէն melon բառը եւ խնձոր է նշանակում, եւ ոչխար[55]։ Համանման պատկերացում յայտնի է նաեւ հայկական հանելուկներից, ուր Լուսինը ներկայացւում է, իբրեւ հովիւ, իսկ աստղերը՝ նրա հօտը[56]։ Այս դէպքում ոչխարը կարող է ընկալուել նաեւ գարնան խոյհրջանից «Խոյ» համաստեղութիւն, այսինքն՝ աստղերի խումբ, իսկ հերոսը՝ գարնանային աստուած։ Իսկ աստուածաբանօրէն ի՞նչ է խնձորը, եթէ ոչ նոյն աստղը, քանի որ կիսուելով յետոյ ներքում աստղի պատկեր է երեւում։ Երակաչում Հեսպերոսն էլ աստղ է

կոչուել յաների մէջ, որ ծագում է արեւմուտքում, երբ արեւը մայր է մտնում[97].

Տարբեր ժողովուրդների աւանդոյթներում խնձորն առնչւում է մարդկային սեռականութեանը, պտղաբերութեանը[98] եւ ընդհանուր առմամբ, չի բացառւում, որ կարող է յանգել նաեւ պարնանային պտղաբերութեան գաղափարին։ Հայոց մէջ հասել է նոյնիսկ պաշտամունքային մակարդակի։ Գարեգին Սրուանձտեանցի հաղորդմամբ, Վասպուրականի Աղթամարայ բերդի մերձակայքում հասող գետի ակունքում վաղ արշալոյսին խնձոր էր յայտնւում, իսկ ով ձեռքը կարկառում էր, որ վերցնի՝ չքանում էր։ Աղբիւրի ակը սուրբ էր համարւում, եւ չէր թոյլատրւում պղտորել՝ ջուր վերցնելով[99]. Այդ խնձորն, ըստ երեւոյթին, յուսաբացի աստղ Արուսեակ-Լուսաբերի (Վեներա մոլորակի) արտացոլանքն է եղել ջրի մէջ, որ «խնձոր» է անուանուել։ Աստղերն էլ առանձնայատուկ պաշտամունքի են արժանացած եղել հայոց մէջ. ժողովուրդը հաւատացել է, թէ դրանք կարող են զօրութիւն, իմաստութիւն եւ գուշակելու ունակութիւն շնորհել մարդկանց։ Երուանդ Լալայեանը պատմում է, թէ ինչպէս գիւղերից մի հովիւ խմել էր քարի փոսի մէջ հաւաքուած ջրից, իսկ գիշերը նրան երազում յայտնել էին, թէ պարտաւոր, քանի որ խմել այն ջուրը, որի մէջ աստղն էր հայելիս։ Այնուհետեւ հովուին արգելել էին ամուսնանալ. վերջինս գուշակելու շնորհ էր ստացել[100]. Ըստ էութեան, ջրի մէջ հայելած այս աստղը Վասպուրականի աղբիւրի ակի մէջ յայտնուող խնձորի համարժէքը պէտք է եղած լինի։ Անհրաժեշտ է նշել, որ խնձորի պատկերը երբեմն թագաւորական թագի ու գաւազանի զարդ է ընդունել։ «Խնձոր» է կոչուել եկեղեցական արարողական խաչից ներքեւ գտնուող գունդը։ Խնձորին վերագրուել են նաեւ բուժիչ յատկութիւններ[101].

Այս ամէնից յետոյ պարզ է դառնում, թէ 3 եղբայրների հեքիաթում ինչ էին խորհրդանշում Թագաւորի հրաշք այգու կենաց ծառի վրայ աճող խնձորները, ինչու՞ էր տիեզերական քաոսային ուժերի խորհրդանիշ Վիշապը գողանում դրանք, ինչու՞ Թագաւորի 3րդ որդին գնաց հանդերձեալ աշխարհ՝ պատժելու նրան եւ ինչու՞ հեքիաթների վերջում մշտապէս երկնքից 3 խնձոր է ընկնում հեքիաթը պատմողների եւ լսողների համար։ Դրանք կեանք, երկարակեցութիւն, առողջութիւն եւ իմաստութիւն շնորհող աստղերի այլաբանութիւններ են, այն աստղե-

րի՝ որոնք միևնոյն ժամանակ ժամանակի (կեանքի) միաւորներն են խորհրդանշում։

***

Դառնանք Երգ Հերոս Արեւին, որը ժամանակի կարգաւորումն իրականացնող աստուած է, քանի որ ինքն է տարեգլխի կառավարը՝ Թագաւորի (ժամանակի աստծոյ) աչքը։ Կենաց ծառի պտուղներին պաշտպանող Վիշապին սպանողը, Լուսնին (որով ժամանակն է չափւում) Վիշապի գերութիւնից ազատողը։ Ծառնայ Տակր կոչւում ժամանակի հետ անմիջականօրէն կապուող արշալոյս Հերոս է Փոքր Մհեր-Միհրը, որը փակւում է ժայռի մէջ և դուրս է գալիս, նախատիպը անիւի՝ «Զարթի Փայլուն պտոյտին։ Երբ այդ անիւը կանգ առնի, գալու է գալու՝ աշխարհի աւերը[102]։ Անիւն, ըստ էութեան, ժամանակի ընթացման հին աշխարհայեացքի գրաւորութիւնից մէկն է, որի համաձայն, Տիեզերքում ամէն ինչ պտտւում էր անիւի նման անվերջ և անվերջ, շրջանաձև շարժման մէջ, որտեղ կեանքն ու մահը հաւասարարժէք համակցութիւններ էին դիտարկւում, քանի որ Տիեզերքում ամէն ինչ կրկնւում է պարբերաբար[103]։ Մատենագրական բազմաթիւ ձևագրերում երկնոյրոր համեմատւում է ջրաղացքարի, իսկ մոլորակները այդ քարի պտոյտի հակառակ ուղղութեամբ ընթացող մրջիւնի։ Հնաարամեդյից էլ ծագել է Հմոլորակն անունը, որը վերագրւում է նաև Արեւին ու Լուսնին[104]։ Անզէն աչքով տեսանելի 7 մոլորակները, կարծես, իրար, մոլորւած լինեն։ պատկերացւել է, որ երկնոյրոր նրանց տանում է արևելքից արևմուտք, բայց իրենք էլ ընթանում են արևմուտքից արևելք։ Ահա թէ որտեղից է առաջ եկել «Զարթի Փայլուն պտտայտութիւնը։ Զարթը հայոց կենցաղում ջրաղացքարի անիւն է՝ իր սրանիով, որի նշանակը և՛ երկնոյրոր է, և՛ նախատապերը, որը ժամանակի աստծոյ անուններից մէկն էր (Բախտ)։ Ամբողջ երկնոյրոր հշարժումը նախատապերի անիւի պտոյտի արտայայտութիւնն է։

Ժամանակը կարգաւորող, Հանդերձեալ աշխարհ մտնող և ելնող Արեւն իրանական հաւատալիքներում իր վրայ էր վերցրել նաև մարդկային հոգիները դատելու առաքելութիւնը։ Նրանք Աւեստայում ասւում է. «Երբ առաքինիների հոգիներն անցնում են ուրիշ աշխարհ, աստղերը, Լուսինը և Արեւը ընդունում են նրանց։ Արմինքի՝ արդարների հոգիների վերջին բնակավայրն աստղային երկինքն է։ Մահւան մինչ երկնքին հասնելը, մարդու հոգին պէտք է անցնի Հատուցման կամ Չինւատ կամրջի վրայով, որը Հարաւոր լեռան վրայից ձգւում է մինչև աստղերը Գա-

գաղթավայրում նա արդեն նման սուրբ է, և մեղավոր հոգիները սայթաքում ու ընկնում են անդունդը, որտեղ նրանց բանտարկում և տառապանք է տանում դևերը (վհուկը)։ Առաքինի հոգուն կամրջի վերջում դիմավորում է Միհրն իր գործակիցներ Սրաոշայի և Ռաշնուի հետ։ Նրանք դատում են փրկվածին՝ արդարադատ կշռելով նրա բոլոր բարի գործերը[105]։

Չինվատ կամուրջը հայոց մէջ յայտնի է եղել «Մազէ կամուրջ» անունով, որի վերջում քրիստոնէությունը կանգնեցրել է ոչ թէ Միհր-Արևին, այլ «Արդարութեան Արեգակն Յիսուս Քրիստոսին»[106]։ Մազէ կամրջի, նրա վրայով անցնող արդար մարդու և ներքևում կանգնած վհուկի անտարբեր ժողովուրդը մինչև մեր օրերը թատերականացված ներկայացնում է յարախաղացութեամբ կամ, այսպես կոչված, «թևանդրջարգրութեամբ»։ «Թևանդրջարգը» յարախաղացն է։ Դիմակավորված վհուկը «Քյասա» (անմազ) է կոչւում, որը ծաղրում է յարի վրայով քայլող հերոսին և անհնարում նրա վայր ընկնելը կամ ընդհակառակը՝ զովաբանում է նրան, որ վայր չի ընկնում։ Հերոսն անտարբեր է այդ ամէնի նկատմամբ։ Նրա հայեացքը միշտ առաջ է նայում, իսկ ինքը հոգու նման թեթև ցատկեր է կատարում յարի վրայով՝ շարժվելով դէպի աստղերը։

Ինչպե՞ս է Միհրն առաջային առասպելաբանութեան մէջ դարձել Զրուանի 3րդ որդի, եթէ յայտնի է, որ Զրուանն ընդամէնը 2 որդի է ունեցել՝ Որմիզդն ու Արհմնը (Անհրիմանը)[107]։

Հակոտնեայ երկուորեակների առասպելոյթը ծագել է դեռևս երկատար (դուալ) հասարակութիւնում՝ տոհմատիրական կարգերում, երբ հասարակութիւնը դիտւում էր իբրև երկատարման Տիեզերքի՝ երկնքի և ստորերկրայքի հակադրամասնութեան արտացոլանք, ինչպես դա բանահիւսական պատկառելի նիւթի հիման վրայ ցոյց է տուել Ալեքսանդր Զուրաբեանը[108]։

Զրուանական առասպելում լուսաւոր Որմիզդը խորհրդանշում է երկնային Թագաւորութիւնը, Արհմնը, որին 9 հազարամեայ իշխանութիւն է տրուած՝ ստորերկրայքը։ Իրանական աւանդութեան մէջ վերջինս պատկերւում է որպէս վիշապ, որը յարձակւում է իր եղբոր երկնային Թագաւորութեան վրայ, բայց պարտուելով՝ փախչում է ստորերկրայք[109]։

Զրուանի 2 որդիների փոխարինումը Յով, հավանաբար, անցել է ու-նեցել եղբայրներից մեկի կամ միանգամից 2ի կերպարների երկփեղկ-ման ճանապարհով։ Երկրորդ դեպքում, որն ավելի հավանական է, Յոդ եղբայրը երևում է նենգ, իբրև միջնորդ ողջ 2 եղբայրների միջև և գերիշխող դիրք է գրավել նրանց երկնային և ստորերկրյա իրավասու-թյունների նկատմամբ։ Երրորդ եղբայր Արևը, որի ճանապարհն անց-նում է և՛ երկնքով, և՛ ստորերկրայքով, ձեռք է բերել տարածային նշա-նակություն՝ տասնմեկերով վիշապների դեմ կռվողի, տիեզերական կար-գուկանոն և արդարադատություն հաստատողի գործառույթը։ Փաստա-ցիորեն, նա ստանձնել է և՛ երկնքի, և՛ վերգետնյա Երկրի, և՛ ստո-րերկրայքի իշխանությունը, ինչպես սկյութական Յոդ եղբայր Կոլաքսա-իսը (որի անունը նույնպես «Արև արքա» է ստուգաբանվում) իշխանու-թյան ունեցել իր ավագ եղբայրների՝ Արպոքսաիսի՝ «Խորքերի տիրոջ» և Լիպոքսաիսի՝ «Լեռների (Երկրի) արքայի վրա»[110]։

Միհրը և՛ Որմիզդի լույսն է մարմնավորում, իբրև երկնքի աչք, և՛ Արշամի խավարը՝ նրա վիշապային էությամբ։ Իրանական աղբյուրները չեն պահպանել նրա կերպարի այս երկակի ըմբռնումը, սակայն դրա փոխարեն Հռոմում Միհրը պատկերվում էր Արևի նման շողարձակող դիմքով և իր մարմինը պարուրած օձերով, որոնց հետ հաշտության մեջ է[111]։ Այդ տեսքով մեզ է հասել նրա հարթաքանդակը՝ Այոն աստծոյ ա-նունով. Այոն-Միթրա-Միհրը կանգնած է համաշխարհային գնդի վրա։ Մի բարձրաքանդակում ներկայացված է վիշապի գալարներով պա-րուրված պատանի, որը դուրս է գալիս կոտրված ձուի միջից։ Ձուի կճեպի մի մասը ոտքերի տակն է, միւս մասը՝ գլխավերևում, որին փա-թաթվել է վիշապի գլուխը։ Փառանի աստծոյ շուրջբոլորը նույնպես ձուաձիր է՝ կենդանակերպերի 12 համաստեղությունների նշաններով։ Այդ ձուաձիրը Տիեզերքի պատկերն է, իսկ աստծոյ անունը Փանես է։ Փանհեղանում է նմանօրինակ եւս մեկ հարթաքանդակ, որ չարձեւայ պատկերում է ձուից նոր ծնուող աստուած եւ նույն ձուաձիրը՝ կենդա-նակերպերի նշաններով։ Երկու պատկերներն էլ թվագրվում են Հռոմի Ավենտինյան բլրի տաճարի միթրայական արձանագրից։ Առաջին 2ը՝ յունական մակագրություններով, նուիրուած են «Հելիոս (Արեւ) - Միթ-րան աստծուն, Յոդը՝ «Հելիոս-Միթրա-Փանեսն աստծուն։ Փանեսն օր-փիկական աստուած էր եւ նոյնացւում էր Միթրա-Միհրին։ Վանդեր-Վարդենն արդարացիորեն եզրակացնում է, որ սերտ կապ է գոյություն ունեցել զրուանականության, միհրականության եւ օրփիզմականու-

թյան մեջեւ, որոնք մ.թ.ա. Դ. դարում գոյություն ունեին միաժամանակ։ Միթրա-Միհրը զրադաշտական աստված էր եւ ոչ՝ զրադաշտական, քանի որ Զրադաշտ մարգարեն կռապաշտականությունը դատապարտում էր ցուլի զոհաբերությունը Միհրի պաշտամունքում։ Իսկ ցուլ զոհաբերողն աստվածպաշտպանողն Միհրն էր[113].

Օրփէոսական աստվածաբանության մեջ Արեւը նաեւ Աժուր էր կոչվում եւ կրում էր «Ձմեռային Գրասոգանն (Լուսավորի Ժամանակը) անունը։ Նրան մայրը՝ Գիշեր աստուածուհին աշխարհ էր բերել միաժամանակ արգանդից՝ արծաթե ձու տեսքով[114]. Այդ աստվածն Աթուլեկից հաղորդված Աժուրի եւ Փաիլեկաթի աստվածում, ցերեկները վիշապ է, որը կարում-անցնում է աստղերկրային Սանքս գետը, իսկ գիշերները՝ գեղեցիկ պատանի է դառնում[115]. Փիլատեսն մի աստվածային թռչնի կերպարանք առած էլլինիան աստուածուհին վիշապից բեղմնավորվում, ձու է ածում, իսկ վիշապը գալարվում է դրա շուրջը այնքան ժամանակ, քանի դեռ միջից դուրս չի գալիս այն ամենը, ինչ մեզ շրջապատում է բնության մեջ (այդ թվում երկնային լուսատուները)[116].

Նմանօրինակ պատկերացումների հետքեր բազմիցս հանդիպում են հայկական եւ իրանական հեքիաթներում, ուր, ինչպես տեսցինք, Միհրը յանախ «Միհրդատ» ծածկագրում անունով է երեւան գալիս։ «Միհրա Մանձուրի հեքիաթում»[117] նա վիշապի կերպարանքով լողանում է անդամակ կնոջ ու նրա ամուսնուն եւ լարտարարում, թե նրանց զավակն է։ Վերեւում քերված իրանական «Միհրդա Մասսու Խուձար Եւ Բիբի Մեհրբանդար» հեքիաթում Միհրդան դարձյալ անզավակ կնոջ եւ նրա ամուսնու (ինչպիսին էր Զրուանը[118]) վիշապ զավակն է, որը խոսոյ մարդկային կերպարանք է առնում։ «Օձ Մանչի» հայկական հեքիաթում[119] այս հերոսը դարձյալ վիշապ է (օձ), որ գիշերները գեղեցիկ տղայ է դառնում։ Նա ծույց է դուրս եկել, ինչպես միհրական սրբարանի տանարաններում Միհրը Ալբանից, ուր ծուն են յապանարերել, եւ ատած է Գաղեի թանուտը՝ իր 12 «հոգաբարձուներով» (համաստեղություններով կամ ամիսներով)։

Գառներին ամբողջացնելու համար մնում է եւս մեկ խոսուն մանրամասն ավելացնել Ավենտինյան բլրի տարածքի միթրայական սրբարանից, ուր պահպանվել է DEO ARIMANIO մակագրությամբ Նվասմ-

նախերգներից ոմանք այս բառակապակցության մեջ Ահրիմանի անունն են տեսնում: Միհրի պաշտամունքի հետևորդներն իրենց Արեւստանայ տաճարում երկրպագել են Ահրիման աստծուն, թեպետ դա անում էին պարսից մոգերը: Այսպիսի մոտեցումը նույնպես ծագումնաբանորեն չի համապատասխանում ուղղափառ զրադաշտականությանը եւ եւս մեկ անգամ փաստում է, որ Միհրն արեւելյան աստված էր եւ առնչվում էր Զրուանի՝ ժամանակի աստծու պաշտամունքին[129].

Զրուանի եւ նրա որդիների նախակերպարները՝ սիմէտրական այն ընթացքի մէջ, որոնցից մենք նրանց տեսնում ենք 3 եղբայրների մասին հեքիաթաշարում, պահպանվել են (հիշել է, գրավորեն արտացոլված) Սասնայ Ծռերում: Հայոց կառուցվածքում կարեւոր տեղ է գրավում խաչապաշտ-կռապաշտ (քրիստոնեական-ոչ քրիստոնեական) հակադրությունը, այդ իսկ պատճառով նրա զանազան պատումները բանավոր մշակման են ենթարկվել քրիստոնեական-եկեղեցական քարոզչության ազդեցությանը: Սասնայ Ծռերն առանձնապես երևում է երկուորեակներ Սանասարի եւ Բաղդասարի, նրանց մօր՝ Ծովինարի, վերջինիս հօր՝ Գագիկի եւ կռապաշտ թագաւորի պատմություններում: Գագիկ թագաւորից նրա դուստրը պահանջում է մեկ այլ թագաւոր, որը, որպես կանոն, հեթանոսական է որակվում: Մարտունեցի Եղիշե Ծաղկարանի պատումում ասում է. «Խալիֆայական, ասած, մի հազ կռապաշտ թագաւոր կար, կուռք էր պաշտում. ունէր էրգու հատ տղայ: Տղաներ՝ մեկի անուն Սանասար, մէկին՝ Աւլիմելիք (Բաղդասար - Գ.Մ.)»: Այնուհետեւ ասացողը պատմում է, թէ հեթանոսական թագաւորն ունէր մի աղջ, որն անընդհատ հեծնում էին դեւերը: Հայրը որդիներին խանդավառում է. «Գնացէք, արար պաշտեցէք, որ դեւերը չխենեքեն արարին: Տղաներից մեկին արար հերթին գլխին է գնում, մյուս՝ հետագայն, եւ սպանում են չարակեղ դեւերին: Սանասարը խանդավառ նայում է երկնքին եւ ասում. «Մեր հայրը որ կուռք է պաշտում, բա էս վերին դեփիներն ինչ ա... Վայ, չէյայ, սա Աստված ա. անպարզում մենք պետ ուստանք Աստծուն»: Հայրը, երբ իմանում է, որ որդիները տեսել են Աստծուն եւ հաւատացել, որոշում է նրանց իր կուռքերին զոհաբերել: Եղբայրները հեռանում են օտար երկիր: Ժամանակ անց, Աւլիմելիքը վերադառնում է հօր երկիրը, սպանում է նրան կռոց տանը եւ ջարդուփշուր անում կուռքերին[130].

Այս պատումում սկզբից եւեթ երեւում է, որ հեթանոսական թագաւորը նախատիպը Զրուանն է եղել, որը Եղնիկ Կողբացու հաղորդում ա-

առասպելում էլ նախնադարյան իր աստվածներին զոհաբերություններ ա-
նող՝ պաշտամունքը մատուցող աստուած է նկարագրւում[99]: Նա նաև
հեքիաթների աշխույժ ուժը Թագաւորն է, որի աղջիկն է դառնում դարձել է
արա, իսկ գող Վիշապի փոխարէն յաղթանակն են շղթերը։ Փահլաւութիւն
անող եղբայրների թիւը երկուսն է։ Մասը չկայ այն մասին, որ Թագա-
ւորը կոյր է, և Ձոր որդին գնում է այն աշխարհ՝ հօր աչքերի բուժա-
նը գտնելու։ Որդիներից Աւլխմերիքը (կրտսերը) ընդհանրապէս՝ գալով
խփում, ծաղրում է հօր գլուխը։ Էպոսի խաղաղայ ատաղձներն, ի
հարկէ, չեն կարող համընկնել հեթանոսական Աստուծոյ հաւատացած
որդիների և նրանց կապակցող հօր հաւատութիւնը։

Հայկական էպոսում, ասենք, Սանասարի և Բաղդասարի նիւ-
գին յաղթում է Ձոր Միհրի նիւթը։ Ձոր Միհրը երկատւում է Սանասա-
րի կերպարից, բայց ոչ թէ Սանասարի եղբայրն է, այլ՝ որդին։ Ձոր Մհե-
րի կերպարն իր հերթին երկատւում է Դաւթի, Դաւթինը՝ Փոքր Մհերի
կերպարների, որոնց սխրանքները, գործողութիւնները ու արարքները
յաճախ կրկնում են մէկը միւսին և գրաւոր նոյնանում Միհրի կերպա-
րին։ Ու քանի որ էպոսում ոչ թէ 3, այլ 2 եղբայրներ են գործում, հետե-
ւաբար՝ բացակայում է Ձոր եղբայր՝ ասաց եղբայրների ձեռքով հօրում
մեռնող միջնորդը, ապա գրա փոխարէն երևան է գալիս մէկ այլ մո-
տիւ- հօրն է ընկնում Դաւթը (կամ Փոքր Մհերը) իր խորթ եղբայր՝ Մսրա
Մելիքի ձեռքով զարմանալ զաւանանաբար։

Միհրական ծածկագրի առասպելական՝ հեքիաթներից անանցուած միւս
գրեթէ բոլոր միջնորդները՝ Ձոր հերոսի սխրանքներն ու գործողութիւն-
ները համընկնող աշխարհում (Թառասուն հոգ ծամ կարմին Վիշապից ա-
զատելը, ամէն խնձորին սիրամարը, Պառաւի տանը հիւրընկալութիւնը,
Մութ քաղաք ընկնելը, Ջրի ակը փակած Վիշապին սպանելը և նրան զո-
հաբերութեան տարուող աղջկան ազատելը, Արծուի թշնամի Վիշապին
սպանելը, այդուհետև նրա թևերի վրայ Սասուն վերադառնալը ևն.)
նոյնութեամբ կրկնւում են էպոսի՝ Սասունցի Դաւիթի պատումում[100]:

Ջրուանին՝ իր երկու որդիների հետ անանում ենք նաև առասպելին
երկնքի Հայրուսանին կնոջադրում՝ շատ մօտ Արեւուցու վրայ զարմա-
նալին տարածելիքը արգելարող «Մոգ» համաստեղութեանը։ «Մոգին
յաղթում են «Ցուլը» և «Օրիոնարեանները», որոնց անմիջական հարե-
ւանութեամբ «Օրիոնն» է՝ փահանակը, թռուկը կամ մահաբակը հրա-
կան, որի դէմ կատարի կռուի է նետուում «Ցուլը»։

Օրիոնը յունական դիցաբանութեան մէջ հռչակուել էր՝ վիթխարի հասակ ունեցող հսկայ, որ սիրահարուած էր Օյնոպիոնի դուստր Մերոպէին։ Օյնոպիոնը հարբեցնում է Օրիոնին, և երբ վերջինս քնում է, կուրացնում է նրան ու նետում ծովի ափը։ Օյնոպիոնը գտնում է մի տղայի, նստեցնում է ուսերին և խնդրում, որ ցոյց տայ արևածագը տանող ճանապարհը։ Երբ տեղ են հասնում, նա բուժւում է աչքերն Արևի ճառագայթներով և վերականգնում տեսողութիւնը[123]։

«Օրիոն» համաստեղութիւնը հայերին ծանօթ է եղել «Հայկ» կամ «Հայկին» անուամբ։ Այսպէս են Աստուածաշնչի հայ առաջին թարգմանիչները նրա անունը յունարէնից փոխադրել հայերէն[124]։ «Հայկը» երկնքում զանեւորուած, աղեղնաւոր հսկայ է՝ բաղկացած 7 հիմնական պայծառ աստղերից, որոնցից 3-ն ուսերն են կազմում, միւս 2-ը՝ ոտքերը, և 2-ը՝ գօտին։ Յատկապէս կարևորուել է «Հայկի» գօտին, որովհետև հայերը տարբեր ժամանակներում տարածին անուններ են տուել դրան. կոչուել է «Շամփուրը», «Երեք թագաւորը» և «Զաւի (Քար) ու կշիռ»։ Այս վերջինը՝ աստղագէտ-տոմարագէտ Գրիգոր Բրուտեանին հիմք է տուել եզրակացնելու, որ «Հայկին» ընկալուել է որպէս չափ ու կշռի որոշող. նրանով է չափուել ժամանակը, նրա ստեղծատուն է եղել հայոց օրացոյցի կարգաւորողը[125]։

Ժամանակի հետ հայոց աստղաբանական նախնու կապը երևան է գալիս Շիրակացու յայտնի վկայակոչումից, որում ասւում է, թէ նրա ուսարերի և գօտարերի անուններով են կոչուել հայկական ամսանունները[126]։

«Հայկ»-«Օրիոնը» ժամանակի աստուած է դառնում, ինչպէս իրանական Զրուանը, իսկ յունական դիցաբանութեան մէջ Օրիոնի կուրանալը, ապա Արևի ճառագայթների շնորհիւ տեսողութիւնը վերականգնելը այդ ժամանակի աստուածն նոյնացնում են հեքիաթների կոյր թագաւորին, որն իր աչքերի բացուածը նոյնպէս գտնում է Ձոր որդու՝ Արևի ճանկերով[127]։

«Հայկի»՝ ժամանակը (տարին) և ընդհանրապէս, տիեզերական կարգաւորողի դերն առաւել ակնյայտ է դառնում հայոց աշխարհայեացքում գօտու հետ կապուած ծիսաաստղաբանական համատեքստից։ Գօտին ցոյց է տալիս իրենն կրողի և՛ մէջքը, և՛ կէսը, և՛ այն սահմանը, որով իրար են կապուած մարմնի վերին և ստորին մասերը, ինչպէս նկատել է

բանաստեղծ Սարգիս Յարութիւնեանը։ Իսկ մէջերը, միջինը, կենտրոնը ինքնակերպարանական-առասպելաբանական մտածողութեամբ, կարգաւորուածութեան եւ ներդաշնակութեան աղբիւր է։ Կենտրոնի անորոշութիւնը յանգեցնում է չափի, կարգաւորուածութեան բացակայութեան եւ տանում դէպի քաոս։ Այս խնդրով նաեւ Տիեզերքի առասպելաբանական պատկերն՝ իր երկնային, վերգետնեայ եւ ստորերկրեայ տարածքներով, մարդկային կառուցուածքի նմանութեամբ է ներկայացւում եւ երբեմն ծագած է համարւում մարդու մարմնի մասերից (ինչպէս, օրինակ՝ Հնդկարիական Պուրուշայի առասպելում)։ Գլուխը համապատասխանում է երկնքին, իրանը՝ միջնաշխարհին, իսկ ոտքերը՝ ստորերկրայքին։ Այդ ամէնի մէջտեղում գտնւում է, որը քաոսի արտաքին կործանարար ուժերի դէմ պաշտպան կանգնելու, ներդաշնակութեան, չափի ու կշռոյթը պահպանելու։ Նշանակութիւնն է ձեռք բերում։ Սրանից ելնելով, գօտին կրում է պայքարի իմաստ՝ զանազանելով ռազմիկի հանդերձանքի անբաժանելի մասը։ Այստեղից էլ՝ «գօտեպնդուել», «գօտելորուել», «գօտեմարտի ելնել» բարդութիւնները[130]։ Ուշագրաւ է, որ 1896ին Ալեքսանդրապոլում լոյս տեսած, առաջային երկրորդ պատկերով Հայկական Համառօտ Աշխարհացոյց քարտէզում «Օրիոն» Համաստեղութեան Հայկական անուան դիմաց նշուած է «Մարտիկ»[131], ինչն, ամենայն Հաւանականութեամբ, «Հայկի» Հետեւց առանձնացուած անուններից մէկն է։

Գօտու Հետ կապուած ծիսապաշտամունքային չերտը պահպանուել է վաղեմի ժամանակներից մինչ օրերը Համաձ խախտախաղում, որը կատարւում էր Համշէնականում գարնանամուտին, Հայոց նոր տարուայ՝ Բարեկենդանի ատեն շրջանում։ Համախմբւում են 2-20 մասնակից, զինւած չուխաներով եւ գօտիները Հաւասարաչափ բաշխում դրա նկարում։ Խաղաբանջիւրը կանգնում է իր գօտու մօտ՝ պատրաստ պաշտպանելու Հակառակորդ խմբից, որի անդամները նոյնպէս գօտիները ձեռքին ունան, ձգտում են խլել դրանք։ Սկսւում է անողոք պայքար։ Գօտուց զրկուածները դուրս են գալիս խաղից, իսկ ով մնում է շրջանագծի ներսում չարաչար ծեծի է ենթարկւում գօտիներով։ Այս խաղի մէջ, ըստ Յարութիւնեանի Համոզիչ մեկնաբանութեան, շրջանագծեր սկզբնապէս խորհրդանշել է Հին, իր ժամանակին ապրած եւ «մաշուած» տարին՝ գօտիներով ուժերով։ Ծարծակուող խումբը նոր տարին է, որ վերկատար յաղթանակ է տանում Հին նկատմամբ[132]։

Ուրեմն, պատահական չպետք է համարել գօտեւորւած «Հայկի» պատկերի տեղադրումը կենդանաշրջանի (որն, ի դէպ, նոյնպէս գօտի է) հենց այն հատուածի միջնակայքում, որտեղ գարնանամուտը՝ հին հայոց նոր տարին ազդարարող «Խոյի» համաստեղութիւնն է գտնւում։ Նրանց բաժանող բնդամէջը «Ցուլի» աստեղատունն է, որ հակադրւում էր «Հայկի» դէմ։ «Հայկի» սերտ հարեւանութեամբ գտնւող «Երկուոր-եակները» համաստեղութիւնը պէտք է որ առասպելաբանւած Հայկ նա-հապետի նախակերպարի (գուցէ եւ ժուկ-ժամանակ առանց) երկու-երկուորեակ որդիները եղած լինեն։ Կենդանաշրջանում էլ «Երկուոր-եակներին» յաջորդում է «Խեցգետինը»՝ ժամանակի այն հատուածը (Մարգաց-Ցուներ), երբ հեքիաթային-առասպելական սաղ եղբայրնե-րը կրտսերին հանդերձեալ աշխարհ են իջեցնում։

Հայոց աւանդութիւնը եռայարկ Տիեզերքն անխտիր բնակեցւած էր համարում մարդկանցով, որոնք միմեանցից տարբերւում են սոսկ գօ-տիները կրելու կերպով։ Ներքնայարկի մարդիկ գօտին կապում են ծնկներին, միջնայարկում՝ փորից վերեւ՝ իրանին, իսկ վերնայարկում՝ կրծքին[181]։ Այն, որ «Հայկը» համաստեղութեան գօտին փորից վերեւ է կապւած, նրան իջեցնում է միջնայարկ՝ մեր աշխարհը։ Ուրեմն, պատ-մական իրականութեան մէջ տեղի է ունեցել դիւցազուն նախնու եւ ժա-մանակի առանց նոյնացումը։ Հայկը նահապետ է, գուցէ եւ՝ առաջին առմարդկէր, որն օրացոյցի կարգ է սահմանել, ինչպէս ցոյց են տալիս նրա զաւակների ամսանուն անունները։ Նա ազգի անուանադիր է եւ սկզբնաւորող։ Նա հակամարտ եղաւ իր առոյգանի՝ Բէլի դէմ, ինչպէս երկնքում հակամարտում է «Ցուլի» դէմ։ Սպանեց նրան եռաթեւ նետով (գուցէ եւ՝ տարւայ 3 եղանակների խորհրդանիշը), հաստատեց կարգու-կանոն, ինչը դիցաբանական իմաստով տիեզերական կարգաւորուածու-թիւն է նշանակում։ Ուստի, «Հայկի» համաստեղութիւնն իր գօտիով ըն-կալւել է տիեզերական կարգաւորուածութեանը միտւած ուժ՝ չափող եւ կշռող, այսինքն՝ ժամանակը հաւասարակշռող բաշխող, հին տարին նո-րից զատող առանց մարդկայնացած կերպաւորումն առաջային երկն-քում։ Դա այն ատուածն է ու տարին, այսինքն՝ կեանքը խորհրդանշող Ծառի տէրը, որի ճիւղերին առող ոսկէ խնձորները (աստղ-որդիք, եղա-նակները) գողանում է Վիշապը եւ տիեզերական կարգաւորուածութիւ-նը փորձում է վերածել քաոսի։ Ժամանակի առանց պատուէրով, կար-գը վերահաստատել է յաջողւում միայն նրա 3 որդիներից կրտսերին։

Արեւուղու միհրական առասպելոյթն իր մէջ ամփոփած 3 եղբայրնե-րի հեքիաթների՝ Հայկական բանաշխարհում արմատացած լինելը յա-

չում է գնալ Վանի հայակական քարաժայռ, ուր բիայնական դիցարանի աստուածներն են անպարզերով խաւերժացել, եւ որը ոչ պատահականօրէն ժողովրդի մէջ «Մհերի դուռ» անունն է ստացել՝ Միհր-Արեւի անունով։ Աստուածացանկում առաջնային դիրք է յատկացուած Խալդին, որի անունն առաջինն է յիշատակւում, իսկ աստուածներին նուիրաբերւող զոհերի քանակով ամենաշատը նրան է բաժին հասնում։

Իզուր Դեւակոնովը պատահական չհամարելով հնում «Խալդիի դուռ» կոչուած քարաժայռը հայոց մէջ յետագայում «Մհերի դուռ» անուամբ յայտնի լինելը, որտեղից աւանդութեան համաձայն, դուրս է գալիս Մհերը Վարդավառի եւ Համբարձման տօներին[128], եզրակացնում է, որ դրա դիրքը պէտք է ուղղուած լինի դէպի արեւմուտք՝ քարանձաւային առասպելի կէտը, ինչը ստուգման անհրաժեշտութիւն ունի։ Նախքան Մհեր-Միհրն, այս ժայռեղէն հորանից Խալդին է դուրս եկել[129]։ Միհրն, ինչպէս տեսանք, նրա արեւմտեան պաշտամունքում ուղղակիօրէն Արեւի հետ էր նոյնանում։ Նրան պատկերող հռոմէական շրջանի հարթաքանդակներում հանդիպում է «Անյաղթ Արեւ աստուած» մակդրութիւնը[130]։

Հետաքրքիր է, որ Դեւակոնովը ոչ մի ընդհանրութիւն չի տեսնում ուրարտական միհրականութեան եւ իրանի զրադաշտական շրջանի Միհրի պաշտամունքների միջեւ։ Դրա փոխարէն, դէպի արեւելք շարժուելիս, Հռոմի միհրապաշտական խորհրդանիշները նա ցոյց է տալիս բացառապէս Վանի թագաւորութեան սահմաններում։ Նոյնական որոշ կրօնադիցաբանական ըմբռնումներ (օրինակ՝ «Աստծոյ դռներ» հասկացութիւնը) նկատւում են միայն փոխառութիւնների մէջ[131]։

Թէ՛ ինչ է ներկայացրել իրենից նախազրադաշտական իրանի Միհրի պաշտամունքը, մեզ այդ մասին բաւարար տեղեկութիւններ չեն հասել։ Սակայն Միհրի անունը «Միթրա» ձեւով եւ հուրրի, հայամիտաննական «երդում» իմաստներով գալիս է դեռեւս հնդեւրոպական միասնութեան շրջանից[132]։ Իսկ որտեղ ուխտը եւ երդումն են, այնտեղ առկայ պէտք է եղած լինի նաեւ Արեւի պաշտամունքը, ինչպէս հայոց բանաւոր խօսքում էլ ցայժմ յարատեւել է Արեւով երդուելու աւանդոյթը։

Խալդին բիայնական պեղածոյ տարբերակներում պատկերւում է՛ւ իբրեւ պատանի, ե՛ւ իբրեւ բեղ-մօրուսով տղամարդ, ե՛ւ իբրեւ ծերունի, ինչը հիմք է տալիս նրան մեռնող եւ յառնող աստուած համարել[133], որ-

պիտին Արեւն է երկնքում՝ տոտեմական ժառանգությամբ։ 1990ին, Վան քաղաքից ոչ հեռու, Անձաւ կոչվող վայրում, բնական ամրո-ցից քանդակերուել են փաշանի մեծագործներ, որոնք պահպանել են Խալ-դիի պատկերը՝ մարմնից բոց-ճառագայթներ արձակելիս։ Նա աստ-վածների առաջնորդում է թշնամու դէմ[138]։

Վանի թագավորության կրոնագիտական յուշարձաններում Խալդիին հանդիպում փառահեղի միջոցներից են առյուծը, արծիվը[139] եւ այ-ծը։ Մհերի դռան արձանագրության մէջ, աստուածների շարքում մի-այն նրան են ուլ զոհաբերում. «Շիվինի աստծոյ ամսին...վեց ուլ Խալդի աստծոյ (համար) թող այրուին»[140]։ Ցանախ նա պատկերվում է առյուծի վրայ կանգնած կամ գահին բազմած, որին մատնում է այծի (ուլի) եղջյուրներից բռնած մի կին՝ Ուարդուրանի դիցուհին[141]։

«Շիվինի աստծոյ ամսիւ բառակապակցությունը բնական սեպագ-րերում հանդիպում է ᴰUTU ITU ձեւով, որտեղ UTUն Արեւն է եւ գրվում է Dingir գիրանշան չորս տուղ գնտերաձեւով[142]։ Ուրարտա-գետ Ցոլհաննէս Կարապետյանը կարծիք է յայտնել, որ այս ամիսը հա-յոց Արեգի համարժէքն է[143]։ Սիմոն Հմայակյանն ուշադրություն է հրա-վիրել այն փաստի վրայ, որ այծերը ծնում են տարուայ մէջ մէկ անգամ՝ Փետրուար-Մարտ ամիսների ընթացքում։ Հետեւաբար, ուլեր կարող էին զոհուել հենց այս ժամանակամիջոցում՝ Փետրուարի վերջին եւ Մարտի սկզբին, որպէսզի Շիվինի՝ Մարտ (Արեգ) ամսուայ մէջ զոհա-բերուէին Խալդիին[144]։

Ուրեմն՝ նորածին այծը յաւագոյնս կարող է խորհրդանշել «Այծեղջիւր» համաստեղությունում նոր ծնուած Արեւին։ Գեղամայ լեռների ժայռա-պատկերներից մէկն էլ արտայայտիչ կերպով խորհրդանշում է այծի եւ Արեւի միասնությունը, որոնք երկուսն էլ կարծես ագահորեն մէկ մարմին են ներկայացնում։ Պատկերված է ճառագայթավոր Արեւ, որի չորերից մէկին ուղղահայեցն այծի պոզերից մէկն է։ Երկու պոզն էլ ե-րատատատոր են[145]։ Բնականից էլ հայոց մէջ հովիւները այծի պոզերի վրայ խաչաձեւերով տարի գոյացող օղակներով որոշում են նրա տարիքը։ Ու-րեմն, այծը նաեւ տարին խորհրդանշող արարած է։ Թերեւս, կենդանա-կերպում էլ «Այծեղջիւր» անվամբ, նշանն է առնուել այծի եղջիւրն, խոր-քեւ տարեցոյց։

Եթե ընդունում ենք, որ այն «Աշխարհացույցի» համատեքստության նշանակն է, որտեղից ժամանակին արևադարձի սըր լույս աշխարհ է եկել Արեգակը, ապա «Թադեի» անունը կարելի է ստուգաբանել, իբրև «Թադդի»՝ հայերեն «դուռ» (արև. այն) և դի (աստված) բառաձևերով: Մանավանդ, եթե հաշվի առնենք այն կարևոր հանգամանքը, որ հայոց «Արքայական տոմարում» «Աշխարհացույցին» է բաժին ընկնում Թադեր (Դեկտեմբեր) ամիսը: Այն պաշտամունքն ակնհայտ խորհրդանշական է եղել Հայկական լեռնաշխարհում, որ պարզից Տիգրան Բ. արքայի սրբոււպեան հայրից հայոց արքայն է յայտնորել հայոց Արշակ Բ-ին[146].

Թադեի անուան շուրջ ժամանակագրական նոյն եզրակացութեան է յանգել (առանց այլ համապատասխան) պատմաբան Արտակ Մովսիսեանը: Նա նկատել է, որ Վանի թագաւորութեան արձանագրութիւններում Hal վանկը գրութեան այս ձևով հանդիպում է բացառապէս Թադեի առանձին անուան մէջ, ինչը պատահական չէր կարող լինել: Վանեցի բազմանշանակ բառանշանի երևույթը հնում շարադրանք տարածուած էր միջնադարեան ձեռագրութեան մէջ, որի ժառանգորդը Վանի թագաւորութեան ձեռագրութիւնն է: Սակայն Hal վանկի ուրարտական իմաստը եղակի է և չունի նոր նշանակութիւն: Տալով է շումերական երևակայութիւն՝ համարադարձ անգամ տեսք ունեցող գաղափարագրեր: Այս հանգամանքը Մովսիսեանին յուշում է հիմք է տալիս Թադեի պաշտամունքի մէջ կարևորել երկնային լոյսի գաղափարը և յաւելել է նրան՝ Hal վանկը կարող էր «Թադ» (այն) արմատի հետ, քանի որ այդ գաղափարը հնագոյնկրներում առնչվում էր երկինքին և ամպրոպին (լոյսին): (Մի առանձնական դրոյթում հեղինակը յայտնել, որ նկատի չի ունեցել Թադեի արևային բնոյթը): Ըստ այդմ էլ, Վանի թագաւորութեան դիցարանում «Թադեին» առանձին ոչ թէ իրական անունն է եղել, այլ նրա մակդիրը՝ «Աս(տանաք)» աստուած նշանակութեամբ (ինչին հայերեն եղեռ՝ աստուած բառապաշխաւոր)[147].

Ուշագրաւ է Թադեի ձեռ Արծիքենի անունը, ուր ընդունուած Գէորգ Ջահուկեանի ստուգաբանութեամբ առկայ է հայերէն «արծիւ» արմատը[148]: Արծիւն ընդհանուր առասպելաբանութեան մէջ խորհրդանշում է Տիեզերքի վերին աշխարհը[149], իսկ ձին նոյնպէս Արևի խորհրդանիշն է, ինչպէս Թուքոփանի վկայութեամբ, հայերը ձի էին զոհաբերում Արևին[150]: Տուեալ դէպքում Թադեի ձին հարկ է համարել

նաեւ հարցիւս նշանակութեամբ։ Արծուի թեւերի վրայ, ինչպէս գիտենք, հանդերձեալ աշխարհից Լոյս Աշխարհ է երևում հեքիաթների 3րդ հերոս Արեւը։

Վանի գրեթէ բոլոր թագաւորների արձանագրութիւններում Խալդին համարւում է որպէս թագաւոր, որից նրանք ստանձնել են իրենց իշխանութիւնը։ Նա անուանւում է հայրայ Խալդին եւ պատկերւում գահին նստած[151]։ Այդպիսին է նաեւ 3րդ եղբայրը հեքիաթներում, ուր նա հօրից ժառանգում է իշխանութիւնը եւ դառնում թագաւոր։

Մուծածիրի Քելիշինեան արձանագրութեան մէջ 8 անգամ յիշատակւել է այս աստծոյ «Արդին» անուանաձեւը, այնուհետեւ 7 անգամ յիշւել «Խալդին» ձեւը։ Մենք հակւած չենք կասկածել, որ «Արդին» գրելաձեւը կարող էր յանկարծ վրիպման կամ թիւրիմացութեան արդիւնք եղած լինել։ Ընդհակառակը, շատ հաւանական է, որ «Արդինն» նոյնպէս Արեւ աստծոյ մակդիրներից մէկն է եղել՝ Արեւի կարմիր (ալ) յատկանիշն արտայայտող նշանակութեամբ («Կարմիր աստուածը»)։ Այս անուան փաղաքշական «Ալօ-Դինօ» ձեւով հանդիպում է նաեւ «Հազարան Բլբուլ կամ Ալօ-Դինօյի Նաղլը» հեքիաթում, ուր նա 3րդ եղբայրն է՝ Արեւ-Միհրը։

Խալդին ուրարտական աղբիւրներում պատկերւում էր հացերով լիցուն սեղանի առջեւ[152]։ Նրան նուիրաբերում էին նաեւ գինի։ Այդ է վկայում Սարգոն Բ-ի մի արձանագրութիւնը, ուր ասւում է, թէ նա Մուծածիրից տարել է 80 չափ ջուր վերցնող պղնձէ կաթսայ, որն Ուրարտուի արքաները Խալդի առջեւ զոհ մատուցելուց առաջ լցնում էին գինով[153]։ Իսկ հացն ու գինին միհրապաշտական դրսեւորումներից են։ Միհրի նուիրագործական պաշտամունքի մաս էր կազմում գինու կամ ջրախառն գինու հաղորդութիւնը[154]։ Միհրական ծէս պատկերող մի հարթաքանդակում ներկայացւում է Արեւ աստծոյ պատուին կազմակերպւած արարողական ճաշկերոյթ։ Սեղանակիցների առջեւ եռոտանու վրայ դրւած է խաչի տեսքով 4 փռանիկ հաց, իսկ ներկաների մատանակիցները ձեռքերին բռնել են գինու լցւած եղջիւրներ։ Ինչպէս մասնագէտներն են մեկնաբանում, նրանք այդ խմիչքից գերբնական ազդեցութիւն, ֆիզիկական ուժ, հոգու խաղաղութիւն եւ անմահութիւն էին ակնկալում, որովհետեւ իրենց աստուածն ունէր[155]։ Սրանից պարզ է դառնում, թէ ինչու Սասնայ Ծռերում միհրական հերոսների շուրթերին այնքան յաճախ է յայտնւում «Հացն ու գինին Տէր կենդանին» բանաձեւը։ «Տէր կենդանին»

հաւկայութիւնն ինքնին յուշում է կենդանութեան՝ թերևս, մահուանից յետոյ յաւիտենական գաղափարը։ «Կենդանի Ոգին էր կոչւում նաև մանիքէականութեան մէջ Միհր Եազդ. Դրա ապացոյց աստուածը, որ իջել էր Մութ Աշխարհ՝ լոյսի տարրերը փրկելու»։

«Միհրի գաւառ արձանագրութեան սկզբնամասից երեւում է, որ Շիւինի աստծոյ ամսին նախատեսուած ամենախոնարհութիւնը նախնական Վանի թագաւորութեան դիցարանի գերագոյն եռեակին՝ Խալդիին, Թէյշեբային եւ Շիւինիին է ձօնուած եղել. «Խալդի աստծուն, տիրոջը, Իշպուինի Սարդուրորդին [եւ] Մինուա Իշպուինորդին այս դարպասները կառուցեցին [եւ] սահմանեցին կարգ Շիւինի աստծոյ ամսին տօնախմբութիւն կատարել Խալդի աստծուն, Թէյշեբա աստծուն, Շիւինի աստծուն [եւ] աստուածներին բոլոր»[106]։ Ուրեմն, հարկ է այդ աստուածային եռեակի մասին 2 անգամները յատկանիշները եւս քննել առանձին-առանձին։

Վանի թագաւորութեան տարեգրութիւններից մէկում նկարագրուած է, թէ ինչպէս «Թէյշեբան այրեց Սեւանայ լճի ափագանի Ուշքիանի, Բաւմի լեռներում ապաստանած բնիկներին, երբ նրանց Սարդուրի Բ. արքան էր հետապնդում»[107]։ Եթէ Թէյշեբան սոսկ Ամպրոպամարտիկ աստուած է, եւ կայծակն է նրա զէնքը, ինչպէս աւանդաբար ընդունուած է ասել[108], ապա կայծակը զարնի զենքով, նա լաւագոյն դէպքում կ՝այրէր մէկ-երկու մարդու եւ ոչ գերիներներին։ Ուստի, տրամաբանական է կարծել, որ այրող խօսքը կերպներին՝ կերպը Արեւի Թէյշեբայի Թէ՞ սրածից այրուելու մասին պէտք է եղած լինի Արեւմտեան Հայաստանի մի մասնաւոր ծագումնաւոր յայտնի ձեռն բրոնզէ խիստ պերճախօս նախատակայում նա պատկերուած է ալ ոտքը ցլան գլխին դրած, կանգնած վիճակում, իսկ խոյանին ուսով ամբողջովին մըտած է Արեւի Թեւաւոր սկաւառակի մէջ։ Նախատակայի վերին եզրում 4 անգամ պատկերուած են առիւծի եւ ցուլի մենամարտի տեսարաններ[109]։

Իրանական աւանդութեան եւ Հռոմի միթրայական պատկերագրութեան մէջ ցլամարտիկ էր համարւում Միհրը, որն իր սրբազանին յաղթելուց յետոյ, մէջքին նստած՝ քշում է դէպի քարայր։ Ցուլն զոհաբերու փորձ է անում, բայց մէկ այլ Արեւ աստուածն Միհրին է հաղորդում ցուլին սպանելու իր կամքը։ Միհրը կատարում է հրամանը, եւ սպանուած ցուլի արիւնից առաջանում է Երկրի պտղաբերութիւնը,

խաղողի հյութը կամ գինին, մարմնից՝ բոլոր օգտակար բույսերը, բան-ջարեղենը ցորենը՝ նրա ողնուծուծից[130].

Աստղային աստվածաբանության մեջ «Ցուլի» համաստեղության ըս-պանությունը սկսում է կատարել նրանից 90° անկյան տակ գտնվող «Առյուծ» համաստեղությունը, երբ Արեգը մտնում է «Ցուլ»։ «Ցուլը» լու-սին սպանում է այն ժամանակ, երբ «Առյուծի» աստղերը հասնում են ի-րենց բարձրակետին, իսկ Արեգը մտնում է «Երկվորյակներ»։ «Ցուլը» եւ «Երկվորյակները» գարնանային Աշխի եւ Մարգի ([illegible]) ամիսներին են բաժին ընկնում այն ժամանակահատվածին, երբ երկրա-գործի՝ աշխանքը հողին պահ տված ցորենի սերմերը սկսում են ծլարձա-կել։ Այդ պատճառով էլ որմնանկարներում Միհրի սպանած ցլի պո-չին ցորենի հասկ է պատկերվում. Միհրն՝ ինքը համարվում է հացի (ցո-րենի) հովանավոր աստված[131].

Զոհաբերված ցուլին ենք տեսնում նաեւ հայկական լեռնաշխար-հում ժայռերի, աղբյուրների կամ արհեստական ավազանի համակարգերի ակունքների մոտ հանդիպող Վիշապաքարերի վրա, ուր սովորաբար, պատկերվում է ցլի կաշին՝ տարածված եւ գլուխը, որի բերանից ջրի վա-րար շիթեր են հոսում[132]։ Սա, ինչպես, Միհրի եւ «Առյուծ» համաստեղու-թյան սպանած երկնային «Ցուլ» համաստեղության համարժեքն է երկ-րի վրա, որին զոհաբերում են երկրագործները՝ խնդրելով հողի պտղաբե-րություն։ Այն «Ցուլն» է, որն Արաց ([illegible]) ամսին իր բարձրակե-տում լինելով, սպանում է «Ջրհոսին» եւ ցամաքեցնում Երկրի ջրե-րը [illegible], երբ ինքն է սպանվում, բերանից առատորեն ջուր է թափ-վում։

Միհրական այլ որմնապատկերներ արտացոլում են ցլասպանու-թյան միֆական առասպելի բոլոր մանրամասները։ Միհրը նետել է ցլան ջա-խակը եւ սուրը մխրճում է նրա մարմինը։ Պատկերի մասին անգիտանում (ա-ռեւելքում) Արեւն է, որ իր աջքեւ կանգնած ագռավի միջոցով Միհրին պատվիրում է կատարել այդ սպանությունը։ Որովայնի տակ պատկեր-ված են կարիճ եւ օձ, երկուսն էլ՝ կողք-կողքի, երկուսն էլ՝ ողջ մեջ գետնից կպրված, որ խուժում են նրանց երկնային բնույթը՝ կողք-կողքի գտնվող «Կարիճ» եւ «Օձ» համաստեղությունները, որոնք հորիզոնի ա-րեւելյան հատվածում լողանում են այն ժամանակ, երբ Արեգը «Երկ-վորյակներ» համաստեղություն է մտնում։ Դիմացից սպանվող ցլի վրա է ոտնում շունը, որ աստղային երկնքում «Փոքր Շան» համաս-տեղությունն է՝ «Ցուլ» համաստեղության ուղիղ դեմ-դիմաց՝ «Երկ-

ուսրբակներին կից։ Որմնաքանդակում նախնիկ երկուսրբակններն են պատկերուած՝ երկու խոնարհ մանկան տեսքով։ Վերին աջ անկիւնում արեւմուտքում, այսինքն՝ գլխը՝ Լուսինն է՝ կանացի կերպարանքով գլխին՝ լուսնաթագ՝ հեռանում է այդ տեսարանից[153]։ Ցերեկը, քարի վրայ յանկարծակի մի հոյակապ աստղային տառապել, որով հնեցին ապրել են եւ վարել իրենց տնտեսական գործերն ու հոգեւոր կեանքը։

Գրեթէ նոյն տեսարանն է արտայայտում մէկ այլ որմնաքանդակ՝ այն տարբերութեամբ, որ ազատ վերջին Արեւի գլխաց ատեսն է պատկերուած՝ Միհրի դաշնակիցն ու խորհրդանիշը, որն էլ իրականում աստղային երկնքում կատարում է «Յուլի» սպանութիւնը[154]։ Երկնքում Արեւի համապատասխան նշանին՝ հայտնում կարելի է տեսնել նաեւ ազատ պատկերը՝ Աննախնեից ոչ հեռու։

Այս որմնաքանդակում առաւել ուշագրաւն այն է, որ որսորդ Միհրը պատկերուած է ոչ թէ ցուլի մէջքին նստած՝ նրան սպաննելու պահը, այլ՝ կանգնած վիճակում՝ սուրը վեր պարզած՝ յաղթական դիրքով, որ ցոյց է տալիս, թէ նրա եւ ցլան մենամարտը կատարուել, աւարտուել է, եւ կենդանին հնազանդ պառկել է Միհրի ոտքերի առջեւ։ Նրա ձախ ոտքը ցուլի մէջքին է, աջը՝ գլխին։ Այս պատկերը պատմէնահամեման հաւանող նոյնութեամբ տեսնում ենք ոչ միայն վերը յիշուած քրիստոնէական բրոնզէ ճանապարհային վրայ, այլեւ Թէշշեբա աստուծոյն ներկայացնող այլ տեսարաններում եւս։ Նրա խորհրդանիշն, առանձնապէս, ընդունուած է համարել ցուլը։ Արծիւի բարձրաքանդակում գլխին կրում է ցլան եղջիւրներ, ինքն էլ՝ կանգնած ցլան վրայ, ձախ ոտքը՝ մէջքին, աջը՝ գլխին[155]։ Դարձեալ նոյն դիրքով հանդիպում է Կարմիր բլուրից (Թէյշեբաինի ամրոցից) գտնուած գօտու վրայ[156]։ Սերբար Թեփէից յայտնաբերուած բրոնզէ թիթեղում Թէշշեբան ցլան վրայ է բազմած, ձեռքին ուսեր կան (հնարաւոր է՝ ցորենի հասկեր)։ Նրան երկրպագում են 3 բարձրահասակ աստուածներ, եւ մէկ ցածրահասակ մարդկային ֆիգուր (հաւանաբար՝ մահկանացու)։ Թէշշեբայի դաշը ցլան մէջքին է, ոտքերը՝ դարձեալ գլխի ուղղութեամբ[157]։

Բիայնական Թէշշեբային, սովորաբար, անուանակցում կապում են խեթա-խուռիական վիշապամարտիկ Թեշուբի հետ, որի պաշտամունքային գլխաւոր կենտրոնը կիլիկեան Տաւրոսում տեղադրուող Կումմիա (Կումանի) քաղաքն էր[158]։ Նրա անունն, ըստ Ա. Պետրոսեանի, առնչւում

է նաև յունական Թեսևսին։ Թեշուբը պատկերւում էր ձեռքին կայծն բռնած, իսկ կայծերը՝ յունական «չարքիսուրը» առկայ էր նաև Թեսևսի պաշտամունքում։ Նա Մինոտաւրոս ցուլին բաղթում է Լաբիրինթոսում, որի արմատը չարքիսուրն է[169]։

Թեսևսը (ինչպես Թէշեբա-Միհրը) անմիջականորէն կապուած է նաև «Ցուլի համաստեղութեան հետ։ Ըստ առասպելի, Կրետէ կղզին սակնուցիայ առող ձիւնաճերմակ ցլին ուղարկել էր ծովերի աստուած Պոսէյդոնը։ Թեսևսը նրան տապալելուց յետոյ զոհաբերում է Ապոլոն (Արև) աստծուն (ինչպես Միհրն է ցուլին սպանում Արևի հրամանով)։ Դրանից յետոյ Պոսէյդոնը ցուլի պատկերը տեղադրում է կենդանակերպի համաստեղութիւնների շարքում։ Ըստ պատմահայրերէն, յունական դիցաբանութիւնը նոյն այդ ցլի հետ առաջին ժննդավայրը վերագրում էր կենդանակերպի 12 համաստեղութիւններով շրջող Հերակլէսին, որը թէպէտ սանձահարում է նրան, սակայն չի սպանում[170]։

Ցամարտիկ Թէշեբան, պայքարով «Ցուլի համաստեղութեանը բարձրին բնիկնող գարնան երկրորդ՝ Աճկի (Աղրիկ) ամիս մտած Միհր-Արեւն է, որի հակամարտութիւնն իր արտոյեանի հետ վերջանում է այն ժամանակ, երբ նա մտնում է «Երկուորեակների» (Մարերի-Մաջիս) ամիս։ Ցլի սպանութիւնը նա, ըստ առասպելի, կատարում է Արեւի հրամանով, իսկ հրամանները, սովորաբար, արձակում են նրանք, ովքեր գերազանց իշխանութեամբ կամ թագաւորական լիազօրութիւններով են օժտուած։ Վանի թագաւորութեան դիցարանում այդպիսի լիազօրութիւն ունէր Խալդի աստծու վրայ պատկերուող Թայշի-Արեւը՝ ամառային արեւադարձին մտնող և ձմեռային արեւադարձին բանող աստուածը։ Ինչպէս քիչ առաջ ասացինք, այդ աստուածն, ըստ հեղինակների արտայայտած նիւթի, թագաւոր պէտք է դառնար «Ցուլ համաստեղութեան՝ գարնան առաջին՝ Արեգ ամսին հանդերձ։ Իսկ հայոց Արեգ ամիսն, ինչպէս գիտենք, համապատասխանում է ուրարտական «Շիւինիի» ամսին։

Արդէն ասել ենք, որ Շիւինիի անունը գրելու համար Վանի թագաւորութեան արձանագրութիւններում օգտագործուել է շումերական ᴰUTU Արեւ աստծոյ գաղափարագիրը[171]։ Մասնագէտները, սովորաբար, նրա անուան ստուգաբանութիւնը կապակցում են խուռական որ-ուայ, Արեւի կամ մանուկ Արեւի (խուռիական Šimigo-Šimika, Šimegi՝ Արեւիկ ձեւից) գաղափարներին[172]։ Պատկերուել է մանկան կերպարան-

քով[173]։ Մինուա արքան նրան կոթող է ձոնել Վանայ լճի հյուսիս-արեւելեան՝ Բերկրի գետի գետաբերանի մօտ, ինչը Հմայակեանին հիմք է տւել ենթադրելու, որ աստծոյ պաշտամունքն առնչուած է եղել Վանայ լճին[174]։ Այս տեսակէտը փաստում է նաեւ հայկական ժողովրդական աւանդութեամբ։ Վանի շրջանում պատմել են, թէ Արեւը Վանայ լճի մէջ է մայր մտնում եւ լողանում, որ մաքրուած, հանգստանայ օրուայ ուղեւորութիւնից[175]։ Ցողնած Արեւը, երբ վերադառնում է իր պալատը, լողանում է զուլալ ջրի մէջ։ Յաջորդ օրը (արեւածագին) նորից ճամփայ է ընկնում[176]։ Այս տեսարանը յանգում է աշխարհի շատ ժողովուրդների մէջ տարածուած ամէն օր ծովից ծնուող եւ ծով վերադարձող Արեւի մասին անյիշելի ժամանակներից եկող դիցաբանական յղացումներին։ Ծովը դիտուել է իբրեւ ստորերկրեայք, հանդերձեալ աշխարհի կայքն է կարծել, որ նոյն կերպ է պատկերացուել նաեւ Տիեզերքին՝ ամէն օր մայրամուտին մեռնող եւ լուսաբացին յառնող Արեւ աստուածը, որի պաշտամունքը, հաւանաբար, աւելի հին ժամանակներից է գալիս, քան Մհերի մասին կրօնադիցաբանական բարդ ուսմունքը, որին միացել է խառնուել։

Աղբիւրներում ոչ մի տեղեկութիւն չկայ այն մասին, որ Վանի թագաւորութեան դիցարանն իր կազմում 3 եղբայր աստուածութիւններ է ընդգրկել, սակայն, ինչպէս համեմատական նիւթի վերլուծութիւնն է ցոյց տալիս, այդ դիցարանի գլխաւոր եռեակի յատկանիշներում վառ արտայայտուած ենք տեսնում միհրական 3 Արեւների դիցաբանութիւնը։ Նրանք էլ տարուայ եղանակային որոշակի ժամանակահատուածների տիրակալներն են։ Թէյշէբայի իշխանութիւնը, ըստ երեւոյթին, տարածուել է Կենդանաշրջանի «Ձուկ» եւ «Երկուորեակներ» համաստեղութիւններից (Ահեկի-Մարերի՝ Ապրիլ-Մայիս ամիսներից) մինչեւ «Այծեղջիւր» (Քաղոց՝ Դեկտեմբեր ամիս)։ Արփինը՝ նրա տիրոյթները սկսուել են գարնան կէսերից մինչեւ ձմռան սկիզբները։ Արծկէի յայտնի բարձրաքանդակում Թէյշէբան կանգնած է ցուլի վզից եւ գաւակից աճող կենաց ծառի երկու ճիւղերի մէջտեղում, որոնց վրայ 9 տերեւ է հաշւում։ 10րդ տերեւը նրա աջ ձեռքում է, ձախում թուր է բռնել։ Տերեւները արդեն, ամենայն հաւանականութեամբ, ժամանակային միաւորների, տուեալ դէպքում՝ ամիսների եւ համաստեղութիւնների նշանակն են։ Եթէ 10րդ ամիսը տարուայ առաջին՝ Արեգ ամսից («Խոյ» համաստեղութիւնից) հաշուելու լինենք, ապա կը համընկնի Քաղոց ամսին եւ «Այ-

ծեղջիւրի համաստեղութեանը Ռեսսի, հարց է ծագում՝ արդեօք, Թէչ-չերան 10րդ տեղեկով եւ Թեսով այս 10րդ համաստեղութեան եւ 10րդ ամսուայ հետ կապուած ինչ-որ ծիսական գործողութիւն չի՞ կատա-րուել։ Թւում է՝ այո, քանի որ Թաւրիզի մի մանրանկար հաւաքածուից յայտնի բարեխառնագիտական բնկարում Թէջլերան պատկերուած է նոյն կերպարանքով՝ ջրածեղջիւր եւ գազանթին քուեր պարունակող գլխար-կով, մի ձեռքին՝ դարձեալ տերեւ, իսկ միւսին՝ Թասի փոխարէն՝ միաեղ-ջիւր այծ[177], որպիսին ներկայանում է «Այծեղջիւրի համաստեղութիւնն աստղային երկնքի քարտէզներում։

Ինչ վերաբերում է Շուշնի-Արեգակին, ապա նրան յատկացուել է Մարտ-Արեգը՝ չիւերի եւ բնձիւղների ծաղկափթթման ամիսը, եւ նա ըն-կալուել է որպէս գարնանային տարեկալքի՝ նոր տարուայ զալստեան Ա-րեւ աստուած, ինչպէս նաեւ, անհատապէս, յայս արեւոյ ընթացքում յու-սադրային ծնունդ եւ մայրամուտին հանգչող Արեգակ։ «Մհերի դռան» արձանագրութեան վերջին տողերում ասւում է. «Իշպուինի Սարդու-րորդին եւ Մինուա Իշպուինորդին... հաստատեցին կարգ. երբ ծառերը (ճիւղերը խաղողենու) էռուեն (՟) Խալդի աստծուն երեք խոյ թող զոհա-բերուի, երեք խոյ աստուածներին բոլոր»։ Իսկ խաղողի որթի էտումը Հայաստանում, ինչպէս ճիշտ նկատել է Հմայակեանը, սկսւում է Մարտ ամսի վերջին տասնօրեակում եւ աւարտւում Ապրիլի առաջին կէսում։ Նոյն ժամանակում էլ Հին Հայաստանում նշուել է Բարեկենդանի նոր տարուայ տօնը[178]։ Ուրեմն, տրոյք կարելի է անել, որ հայոց նոր տարին սկսուել է Արեգ ամսից, երբ Արեւը մտել է «Խոյի», որտեղ գարնանային գիշերահաւասարի կէտն է գտնւում։

Բնայմական 3 Արեւ աստուածութիւնների մէջ գերագոյն իշխանու-թիւնը պատկանել է յատկապէս որպէս զահակալ պատկերուող Թագիւրին՝ ակնարկում հերոսին, ում յատկանիշները համընկնում են աստուածակա-կան 3րդ հերոսի կերպարին, որը համեմատել ալխարհ իմեհով, քան հերխաթների աստուածարան նուէթի, փրկում է կենաց ծառը տիեզերական քաշքշող ուժերից եւ վճռական դերակատարութիւն ունենում ժամա-նակի կարգաւորման մէջ։ Արդէն ասել ենք, որ Թաւարածրում 3րդ հե-րոս Արեւը 2 անգամ հանդիպում է Լուսին աստուածուհուն եւ փրկում նրան Վիշապից։ Առաջին հանդիպումը տեղի է ունենում «Կոյս» համա-ստեղութիւնում, երբ Լուսինը հանում է Լոյս Աշխարհ, իսկ ինքը մտնում Մութ Աշխարհում։ Երկրորդ հանդիպումը տեղի է ունենում առաջինից անմիջապէս յետոյ՝ «Կշեռք» համաստեղութիւնում, երբ պատահում է

Վիշապին («Վարդն» համաստեղութեանը) զոհաբերութեան տարուայ աղջկան եւ հրեշին սպանելով, բայց ամէնուր քաղաքի ջրի ակը։ Առաջին համեմատումը Լուսնի հետ կապւում է ամառան վերջին՝ Նաւասարդ (Օգոստոս) ամսի, երկրորդը՝ աշնան առաջին՝ Հոռի (Սեպտեմբեր) ամսի հետ։ Լոռ տառապեցի (Հերթամի), Արեւի ամուսնութիւնը տեղի է ունենում Վիշապի նշանակ Լուսնի հետ՝ Լոյս Աշխարհ գուցէ պայող քաղաք Ողբանի, որպէսզի խնամուն, թէ Վանի թագաւորութեան մ՚ր գիտուհան է համապատասխանում Վիշապը, պէտք է զուգահեռներ փնտրենք նրա եւ հնդեվրոպական աշխարհի Արեւ Յալցքի զուգակցի՝ Ուրարտական պանթեոնների մէջեւ կա՞ն այսպիսիք։ Պարզւում է՝ այո։ Ուրարտականին Վանի թագաւորութեան պատկերագրութեան մէջ ներկայանում է որպէս պտղաբերութեան գիտուհի, յաճախ՝ գահին նստած եւ ձեռքին ճիւղ բռնած թագուհի։ Նրա երկար զգեստ եւ գլխաշորը։ Նա այդ տեսքով Յալցքին համեմատելի է պատկերուած Սերբար Թեփէից յայտնաբերուած բրոնզէ 2 թիթեղների վրայ։ Երկու տեսարանն էլ ատացուցիչ երկնքի ֆոնի վրայ են։ Ըստ որում, աստղերն ընդգրկւում են պատկերի ամբողջ խարին պլանը։ Նոյնպիսի տեսք ունի (ձեռքին՝ ճիւղ, գահի որ հիւգի համար ձեռքի մատում յատուկ տեղը է բացուած եղել) նաեւ Դաշտաբէյ ամրոցից գտնուած Ուրարտական բրոնզէ արձանիկը[179]։

Հայոց մէջ Լուսինն, առանձնապէս, բուսականութեան հետ է առնչուել, ինչպէս այդ մասին վկայում է Շիրակացին. «Այս զօտին, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անճրեաց եւ սնուցիչ բուսատանաց»[180]։ Հայ հին բժշկարաններում եւ Աղթարքի մէջ էլ նշւում է. «Տերեւն զհետ Լուսնին ընթանայ»[181], ինչն ամբողջ բուսականութեան անն է կապում Լուսնի հետ։ Բայց առաւել ուշագրաւն այն է, որ Ուրարտականների արուեստին նկարագրութիւնը լիովին համընկնում է հայ միջնադարեան աղթարական պատկերների չարքում տեղաւորուած Վիշապ համաստեղութեան կողմին։ Նա եւս երկար զգեստով է եւ գլխաշորով, նստած է ծաղկապատին եւ երկու ձեռքին երկու ճիւղ է բռնել[182], ինչը ցոյց է տալիս, որ Վիշապը պտղաբերութեան հետ է կապուած, ինչպէս այդ մասին յայտնում է նաեւ Շիրակացին. «Վոյսն...երէ տեսանիցես զնոսա պայծառս, եւ այլանման, եւ մեծամս, գիտես թէ առաջնորդիթիւն Աստուծոյ գթացեալ է ի վերայ երկրի...լինի...երկրի լիութիւն եւ պտղոց առատութիւն»[183]։

Եվս մի հետաքրքիր տարր ցույց է տալիս, որ Ուարուբաինին և նրա զուգակից Խալդին Մեռնող և Հառնող աստուածութիւններ են, իբրև Արև և Լուսին. բիայնական աղբիւրներում նրանք երկուսն էլ պատկերւում են հասակային տարբեր տարիքներում. Խալդին, ինչպէս վերևում տեսանք՝ նորաբույս մորուքով երիտասարդ (պատանի) և հասուն այր (ծերունի), իսկ Ուարուբաինին՝ մանկամարդ և հասուն կին՝ Խալդի ընկերակցութեամբ[184]։ Ժողովրդական պատկերացումներում էլ Լուսինն, ըստ իր նուազման և աճման փուլերի, պարբերաբար մեռնում և յարութիւն է առնում[185]։

Ուշագրավ է, որ իրանցիները ձեռքին Բարսմա սրբազան ծառի ճյուղ բռնած են պատկերել իրենց Արդուի Սուրայ Անահիտ աստուածուհուն[186], որը հայոց մէջ Մայր աստուածուհու համարում ունէր, և որին, ըստ Ագաթանգեղոսի, հայերը Թարմ ոստեր էին նուիրաբերում[187]։ Հայկական մի աւանդութիւն «Մեծամայրը» (Մայր աստուածուհուն) ուղղակիորէն «Լուսին» է կոչում[188]։

Այս ամէնը մեզ հիմք է տալիս կարծելու, որ Ուարուբաինի դիցուհու ատրիբուտը «Վիշապն» է եղել, որը մարմնաւորել է Լուսնի աստուածուհուն. Նրան համընկնում է հայոց Նաւասարդ ամիսը, ինչն ըստ Շիրակացու, Հայկի դուստրերից մէկի անունն էր[189]։ Ուարուբաինի-«Վիշապը», որին Զրոյ հերոսը հանդիպում է Երկրի ընդերքում՝ Անդունդում և միևնոյն ժամանակ տիեզերական տարածութեան մէջ, երկրի Որովայնն է (Ուարուբաինը)՝ արգանդը, պորտը, որից կախուած է «Աստծոյ ողորմութիւնը, Երկրի լիութիւնն ու պտուղների առատութիւնը»։

Բայց Վանի Թագաւորութեան դիցարանում եղել է մէկ այլ դիցուհի եւս, որի անունն արձանագրութիւններում աքքադական Լուսին աստծոյ անունը նշանակող ᴰSIN գաղափարագրով է գրուել։ Այդ դիցուհին Շելարդին է (Սելարդի), որի խորհրդանիշը բիայնական աղբիւրներում կիսալուսինն է[190]։

Հայկական աղթարական պատկերանշանների մէջ, ինչպէս վերևում տեսանք, կիսալուսիններ կցած աղէկայ կերպարանք կայ «Վիշապ»-ի համատեղութեան տեղում, որը խորհրդանշում է «Վիշապին» «Վիշապը» համապատասխանում է հայոց Հոռի ամսին, որը նոյնպէս Հայկի դուստրերից էր՝ ըստ Շիրակացու։ Այս Լուսնի նշանակ «Վիշապ»-ին է պատկանում կեն-

գանաչըլքանում նրան յաջորդող «Վարքն» համաստեղութիւնը, որն ա-ռասպելում Վիշապ է կոչւում և փակել է ջրերի ակունքները: Այն «Մհե-րի դուռն» առասպելաբանական բնակավայր կարող է համապատասխա-նել Կուռոա աստուածութեանը Կուհուայի և Տիրպարդի («Հմշկոցի» քոունի) միջև կայ անդրյա գործառոյթներով Աթրինի աստուածութիւ-նը, հետաւոր է՝ աստղային երկնքում «Հմշկոցի» և «Վարքնի» հարևա-նութեամբ գտնուող կենտրոնական համաստեղութիւնը:

Բիայնական աղբիւրներում Կուռուային ձօնուած են եղել ջրային ա-ւազաններ, աղբիւրներ Վանայ լճի արևելեան ափի մօտ՝ Մոխառա-նում (Արխուկի քաղաքի մօտ) և Քրիթու երկրում: Լճի հիւսիսային ա-փին՝ Մենափահանքի մօտ մեզոլ է մի արձանագիր, որը ձօնուած է ե-ղել Կուռուային և Թալդինի մխամաման: Արտուարերդի արձանագ-րութիւնում Արճէշից հիւսիս-արևելք նշվելու վերաստահուած է «Կուռու-այի աղբիւրը»[101]: Այստեղից հետևում է, որ Կուռուայի պաշտամունքն առնչուել է ջրի, աղբիւրների, որի պահապանն ընդհանուր առասպելա-բանութեան մէջ, ուանդաբար, Վիշապն է: Այդպէս է նաև հայկական հաւատալիքներում: Օրինակ՝ Մուշում, Արաշկերտում ջրաբ չկններու մա-մանակ գործածում էին «Վիշապն ի ջրգի ջրի վրիմն առանք»[102]: Այդ Վի-շապը պէտք է որ նաև բիայնական Կուռուան եղած լինի: Յայտնի է, որ Վանի Թագաւորներից Մինուան պատմում է մի պատերական ջրհորի (աղ-բիւրի) կառուցման մասին Ուրմիա լճի հարաւ-արևելեան ափից արև-ելք գտնուող ժայռի վրայ փորագրուած արձանագրութիւնում: Այդ ժայռի մօտ արմէ՞ ել հոսում է մի աղբիւր, որին տեղացիները «Աժդահա բուլաղի» են ասում: Հմայակեանը կարծիք է յայտնել, որ այդ անունը «Աժդահակի աղբիւր» նշանակութիւնը կարող է ունեցած լինել[103]: Իսկ «Աժդահակ», ինչպէս Խորենացին է ասում, մեր լեզուով «Վիշապ» է նշանակում, քանի որ Հայոց Տիգրան արքայից պարտուած Աժդահակի սերունդներին, որոնց նա տարագրել էր Գողթն գաւառ (Մասիս սարի հարաւային լանջի մօտ), Գողթան երգիչները «Վիշապազունքներ» են կո-չում[104]: Պատմականօրէն արդար է անդրադառնալ նաև բիայնական ար-ձանագրութիւններից յայտնի Կուարգանի երկիրը և համանուն ցեղա-նունը, որն, ըստ Հմայակեանի, պէտք է որ «Վիշապազուն» հայերէն բա-ռի տարբերակը եղած լինի[105]:

Այսպիսով, տեսնում ենք, որ Կուսական Վիշապն է՝ Ջրերի՝ ստորերկրյայից, Հանուրբար՝ Տիեզերքից բխող աղբյուրների (քանի որ Անստանեից անմիջապէս Տիեզերքի տեսարանն է բացւում) պահապանը։ Այն լիովին համապատասխանում է «Վարին» Համաստեղութեանը, իսկ վերջինիս բաժին է ընկնում Հայոց Սահմի ամիսը։ Տեսակէտներ են եղել, որ «Մահմեհին վախի, երկիւղի խնամն է արտացոլում եւ հայերենում պահպանուել է «ամեհակեր» բառի մէջ[106]։ Այդ վախն ու երկիւղն, իրոք, համընկնում է Վիշապի անհաղթ բնոյթին, Վիշապ, որը փակում է Ջրերի ակունքները եւ մարդկանց ծարավի մատնում։ Նրան զոհաբերութեան տարուայ «Կշեռքի» Համաստեղութեան կարգ Լուսնի նշանակն է։ Այդ Լուսինն են տանում Վիշապին զոհաբերելու, բայց Արեւն իր Թշնամուն սպանելով, ազատում է նրան։ Միեւնոյն ժամանակ կարելի է ասել, որ «Վարդի» Լուսինը խորհրդանշել է լուսնային արագիլն՝ իր ժամանակի միաւորներով, իսկ «Կշեռքի» Լուսինը ցոյց է տալիս աշնանային օրահաւասարը, երբ արեւադարձային տարին գրեթէ կէս է լինում «Վարդի Համաստեղութիւնից» տարեսկզբից հաշուած։

Դիցարանական Արեւ աստուածը (Արգ Հերոսը) ձմեռային արեւադարձին «Այծեղջիւր» Համաստեղութիւնում Լոյս Աշխարհ եկելով, մտնում է կենդանաշրջանի գօտու յաջորդ՝ «Ջրհոսի» Համաստեղութիւն, որը համապատասխանում է Հայոց Արաց (Յունուար) ամսին։ Ջահուկեանը հաստատել է համարել Արացի եւ Վանի Թագաւորութեան Արածա դիցանուան համապատասխանութիւնը[107], իսկ Նիկողայոս Ծարութիւնեանի կարծիքով, Արածան կապուած է Արեւելեան Եփրատի ստորակեան Արածանի եւ հայկական Արածանի անունների հետ[108]։ Հմայակեանը ենթադրել է, որ Արածան Արածանի գետի աստուածն է եղել[109]։ «Ջրհոսի» Համաստեղութիւնն, իրոք, ինչպէս վերեւում տեսանք, մարմնաւորել է Տիգրիս եւ Եփրատ գետերը, որոնցից վերջինը շումերական Գիլգամէշ էպոսում Դ կում անելով, խմում-զամաքեցնում է «երկնային ցուլը» («Ցուլի» Համաստեղութիւնը)։

Նիկողայոս Ծարութիւնեանը պարզել է, որ Արածա դիցանունից մի ամբողջ շարք աշխարհագրական անուններ են կազմուած եղել Վանի Թագաւորութեան արձանագրութիւններից յայտնի Արացու, Սանգիբուտու երկրամասերում, ինչպէս նաեւ Տուարածի՝ պատմական Հայաստանի Տուարածատափ (Տաւարածի՝ Հավուց դաշտ) գաւառի անուան մէջ։ Պաշտպանելով լեզուաբան Գրիգոր Ղափանցեանի տեսակէտն այն մա-

ւթին, որ Արամա դիցանուան մէջ տակայ է Հայերէն հարանելը բացը[300], նա եզրակացրել է, որ խոսքն անասնապահութեան հովանաւոր աստուծոյ մասին պէտք է եղած լինի: «Տուարածաստուած» անունն էլ փաստում է այդ տարածքում անասնապահութեան զարգացած լինելու մասին: Այդ է վկայում նաև Արգիշտի Ա-ի Խորխորեան արձանագրութիւնը, ուր նա պատմում է, թէ ինչ առաւելի քանակութեամբ խոշոր եւ մանր եղջերաւոր անասուններ է քշել «Տուարածոյ» դաշտից: Զարգացած անասնապահական շրջանների մէջ էին մտնում Արամանիի վերին գնահատարանի մէջ՝ Արագու եւ Սանդիրուստի սեղմանքները: Սարգոն Բ-ն արձանագրել է Սանդիրուստի մարզի Ուլթուս քաղաքի մերձակայ դաշտերի խոտի փարթամ աճի մասին, որը չէր զարգուած ոչ ամռանը, ոչ էլ ձմռանը[301]:

Մեծ հաւանականութեամբ պէտք է ենթադրել, որ Արամանի գետի հովանաւոր Արամա աստուածն ինքը հովիւ է պատկերացուել, ինչը համընկնում է նաև միջրական աստուածի հերոսութիւնից ստանալում ներթին, բառ որի, Յոր հերոսը Լոյս Աշխարհ եղնիկով (Աստղիկ համաստեղութիւնում) հիւրընկալւում է հովուի մոտ: Այդ հովիւը «Աստղիկբրին յաջորդող «Զրհոս» համաստեղութեան Արամա աստուածն է: Որորդ հերոսը հովուի ոչխարներից մէկի փորի կաշին գլխին քաշելով, քօղարկուած, քայլել է ձևանում գրանով ցողը տալով, թէ դեռ մնում է, իբրեւ մազոտ-սոգ-հայրապաշտպանուած Արեգակ, քանի որ ընդհանուր աստղաբաշխական մէջ մազաթափութիւնը համապատասխան է գիտում մահուանը[302], իսկ Արեւի ճառագայթները նրա մազերն են: Աստուածաշնչում այդպէս Սամսոնն է ուժազրկւում այն ժամանակ, երբ Դալիլան կտրում է նրա մազերը[303], իսկ Սամսոնի անունն ուսումնասիրողները ծագած են համարում հրէական Šemeš-«արեւ» բառից[304]: Ուրարտական արձանագրութիւններում վարակի աստուածութեամբ էր պատկերւում Տիւխնի-Արեգակը[305], որի համաստեղութիւնը «Խոյն» է, իսկ ամիսն՝ Արեգը:

Իրականում այդպէս է նաև բնութեան մէջ. մինչև գարնանամուտ՝ «Խոյ» համաստեղութիւն հասնելը, Արեւը ձմռանը մի տեսակ եւ կայ, եւ չկայ զրութեան մէջ է: Ձմռանը նա թէեւ չողարձակում է, բայց չունի ձեռ իր իրական զօրութիւնը՝ կենսարար, պտղաբերիչ ուժն ու ջերմութիւնը: Նա մնում ոչխարին («Խոյին») է մարմնաւորում, ինչպէս Յոր

Հերոս Արեւը, որ ոչխարի փորի կաշին է գլխին կրում։ Հենց համի «Խոյ» համաստեղությանը՝ կը յաղթերդուի, ինչպես հեքիաթներում է գլխին հագնում ոչխարի կաշին։ Նրան արդէն սկսում են նմանեցնել ոչ միայն մա-գաղութի, այլ նաեւ Մեծարանի հերոսի, որը հանդերձյալ աշխարհում սիրահարներ գործելով, մարդկանց է վերադարձնել կյանքն ու սիրել-բանական կարգուկանոնը։ Հետաքրքիր է, որ յունական դիցարանութեան մեջ Ամոնում ոչխարի գլուխ է իր վրայ կրում Զեւսը, որը նույն այդ բնա-կավայրում պաշտվում էր որպես հովիվ աստված։ Այդ տեսքով նա գիտա-կոչվում է դասրս դալիս որդուն՝ Հերակլեսին, որը նոր էր կատարել իր 11րդ սխրանքը[206], այսինքն՝ Արեւուղում դուրս էր եկել Կենդանակերպի 11րդ՝ «Ջրհոս» համաստեղությունից եւ մտել «Խոյին» նախորդող «Ձկներ»։

Արամյան «Մհերի դռան» արձանագրության մեջ հիշատակված 19րդ աստվածությունն է, որին անմիջապես հաջորդում է 20րդ Զիուկունի աստվածը։ Զահուկեանը նրա անունը համադրել է բնիկ հայերէն «ձու-կ(ու)ն» հոլովային ձեւին[207], ինչն ապացուցում է նաեւ Կենդանակերպի վերջին՝ 12րդ՝ «Ձկներ» համաստեղության հին հայկական «Ձուկն» ան-վանումներով։ «Ձուկնը» անմիջապես հաջորդում է «Ջրհոսին», ինչպես Զիուկունին՝ Արամային։ Փաստորէն, ամէն ինչ, ինչպես տեսում ենք, հա-մընկնում է միլիմետրերի ճշտութեամբ՝ հեքիաթի նման՝ աստղային եր-կնքի պատկերին, աստղային երկինքն՝ առասպելին, առասպելի նման՝ Վանի թագավորութեան աստվածացանկին, աստվածացանկը՝ տոմա-րին՝ բառ հերթականութեամբ։ Ցամենայն դէպս, այդ զուգադրություն-ները անկարելի են առանց Կենդանակերպի «Այծեղջիւր» համաստեղությու-նից մինչեւ «Խոյն» ընկած հատուածը՝ «Այծեղջիւր»-Բաղդ-Բագդի, «Ջրհոս»-Արամանի-Արամա, «Ձուկն»-Զիուկունի-Մահեկի, «Խոյ»-Եհիո-նի (Արեւ)-Արեգ։ Այս համադրանքն, ինչ խոսք, հայոց տոմարի՝ խորա-պես տեղական երեւույթ լինելու, ծագումնաբանորէն աստղային երկնքի բաժանման սկզբնական ժամանակներին պատկանելու ցայտուն վկայու-թյունն է։

Միանգամայն հետաքրքիր է, որ Ձուկն (Զիուկունի) աստվածը կիսով չափ ձկնային եւ կիսով չափ մարդկային կերպարանքով է պատկերաց-ւում, ինչպես միջագետքեան Դագոնը, որի անունն աքքադերէնում «ձուկ» է նշանակել[208] եւ համահունչ է «Զիուկունի-Ձուկնին»։ Դագոնն ասորական Դերկետո դիցուհու ամուսինն էր[209]։ Դերկետոն Միջագետ-

քում և Քանանում յայտնի է եղել Աթարգատիս, Ատար, Ատարէթ, իսկ Ցուծաստանում Ատարոտ անուններով[210], որ համապատասխանում է Հայոց Աստղիկ դիցուհուն։ Աստղիկն, աւանդութեան համաձայն, ամէն գիշեր լողանում էր Արածանու ջրերի մէջ, իսկ պատանիները նրա մերկութիւնը տեսնելու համար կրակներ էին վառում Տարոնի Արտերտ գիւղի մօտ գտնուող Դաղոնաց բլուրների վրայ[211]։ Դագոնի անունով սար է կոչուել նաև Մուշի մօտ[212], այսինքն՝ դարձեալ Արածանիի հովտում։

Դագոնը փղշտացիների (պաղեստինցիների) մէջ յայտնի է եղել Դագան, իսկ քաղդէացիների մէջ՝ Օղանէս անուններով։ Փիլոն Բիբլոսացու հաղորդմամբ, նա վերջիններիս և փիւնիկեցիներին հողագործութիւն, մանաւանդապէս՝ հացագործութիւն է սովորեցրել[213]։ Դեականեանը ենթադրել է, որ Դագոնը հասկի աստուած է եղել[214]։ Բերոսոսը վկայել է նրա չուամէրատաքրաղական յուանականացուած Օանէս անուանմամբ՝ որպէս կէս-ձուկ նախամարդ, որը ջրից դուրս գալով, գրութիւն, գիտութիւն, զանազան արհեստներ և երկրագործութիւն է սովորեցրել։ Նոյնպիսի մշակութաբեր գործունէութիւն է վերագրուել նաև Օղականին, որին աքքադացիները Միջին Եփրատի հովտում բնակուողների հովանաւոր աստուածն են համարել[215]։

Ամէն ինչից պարզ երեւում է, որ Դագոն-Ջրուկուանի-Զուկնը Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Եփրատ գետի շրջակայ տարածքները բնակեցրած հնագոյն ժողովուրդների գիտակցութեան մէջ ամրագրած է եղել իբրեւ գիտութեան (իմաստութեան), արհեստագործութեան եւ երկրագործութեան աստուած, որը հնդեւրոպական գերակատարութիւն է ունեցել մարդկութեան զարգացման ճանապարհին։ Թերեւս, նրա անունից սկիզբ է առած համարել նաև ռուսերէն Diakon բառը, որ ռուսական ուղղափառ եկեղեցու աստիճանաւորի կոչում է, իսկ հնում հաւանական է, որ քրմութեան է վերագրուած եղել։

Արեւուղու վրայ հանդիպու՞մ է արդեօք, առասպելական նոյն հերոսը Ջրուկուանի-Զուկենին։ Կարելի է ենթադրել՝ այո։ «Անմահական ծնունդը» հեքիաթում (եւ այլուր) նա պատկերուած է մանում արհեստագործի (ատկերչի, գերձակի եւն.) մօտ՝ Հովուեխ (Արածանի ատմուն) բաժանուելուց յետոյ Ձիւղ է, այս հեքիաթում այդ արհեստագործի ձկնային կերպարանքի մասին խօսք չկայ, սակայն «Ծովէ Զուկը» վերնագրով մէկ այլ

հեքիաթում[206] նա միանգամայն Ձուկ է։ Այս հեքիաթում էլ պատմւում է կուրացած Թագաւոր հօր մասին, որի աչքերը կարող է բուժել միմիայն Ոսկէ Ձկան արիւնը[207]։ Ձկնորսները երկար փնտրելուց յետոյ ի վերջոյ բռնում են նրան եւ ուզում են մորթել։ Թագաւորի որդին չի թողնում եւ ազատ է արձակում Ձկանը։ Այդ արարքի համար հայրը նրան վտա-րում է իր Թագաւորութիւնից։ Տղային ճանապարհին ընկերանում է մի անծանօթ եւ սատար աշխարհում օգնում, որ տիրանայ հարստութեան ու «Հուրի-Փարի» (հրեղէն հրեշտակ) աղջկայ սիրուն։ Վերջապէս բա-ցայայտւում է, որ ինքը նոյն այն Ոսկէ Ձուկն է, որի կեանքը փրկել Թա-գաւորի տղան։ Ապա տալիս է իր Թեփուկներից մէկը, որով էլ հետոյ բուժւում է հօր կուրացած աչքերը։ Հայրը գահը զիջում է որդուն եւ տօ-նում նրա հարսանիքը «Հուրի-Փարի» աղջկայ հետ։

Այսպէս, ինչպէս տեսնում ենք, կոյր Թագաւորի աչքերի բացման ոսկէ խնձորին փոխարինելու է եկել Ոսկէ Ձկան Թեփուկը։ Ուրեմն, ստացւում է, որ «Ձուկին» համաստեղութիւնն Արեւմուտքն այն կէտն է, ուր պէտք է հանդիպեն իրար, կուրացած ժամանակի աստուածն ու նրա որդի Միհր-Արեւը, որ հօր աչքերի դեղն է բերում։

«Ձուկին» համաստեղութեանը բաժին է ընկնում հայոց Մահեկի ամի-սը (Փետրուար), որի 13ի լոյս 14ի գիշերը ժողովրդի մէջ տօնւում է հը-նում Միհրին ձօնուած Տեառնընդառաջի տօնը՝ խարոյկների շքահան-դէսով, որոնք աւելի ուշ վառւում էին նաեւ եկեղեցիների բակերում։ Այս տօնը, որ հիմքով խորապէս հեթանոսական է, եւ ոչ մի կապ չունի քրիստոնէական աւանդոյթների հետ, այնքան արմատացած է եղել ժո-ղովրդի մէջ, որ եկեղեցին փորձել է գտնել ինչ-որ կերպ քրիստոնէական բացատրութիւններ տալու դրա բովանդակութեան համար։ Ըստ եկեղե-ցու պաշտօնական մեկնաբանութեան, տօնի «Տեառնընդառաջ» անունը կապուած է Քրիստոսի կենսագրութեան հետ։ Քրիստոսին, ծնունդից 40րդ օրը, ծնողները տանում են տաճար, որտեղ նրան ընդառաջ է գա-լիս խոր ծերութեան հասած եւ Տիրոջ գալստեանը սպասող Սիմէոն ծե-րունին, որտեղից էլ տօնը ստանում է իր անունը՝ Տիրոջն ընդառաջ[208]։

Ակներեւաբար, իհարկէ, քրիստոնէական այդ աւանդութեան ծերունին հին ժամանակի աստուածն է եղել, իսկ Տէրը՝ Միհր-Արեւը։ Հենց Փետ-րուար ամսի հայկական «Մահեկին» անուան մէջ էլ Միհրի անունն է ըն-կած։ Այսպիսի կարծիք է յայտնել նաեւ Ալիշանը, որի դիտողութեամբ, հայոց տօմարը Արեւի Արեգ ամսով սկսուելու դէպքում պէտք է վերջա-ցած լինէր իր մէջ իրանական «Միհր-Լուսին» արմատը կրող Մահե-

կերով[229]։ Միհրի իրանական (պեհլավական) աղբյուրներում «Մահ» էր ան-ուանում, իսկ Լուսին եւ համարժէք դիտում Արեւին[230]։ Իսկ Տեառն-ընդառաջի տօնը գրեթէ նոյնական ձեւերով տօնում է նաեւ պարսից մէջ «Չհարշամբէ Սուրի» անունով[231]։ Հետաքրքիր է, որ ըստ Շիրակա-ցու, Մահեկի ամսին համարժէք «Ջիներ» համաստեղութիւնը պարսիկ-ներին յայտնի է եղել «Մահիկ» անունով[232]։

Տեառնընդառաջը միհրական Արեւի վերադարձի տօնն էր, երբ սիրե-լի աստուածը վերադառնում էր գիշերով՝ թերեւս, Լուսնի կերպարան-քով ծպտուած[233]։ Վերադառնում էր, որպէս տիեզերական օրէնքը՝ ժա-մանակի կարգաւորուածութիւնը վերահաստատած, սփրագրող հերոս-թեռում էր խաւարի եւ ժամանակի ներ, կուրացած աստղոյ աչքերի բա-ցառումը եւ աղջամուղջում մոռացուող գարնանամուտը։ Գարնանը բնու-թիւնն Արեւի նման յարութիւն է առնում. կեանքը վերստին մտնում է իր բնականոն հունի մէջ, եւ մարդիկ իրենց բախտաւորուած են զգում։

Ցաւոք, պատմութիւնը չի պահպանել աստղային այս հրաշալի ա-ռասպելը հիւսած ցրմերի անունները, սակայն աւելի զարմ կարող ենք ա-սել, որ դա արտայայտել են ոչ ուշ, քան մեզանից շուրջ 4000 տարի ա-ռաջուայ արացուցային իրողութիւնները, երբ արեւադարձային տարին սկսուած է համարուել գարնանային օրահաւասարի կէտից, իսկ այդ կէ-տը գտնուել է «Խոյ» համաստեղութիւնում։ Շատ բան է փոխուել պատ-մութեան մէջ այս ընթացքում, եւ շատ յիշատակներ են ջնջուել մարդ-կային յիշողութիւնից, սակայն աստղային երկինքը մնացել է անփո-փոխ։ Եւ քանի դեռ փայլում են երկնքի հիւսիսային եւ հարաւային կի-սագնդերի, ինչպէս նաեւ կենդանակերպային համաստեղութիւնների ի-րենց պայծառ կամ թոյլ աստղերով, նրանք միշտ պէտք յիշեցնեն կը տան այն հեռաւոր ժամանակները, երբ Արեւն աստուած էր, իսկ մարդկային բանաստեղծական միտքը հեքիաթ էր հիւսում Արեւուղու մասին՝ իր կեանքն էլ համարելով այդ հեքիաթի բաղկացուցիչ մասը։

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 E. M. Meletinskii, "Proiskhojdenie Skazok O Mladshem Brate I Ikh Rol V Formirovanii Skazochnogo Epos," *Geroi Volshebnoi Skazki* (Կրտսեր եղբօր հեքիաթների ծագումը եւ նրանց դերը հեքիաթային էպոսի - Վիպերգութեան - Ձեւաւորման Մէջ, Կախարդական Հեքիաթների Հերոսը). Մոսկուա, 1958, էջ 64-180.

2 Գալուստ Մարտիրոսյան, «Որոշ Ազդակներ Կամ Արևմտյան Դիցաբանությունից Հայ Ժ. Օ-րար Բանաւոր Աւանդութեան», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հտ. ԻԲ., Բէյ-րութ, 2002, էջ 60-79.

3 Ներսէս Շնորհալի, Բանք Չափաւ, Վենետիկ-Ս. Ղազար, 1830, էջ 554.

4 E. Tsoren, *Lunnii Bog* (Լուսնի Աստված), Մոսկվա, 1976, էջ 24-26.

5 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. I, խմբ. Յովսէփ Օրբելի, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1959, էջ 27.

6 Նույն, էջ 42.

7 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. II, խմբ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյան, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1959, էջ 23.

8 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. V, խմբ. Մ. Գ. Աբրահամյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966, էջ 16.

9 Նույն, էջ 415.

10 Նույն, էջ 28.

11 Նույն, էջ 83.

12 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. VII, խմբ. Մ. Գ. Աբրահամյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, էջ 586.

13 Նույն, էջ 11.

14 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. XII, խմբ. Մ. Ա. Գևորգյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, էջ 62.

15 A. Aarne, S. Thompson, *The Types of the Folktale*, Helsinki, 1961, էջ 90-93, 195-197.

16 *Persidskie Narodnie Skazki*, sostavitel M. N. Osmanov, (Պարսկական ժողովրդական հեքիաթներ, կազմ. Մ. Ն. Օսմանով), Մոսկվա, 1987, էջ 56.

17 *Mifi Narodov Miro*, T.1 (Աշխարհի ժողովուրդների առասպելները), Մոսկվա, 1991, էջ 372, 599.

18 Կարապետ Մելիք-Օհանջանյան, Միհրա-Միհրը «Սասնայ Ծռեր» Էպոսում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1946, էջ 289-305.

19 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը («Թարգմ. Ծանոթա-գրութեամբ»), Երևան, 1944, էջ 224.

20 *Persidskie Narodnie*, էջ 53, 109.

21 M. Drezden, "Mifologia Drevnogo Irana," *Mifologii Drevnogo Mira* (Հին Իրանի Դիցաբանությունը, Հին Աշխարհի Դիցաբանություն), Մոսկվա, 1977, էջ 344-45.

22 *Mifi Narodov*, T. 2, Մոսկվա, 1992, էջ 539.

23 Հերոդոտոս, Պատմություն Ինը Գրքից, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, էջ 223-224.

24 Նույն, էջ 224-225.

25 D. S. Raevski, *Ocherki Ideologii Skifo-Sakskikh Plemen* (Ուրվագծեր Սկյութա-սակական Ցեղերի Գաղափարախոսության), Մոսկվա, 1977, էջ 115-119.

26 Մելիք-Օհանջանյան, էջ 274-275, 269-270; *Mifi Narodov*, T. 2, էջ 157.

27 B. Van-Der-Varden, *Probujdayushayasia Nauka II. Rojdenie Astronomii* (Արթնացող Գիտություն II. Աստղագիտության Ծնունդը), Մոսկվա, 1991, էջ 163.

28 Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան Աղանդների Պատմական և Քաղաքական Պատմությունից, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, էջ 18.

29 Հ. Ղևոնդ Ալիշան, Հին Հավատք կամ Հեթանոսական Կրոնք Հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 92-93.

30 R. Greivs, *Mifi Drevnei Greizii* (Հին Հունաստանի Առասպելները), Մոսկվա, 1992, էջ 150-151.

31 B. Van-Der-Varden, էջ 18-19, 134-135.

32 Բենիկ Թումանյան, Հայ Աստղագիտության Պատմություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1964, էջ 232-235.

33 Նույն, էջ 236; նաև՝ Հուշեր, Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1979, էջ 20.

34 Առաջին փուլը կոչվում է «Միացություն» (երբ Լուսինն ու Արեգակը գտնվում են դրեթե նույն ուղղությամբ մեր և միմյանց համեմատությամբ գտնվում են միասին)։ Երկրորդ փուլը «Մեկնությունն» է (Լուսնի փուլը 1-2 օրական է և Արեգակից հեռացած է 1 ժամով, այսինքն՝ աղեղնային 1 աստիճանով)։ Երրորդ փուլը «Մագաղաթությունն» է (Լուսնի փուլը 3-4 օրական է և Արեգակից հեռացած է 15 աստիճանով)։ Չորրորդ փուլը «Մահիկաձևությունն» է (Լուսինը երևում է նեղ մանգաղի տեսքով, 5-6 օրական է և Արեգակից հեռացած է 60 աստիճանով)։ Հինգերորդ փուլը «Կիսալուսնայինն» է (Լուսնի և Արեգակի անկյունային հեռավորությունը 90 աստիճան է)։ Տարբերվում են «Կիսալուսնային աստղերի» և «Կիսալուսնային երկրորդ» փուլերը, որոնք համաժամանակյա տեսանելիությամբ՝ Լուսնի առաջին և վերջին քառորդներն են, երբ Լուսինը կիսով է։ «Կիսալուսնային աստղերի» դեպքում Լուսինը 7-8 օրական է։ Վեցերորդ փուլը «Ուռուցիկությունն» է (Լուսինը երևում կլոր չէ, երբ երկրային ուղղի Արեգակի նկատմամբ նրա անկյունային հեռավորությունը 120 աստիճան է կազմում)։ Յոթերորդ-

քից են «[illegible]» [illegible] և «[illegible] երկրորդ» փուլերը։ Առաջին [illegible] փուլը ընկնում է 9-10 օրական։ Երկրորդ փուլը «Լիալուսինն» է [illegible] [illegible], ինչի արդյունք է հավանաբար ժամանակա-կից [illegible] Լիալուսինը ընկնում է 14-15 օրական, երբ Լուսինն ու Արեգակը գտնվում են Երկրի [illegible] հակադիր կողմերում, այսինքն՝ նրանց անկյունային հեռավորությունը 180 աստիճան է։ [illegible] «Լիալուսինն» փուլի դիտարկում ենթադրվում էր, որ Լուսինը 11-12 օրական է և Արեգակից հեռացած է 150 աստիճանով։ Վերջին՝ ութերորդ փուլը «[illegible]» է Լուսինը 14-15 օրական է և Արեգակից հեռացած է 180 աստիճանով։ «[illegible]» համապատասխանում է ժամանակակից «Լիալուսին» [illegible], ըստ [illegible], [illegible] է [illegible] «[illegible]», [illegible] ([illegible]) հաջորդում է «[illegible] երկրորդ» փուլը։ Բայց այս հաջորդականությունը [illegible] կես ամսվա՝ 14 (15) օրվա համար, [illegible] Լուսնի փուլերի մի [illegible] [illegible], այսինքն՝ Լիալուսինը [illegible] (տե՛ս նույն՝ Լուսին, էջ 10-14)։

35 Նույն։

36 [illegible], էջ 144։

37 *Gruzinskie Narodnie Skazki*, sostavlen i pereveden N. I. Dolidze (*Վրացական ժողովրդական հեքիաթներ, կազմ. և թարգմ. Ն. Ի. Դոլիձե*), Թբիլիսի, 1956, էջ 15։

38 *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հտ. XII, էջ 280։

39 Թումանյան, *Հայ Աստղագիտության Պատմություն*, էջ 335։

40 *Mifi Narodov*, T. 2, էջ 143; Հրաչյա Աճառյան, *Հայերեն Արմատական Բառարան*, հտ. Ա., Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1971, էջ 157-158։

41 Սարգիս Հարությունյան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1965, էջ 19։

42 [illegible] (Tseren, էջ 118-120)։

43 Van-Der-Varden, էջ 194-198, 203։

44 [illegible], Թիֆլիս, [illegible], 1914, էջ 79։

45 Tseren, էջ 329։

46 Drezden, էջ 344-45, 358; V. G. Lukonin, *Kultura Sasanidskogo Irana* (*Սասանյան Իրանի Մշակույթը*, Մոսկվա, 1969, էջ 80)։

47 Van-Der-Varden, էջ 203-06.

48 Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հտ. 1, խմբ. Ս. Բ. Հարությունյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, էջ 437.

49 Բենիկ Թումանյան, Հ. Հ. Մնացականյան, Ակադեմ Դավիթ Դալի-Գրիգորյան, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1966, էջ 22-23, 38.

50 Սրվանձտյանց, էջ 437.

51 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ., XII, էջ 62, 113, 164.

52 *Persidskie Skazki*, perevod R. Allieva, A. Bartelsa, N. Osmanova (Պարսկական հեքիաթներ, թարգմանությունը Ր. Ալիևի, Ա. Բերտելսի, Ն. Օսմանովի), Մոսկվա, 1959, էջ 18: Միհր-Միհրգա նմանությունը մատնանշում է նաև ամերիկահայ բանագետ, փիլիսոփայության դոկտոր Մարգիտ-Անահիտ Հազարաբեդյանը՝ հայոց «Մոկաց Միհրգա» ժողովրդական վիպերգի հերոսի անվան մեջ: Նա այդ եզրակացությանը յանգել է ժողովրդական ստուգաբանության կամ, ինչպես ինքն է անվանում՝ «ժողովրդական ստուգաբանությունների քննության» արդյունքում: Ակնհայտ է, որ հայկական իր զանազան տարբերակումների մեջ նաև այդ եզրակացության է հանում հայ բանահյուսության մեջ այլ զրուցողներից՝ Սասնա Ծռեր ... (*Functional transformations in traditional oral narrative: An interdisciplinary study and personal interpretation of the Armenian epic David of Sassoun* by Margit Anahid Hazarabedian. A dissertation submitted in partial satisfaction of the requirements for the degree of Doctor of Philosophy. Fall 1998, pp. 381-389).

53 S. N. Kramer, *Istoria Nachinaetsia V Shumere* (Պատմությունը սկսվում է Շումերում), Մոսկվա, 1991, էջ 161.

54 Van-Der-Varden, էջ 194.

55 Greivs, էջ 48.

56 Van-Der-Varden, էջ 196.

57 *Mifi Narodov*, T. 2, էջ 194.

58 Աստվածաբանության Պատմություն Հայոց, Թիֆլիս, տպարան Աղանեանի, 1914, էջ 326.

59 Ս. Բ. Հարությունյան, Հայ Առասպելաբանություն, Բեյրութ, 2000, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, էջ 391-400.

60 Van-Der-Varden, էջ 196.

61 Հարությունյան, Հայ Առասպելաբանություն, էջ 10-11, 17.

62 Անդ, էջ 92-93.

63 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 45-47, 68-71։

64 Greivs, էջ 338։

65 Tseren, էջ 118-120; A. Donini, *U Istokov Khristianstva* (Քրիստոնէութեան Ակունքների Մօտ), Մոսկուա, 1989, էջ 53-54։

66 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 75-78։

67 Անանիա Շիրակացուն յայտնի են եղել «Երկուորեակը», «Կշիռ», «Աղեղն», «Այծեղջիւր», «Ջրհոս» եւ «Ձկներ» համաստեղութիւնների հին հայկական անունները, Կզեռ, Կոզ, Ջրհանց. Տե՛ս անունները Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 328-330։

68 A. Klimishin, *Kalendar i Khronologia* (Տոմար եւ Ժամանակագրութիւն), Մոսկուա, 1985, էջ 25-26։ Կարծիք կայ, որ «Խոյ» համաստեղութեան Կենդանակերպային աստղերը նշան է դարձել յոյների միջնադարութեան, որից բաբելական «Լաւրոս» աշխարհը նշանն, ասելով համաստեղութիւնների Հերթականութիւնը խախտելով, Բաբելոնեան եւ «Խոյ» (Ari, Aries) եւ գարնանային գիշերահաւասարը անցնում համարել Հենց այդ նշանից։ Միջնադարեան բաբելոնացիները գարնանային գիշերահաւասարը անցնում էին համարում այդ մէկ «Խոյից», այլ Կենդանակերպային նշանների անցնող աստղերի անունների բաբելոնական գիրքից (Van-Der-Varden, էջ 18, 301-302)։

69 Հ. Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, հտ. 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1869, էջ 88։

70 Հայկ Բադալեան, Հայոց Տոմարի Պատմութիւն, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1970, էջ 12-13։

71 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 133-134։

72 Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 315-317։

73 Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Հայոց, Մայր աթոռ ս. Էջմիածին, Մայր աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1997, էջ 280։

74 Ալիշան, Հին Հաւատք, էջ 143-144։

75 Աշոտ Օդաբաշեան, «Անահիտը Հայ Ժողովրդական Տօնացոյցում», Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն, հտ. IX, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1978, էջ 12։

76 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 200-201։

77 Klimishin, էջ 127-128։

78 Ալիշան, Հին Հաւատք, էջ 126։

79 Մ. Ներսիսյան, *Աստղային Երկինք*, Երևան, 2000, «Դար 2000» հրատարակչություն, էջ 30-41։

80 Van-Der-Varden, էջ 29, 31։

81 Ա. [illegible], «[illegible]», [illegible], N 2, Երևան, 2002, էջ 171-172։

82 Թումանյան, *Հայ Աստղագիտության Պատմություն*, էջ 212։

83 [illegible] (տե՛ս Թումանյան-Մնացականյան, էջ 17)։

84 Greivs, էջ 70, 158, 252։

85 Նույն, էջ 349-354։

86 Tsoron, էջ 188։

87 Օրբելի՝ [illegible], 1977, էջ 59-60)։

88 [illegible] P. Kalmeyer, "Simvol Khaldi," *Drevnii Vostok* ([illegible]), No. 4, Երևան, 1983, էջ 179-189, գծ. 5.

89 [illegible] (A. Bonov, *Mifi I Legendi O Sozvezdiakh* ([illegible]), [illegible], 1985, էջ 90-93), [illegible]

90 A. Bonov, էջ 152; [illegible]

չըմբռնում հանածոյ են ուրիշ ժամ մերոնց, զան այժմ ենք անտեսում։ Մանավանդ, որ Վ. Թ. Գ. [illegible] Համաշխարհային Մարդու Միջինում էլ [illegible] է, որ [illegible] ժամանակ կենդանակերպերը բաժանված է երեք ընդամենը 11 համաստեղությունների (Բրուտյան, էջ 201-202)։ Մակայն յայտնի չէ, թէ որքան է տևել այդ հերկայ ժամանակը, [illegible] նաև՝ որը է կատարվել փոփոխությունը, փոխանակելիս ինչ՞ը է եղել, թէ ընդունված է երեք ամենաշատը։ Ցամենայն դէպս, Արևի 12 կանգառները Տիեզերքում թատերականացված ներկայացում էին չնայած խեթերի հասարակ և հին հույների ծեսերում նոր տարվա տոնակատարությունների ժամանակ (V. G. Ardzinba, *Rituali I Mifi Drevnei Anatoli* (Հին Անատոլիայի Ծիսակարգն ու Առասպելները), Մոսկվա, 1982, էջ 43, 45-47)։ Իսկ խեթական թագավորությունը թվագրված է մ.թ.ա. ԺԵ-ԺԹ դարերով։ Ուսմունքական Գիլգամեշի էպոսում Գիլգամեշի բոլոր արկածները յուրաքանչյուր անցի են ունեցած 12 աստղաբուժների վրայ։ Իսկ Գիլգամեշի մեզ հասած գրառումները մ.թ.ա. ԺԹ-ԺԸ դարերից են (Հին Արևելքի Պոեզիա, Երևան, Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1982, էջ 222)։

91 Ռ. Համբարձումյան, Հայկական Տոմար, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1992, էջ 49ի ներքը։

92 Արզումանյան, Անահիտ Դիցուհու Պաշտամունքը, էջ 225-226։

93 Ներսիսյան, էջ 96։

94 Թումանյան-Մնացականյան, էջ 24-42։

95 Greivs, էջ 378-382։

96 Թորոսյան, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 5-7։

97 Greivs, էջ 96։

98 E. G. Kagarov, *Kult Fetishei, Rastenii I Jivotnikh V Drevnei Gretsii* (Ֆետիշների Բույսերի և Կենդանիների Պաշտամունքը Հին Հունաստանում), Ս. Պետերբուրգ, 1913, էջ 184։

99 Սրուանձտեանց, էջ 392։

100 Երուանդ Լալայեան, Երկեր, հտ. I, կազմ. և խմբագ. Կ. Հ. Մելիք-Փաշայեան և Ա. Մ. Ղազիեան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, էջ 239։

101 Հ. Ղևոնդ Ալիշան, Հայբուսակ կամ Հայկական Բուսաբառութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 253։

102 Սրուանձտեանց, էջ 88։

103 Այս մասին տես՝ A. Ia. Gurevitch, "Predstavlenia O Vremeni V Srednevekovoi Evrope," *Istoria I Psikhologia* (Պատկերացում Ժամանակի Մասին Միջնադարյան Եվրոպայում, Պատմություն և Հոգեբանություն), Մոսկվա, 1971, էջ 159-164.

104 Թումանյան, Հայ Աստղագիտության Պատմություն, էջ 256-257։

106 Van-Der-Varden, էջ 156-157; Drezden, էջ 360-361; M. Eliade, *Patterns in Comparative Religion*, London, 1958, էջ 173.

106 Մ. Խ. Աբեղյան, Երկեր, հտ. [illegible], Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975, էջ 23; [illegible], Երկեր, հտ. II, [illegible], Երևան, 1983, էջ 152.

107 [illegible], էջ 80-81.

108 A. N. Zolotarev, *Rodovoi Stroi I Pervobitnaia Mifologia* ([illegible]), Մոսկվա, 1964.

109 [illegible], էջ 80-81; Gr. Khalatiants, *Obshi Ocherk Narodnikh Armianskikh Skazok* ([illegible]), Մոսկվա, 1886, էջ 6.

110 Raevski, էջ 62-63.

111 *Mifi Narodov*, T. 2, էջ 154-155.

112 Van-Der-Varden, էջ 181-183, գծ. 24, 26, 27.

113 Greivs, էջ 18.

114 Apulei, *Apologia, Metamorfozi, Floridi* ([illegible]), Մոսկվա, 1960, էջ 167-202.

115 Greivs, էջ 15.

116 Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. IV, խմբ. [illegible], Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, էջ 196.

117 [illegible], էջ 80.

118 [illegible], Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1960, էջ 267.

119 Van-Der-Varden, նկար 16; J. Puhvel, *Comparative Mythology*, Baltimore and London, 1980, էջ 100.

120 [illegible], էջ 251-253, 260-261.

121 [illegible], էջ 79-81.

122 [illegible], Երևան, [illegible], 1977, էջ 333-341.

123 J. E. Fontenrose, *Orion: The Myth of the Hunter and the Hunters*, Berkeley, Los Angeles, London, 1981 էջ 5-6; [illegible]

այլ յարդագողի Հերոս Օրիոնի հետ, վկայում է, որ այս աստղատունը և Օրիոնի աստղակերպականացումը բավական միջնադարյան առաջանում են (Բրուտյան, էջ 91).

124 Մ. Խ. Աբեղյան, Երկեր, հտ. Ա., խմբ. Ա. Ղանալանյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966, էջ 32.

125 Բրուտյան, էջ 150; Այվազյան, Հին Հավատք, էջ 119-124.

126 Ա. Շիրակացի, Տիեզերագիտություն և Տոմար, Երևան, Հայպետհրատ, 1940, էջ 76-77.

127 «Հայկի համաստեղության գոտու 3 աստղի Օրիոն թագավորի անվանումը ծագել է պատմական հերոսների ծննդավայրի ասողով 3 որդիների թագավորականի. Բրուտյանը Հայկի զավակների թագավորական ժառանգի հայ միջնադարյան ժառանգական ավանդույթներից բացառիկ ուսումնասիրող հանրաժամանակին բերելով, բանալի է այն եզրակացությանը, որ Հայկին ունեցել է 3 որդի, որոնցից մեկն, ի տարբերություն Հերոսների արժանացած 'նիզակ' անունը, համաձայնաբար ժամանակ Արամ ի Հնդկաստան, բառ հերոսական, մյուս երկու որդիները չի պետք է համաձայնական ընկերներ արշավանքի և միջնորդի Արմենակի (Բրուտյան, էջ 208-9).

128 Հարությունյան, Հայ Ճարտարապետություն, էջ 210-215.

129 Թումանյան, Հայ Աստղագիտության Պատմություն, էջ 212.

130 Հարությունյան, Հայ Ճարտարապետություն, էջ 215-216.

131 Նույն, էջ 10, 118.

132 Սասնայ Ծռեր, հտ. Ա., խմբ. պրոֆ. դր. Մ. Աբեղյան, աշխատակց. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայպետհրատ, 1936, էջ 470.

133 I. M. Diakonov, "K Voprosu O Simvole Khaldi," *Drevnii Vostok* (Խալդի Խորհրդանիշի Հարցի Շուրջը, Հին Արևելք), No. 4, Երևան, 1983, էջ 191-192.

134 Van-Der-Varden, էջ 183.

135 Diakonov, էջ 192-193.

136 G. A. Koshelenko, "Rannie Etapi Razvitia Kultura Mitri," *Drevnii Vostok I Antichni Mir* (Միթրայի Պաշտամունքի Զարգացման Վաղ Շրջանները, Հին Արևելքը և Հին Աշխարհը), Մոսկվա, 1972, էջ 76-84.

137 Մ. Գ. Հմայակյան, Վանի Թագավորության Պետական Կրոնը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1990, էջ 38, աղ. 2, 3, 4, նկ. 3.

138 O. Belly, *The Arzaf Fortresses and the Gods of Urartu*, Istanbul, 1999, էջ 37-41, fig. 17.

139 Հմայակյան, էջ 35, հավելվ. III գլխի, N 29.

140 Նույն, էջ 10.

141 Նույն, աղ. 8, 9, 1903։

142 Նույն, էջ 44-45։

143 Ե. Հ. Կարապետյան, «Ուրարտական Արքաների Հայկական Լեռնաշխարհն և Հարևան Պետությունների Մասին», Հայ Ժողովրդի Պատմության Քրեստոմատիա, հատ. 1, կազմ. Պ. Հովհաննիսյան, Ա. Գ. Աբրահամյան, Երևան, Երևանի Պետական Համալսարան, 1981, էջ 47, ծան. 1։

144 Հմայակյան, էջ 77։

145 Հ. Ա. Մարտիրոսյան, Գիտությունը Սկսվում է Նախնադարում, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1978, էջ 118, աղ. XXIVա, նկ. 6։

146 Ժամանակ Քրիստոնեության Պատմություն Հայոց, Թիֆլիս, Գալստեան տպարան, 1912, էջ 13։

147 Արտակ Մովսիսյան, «Մայրի Դիցանուան Գրությունը, Նշանակությունը և Ծագումը Հայերենի Տոսքը», «Հայկական Քաղաքակրթությունը Հնագույն Ժամանակներից Մինչև Քրիստոնեության Ընդունումը», ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտ, Գիտաժողով, Երևան, 2000, 30 Հոկտեմբերի, էջ 33-35։

148 Գևորգ Ջահուկյան, «Հայկական Նշանը Ուրարտական Դիցարանում», Պատմաբանասիրական Հանդես, N 1, Երևան, 1988, էջ 42։

149 Raevski, էջ 59-60։

150 Փանոսյան, Աշխարհը, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 98։

151 Հմայակյան, էջ 33։

152 Նույն, աղ. 29։

153 Նույն, ծանոթ. III գլխի, N 39։

154 Տեր-Մինասյան, էջ 15։

155 S. B. Arutunian, "Relikti Blagoslovenia Pri Obshestvennom Jertvopoedani" (Օրհնանքի Վերապրուկները Հասարակական Զոհաբերության Ժամանակ), Պատմաբանասիրական Հանդես, N 3, Երևան, 1971, էջ 258։

156 Հմայակյան, էջ 10։

157 Նույն, էջ 41։

158 Ա. Փիլոյան, «Ուրարտական Դիցերը Աստվածների Ծննդյան և Պաշտամունքի Ուղիով Վերնախավի Տաղման Խնդիրը», Պատմաբանասիրական Հանդես, N 2, Երևան, 2003, էջ 251։

159 *Հմայակեան*, աղ. 16։

160 *Մելիք-Օհանջանեան*, էջ 270; *Թումանեան-Մնացականեան*, էջ 31; *Տէր-Մինասեան*, էջ 13։

161 Drezden, էջ 361։

162 N. Ia. Marr, i I. Smirnov, "Vishapi," *Trudei Gosudarstvennoi Akademii Istorii Materialnoi Kulturi*, T. I (*Վիշապներ, Պետական Ակադեմիայի Նյութական Մշակույթի Պատմության Աշխատություններ*), *Լենինգրադ*, 1931, *գծանկար* 1, 2, 5։

163 *Տե՛ս՝* *Mifi Narodov*, T. II, էջ 156, *վերին նկարազարդումը՝ ձախից*։

164 *Տե՛ս նոյն՝ վերին նկարազարդումն՝ աջից*։

165 *Հմայակեան*, աղ. 15։

166 *Նոյն*, աղ. 18 (3)։

167 *Նոյն*, աղ. 25։

168 *Նոյն*, էջ 42։

169 *Պետրոսեան*, էջ 251։

170 Bonov, էջ 15, 67-68։

171 *Հմայակեան*, էջ 44։

172 *Նոյն*, էջ 45-46; *Պետրոսեան*, էջ 248-249։

173 *Հմայակեան*, աղ. 4 (1), 24 (2)։

174 *Նոյն*, էջ 46։

175 *Սրուանձտեանց*, էջ 493-494։

176 *Ազգագրական Հանդէս*, II տարի, գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 217։

177 P. Kalmeyer, "Simvol Khaldi", *Drevnii Vostok* (*Առաջին Խորհրդայինը, Հին Արեւելք*), No. 4, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1983, էջ 186, նկ. 5։

178 *Հմայակեան*, էջ 75։ *Բարեկենդանը հայոց մէջ տօնւում էր շաբաթներ շարունակ։ Այս մասին տե՛ս՝ Օդաբաշեան*, էջ 8-11։

179 *Հմայակեան*, էջ 38, աղ. 8, 9, 13։

180 *Աբրահամեան*, *Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը*, էջ 326-336։

181 *Ալիշան*, *Հին Հաւատք*, էջ 97։

182 Համբարձումեան, էջ 42։

183 Աբրահամեան, Հնագոյն Երևանցու Մտածողութիւնը, էջ 332։

184 Հմայեակեան, էջ 36, աղ. 0, 3, 4 (նկ. 3), էջ 38, աղ. 8, 9։

185 Թումանեան, Հայ Աստղագիտութեան Պատմութիւն, էջ 61։

186 Taceen, էջ 126։

187 Աստղագիտական Պատմութիւն Հայոց, էջ 34-35։

188 Կ. Վ. Մելիք-Փաշայեան, Անահիտ Դիցուհու Պաշտամունքը, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 69։

189 Երևանցի, Տիեզերագիտութիւն և Տոմար, էջ 70-77։

190 Հմայեակեան, էջ 48-50։

191 Նոյն, էջ 51։

192 Ա. Տ. Ղանալանեան, Աւանդապատում, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1969, էջ 328։

193 Հմայեակեան, էջ 51։

194 Արշակ Հայոց Մեծաց Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 73-85։

195 Հմայեակեան, էջ 53-54։

196 Համբարձումեան, էջ 23։

197 Գէորգ Ջահուկեան, Հայերէնը և Հնդեւրոպական Հին Լեզուները, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 60, ծան. 66; Նաև՝ Հայկական Աշխարհ, էջ 53։

198 N. V. Arutiunian, *Biaynili (Urartu)*. (*Բիայնիլի, Ուրարտու*), Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 358-359։

199 Հմայեակեան, էջ 56-57։

200 Gr. Kapantsian, *Obshie Elementi Mejdu Urartskim I Khetskim Yazikami* (*Ընդհանուր Տարրեր Ուրարտականի և Խեթական Լեզուների Միջև*), Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1936, էջ 53, ծանօթ. 2։

201 N. V. Arutiunian, էջ 358-359։

202 V. Ia. Propp, *Istoricheskie Korni Volshebnoi Skazki* (*Հրաշապատմական Հեքիաթի Պատմական Արմատները*), Լենինգրադ, 1946, էջ 98, 236-237։

203 Դատաւորաց, ԺԴ-ԺԶ։

204 Fontenrose, էջ 222-224։

205 Հմայակյան, էջ 45, աղ. 4, 34, նկ. 1, 2։

206 Greivs, էջ 380, 383։

207 Ջահուկյան, Հայկական Էպոսը, էջ 52-53։

208 *Mifi Narodov*, T. 1, էջ 345։

209 Նիկողայոս Ադոնց, «Հին Հայոց Աստվածությունները», Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1920, էջ 80։

210 Գրիգոր Ղափանցյան, Արա Գեղեցիկի Պաշտամունքը, Երևան, 1944, էջ 28։

211 Սրվանձտյանց, էջ 48։

212 Ղափանցյան, էջ 91։

213 Նույն, էջ 134, 90։

214 I. M. Diakonov, *Arkhayicheskie Mifi Vostoka I Zapada* (Արևելքի և Արևմուտքի Հնագույն Առասպելները), Մոսկվա, 1990, էջ 120։

215 Ադոնց, էջ 80; *Mifi Narodov*, T. 1, էջ 224; T. 2, էջ 345։

216 Հայ ժողովրդական Հեքիաթներ, հտ., II, էջ 39։

217 Ջրի ուժերի, իրոք, ժողովրդական հավատալիքում, ամրագրված է ավելի ուշ շրջանում, ինչը նաև բնական է հասկանալ։

218 Հրանուշ Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական Տոները, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2000, էջ 44։

219 Ալիշան, Հին Հավատք, էջ 102։

220 Van-Der-Varden, էջ 183։

221 Արտակ Արք. Մանուկյան, Հայ Եկեղեցու Տոները, Թեհրան, «Ալիք» հրատարակչություն, 1999-1378, էջ 63-64։

222 Արզումանյան, Աստղերը Երկրագործության Մշակույթներում, էջ 232։

223 Միհրի պաշտամունքի առավել մանրամասն տես՝ Գ. Մ. Մարտիրոսյան, «Մհեր-Միհրի Աստվածային Ծնունդը Հայկական ժողովրդական Հեքիաթներում», Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, հտ. XIX, Երևան, 2000, «Զանգակ-97», էջ 232-243։

# THE REFLECTION OF THE ZODIAC IN THE FOLK-TALES OF THE MITHRA-SUNS

(Summary)

GAGIK MARTOYAN

The world famous folk-tale of the three brothers originates from the myth of the three Mithra-Suns. The youngest brother in this folk-tale represents the Sun of the dark world of afterlife. The entrance to this post-mortal world embodies the Constellation of the Crab, where the Summer solstice axis was found some 4000 years ago. The Sun travels in this folk-tale through the seven constellations of the Zodiac and scores victories over the Hydra, Scorpio and Serpent ciphers of Zodiac, which embody the universal forces of chaos and destruction. The Mithra-Sun returns to the World of Light at the Capricorn cipher of the Zodiac, coinciding with the Winter solstice. The Mithra-Sun also cures the blindness of the god of Time in Fishes, the twelfth constellation of the Zodiac. The Mithra-Sun is hence the god, which corrects Time and the calendar. He kills the Serpent, which steals time units from the fruit of the tree of life and the Moon, which was used in old times to measure Time.

Gagik Martoyan argues that the three main gods in Urartian mythology – Khaldi, Teisheba and Shivini – reflect the different positions of these three Suns. They constitute the threefold embodiment of Mithra in the twelve signs of the Zodiac. Khaldi is the Sun that dies and comes back to life at the solstice points. Teisheba covers the time and space between the Zodiac signs of the Bull and Capricorn (April-December), while Shivini is the god of early Spring, corresponding to the Constellation of Aries in March. The Khaldi Sun is undoubtedly the most powerful among these three gods.